



« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »  
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Երևան - 2009

**ԱՂԲԵԶԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

***Հեղինակային խմբի համադրվածներ***

Գազիկ Հարությունյան «Նորավանք» ԳԿՀ տնօրեն  
Հայկ Քոթանջյան ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային  
ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ,  
քաղաքական գիտ. դոկտոր

***Հեղինակային խումբ***

Աննա Ժամակոչյան «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների  
կենտրոնի ղեկավարի տեղակալ  
Արթուր Աթանեսյան ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, Քաղաքական գիտ.  
թեկնածու  
Գազիկ Հարությունյան «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների  
կենտրոնի ղեկավար  
Դիանա Գալստյան «Նորավանք» ԳԿՀ փորձագետ  
Սամվել Մարտիրոսյան «Նորավանք» ԳԿՀ փորձագետ  
Սերգեյ Սարգսյան «Նորավանք» ԳԿՀ փորձագետ  
Վահրամ Տեր-  
Մաթևոսյան ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային  
ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի  
պետի տեղակալ-վերլուծական կենտրոնի պետ, Պատմական  
գիտ. թեկնածու

Հեղինակները շնորհակալություն են հայտնում «Նորավանք» ԳԿՀ փորձագետներ *Արարս  
Փաշայանին* և *Խաչատուր Դադայանին*՝ տրամադրած նյութերի համար:

***Գլխավոր խմբագիր***

Գազիկ Հարությունյան

***Խմբագիրներ***

Աննա Ժամակոչյան  
Վահրամ Տեր-Մաթևոսյան

***Պատասխանատու խմբագիր***

Խոնարհիկ Քարաուղլանյան

***Պատասխանատու քարտուղար***

Լուսինե Բաղրամյան

***Էլեկտրոնային շարվածք***

Դիանա Գալստյան

ՀՏԴ 004 : 327  
ԳՄԴ 32.973 + 66.4  
Ա 211

**Ա 211**

Աղբբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2009. - 114 էջ:

ՀՀ տեղեկատվական անվտանգության խնդիրների համատեքստում համալիր վերլուծվում են աղբբեջանական հակահայկական ինֆոքաղաքականության համակարգը և իրականացման մեթոդաբանությունը, դիտարկվում են այն տեխնոլոգիաները, որոնք կիրառվում են աղբբեջանական մեդիատարածքում «թշնամի հայի» կերպարի ձևավորման նպատակով, քննարկվում են Աղբբեջանի «էլեկտրոնային-հաքերային» հարձակումների փուլային զարգացումները, ներկայացվում է նաև ակտիվ տեղեկատվական դերակատարում ունեցող աղբբեջանական տարաբնույթ կենտրոնների գործունեությունը Աղբբեջանում և արտերկրում:

**ԳՄԴ 32.973 + 66.4**



Երևույթի ընկալումն ավելի կարևոր է, քան ինքը՝ երևույթը:  
*JOEL, 2008*

## ՆԱԽԱԲԱՆ

Հայկական հանրությունում շարունակաբար ընթանում են քննարկումներ Ադրբեջանի և նրա դաշնակիցների կողմից ՀՀ-ի, ԼՂՀ-ի և ընդհանրապես Հայության դեմ սանձազերծված տեղեկատվական սադրանքների և տարաբնույթ այլ գործողությունների շուրջ: Անհրաժեշտ է փաստել, որ մինչև վերջերս այդ խնդիրը կարծես չէր ընկալվում որպես լուրջ մարտահրավեր մեր ազգային անվտանգությանը: Հնարավոր է՝ նման իրավիճակը մասամբ պայմանավորված էր նրանով, որ ադրբեջանական տեղեկատվական գործողություններն իրենց բովանդակությամբ մտացածին էին և հեռու որևէ քաղաքական, փաստագրական կամ գիտական իրողությունից:

Մինչդեռ հայտնի է, որ արդի ժամանակաշրջանում իրադարձությունների համապատասխան մեկնաբանումը և հոգեբանական ընկալումը հաճախ ավելի կարևոր են, քան տեղի ունեցածի էությունը և բովանդակությունը: Նշենք նաև, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը ծառայում է այդ երկրում նոր ձևավորվող հանրության յուրովի ինքնահաստատման գործին և սերմանում է ազգային ագրեսիվ, ռևանշիստական բնույթի գաղափարախոսություն: Խնդիրը վերոնշյալ հանգամանքների համատեքստում ընկալելու պարագայում պետք է փաստել, որ ադրբեջանական տեղեկատվական գործոնի ակտիվ ներկայությունը գլոբալ ինֆորմացիոն դաշտում լուրջ մարտահրավեր է հայկական պետությունների և Հայության համար:

Մեր պետական համակարգում տեղեկատվական գործոնի և սպառնալիքների կարևորման միտումը հստակ արտահայտվեց 2008թ., ՀՀ նախագահի ծրագրային ելույթներից հետո: Արդյունքում՝ ՀՀ

նախագահին կից հանրապետության Անվտանգության խորհրդի կողմից ստեղծվեց տեղեկատվական անվտանգության (SU) խնդիրներն ուսումնասիրող հանձնաժողով, որը ոչ միայն մշակեց ՀՀ SU հայեցակարգը, այլև ակտուալացրեց խնդիրը պետական-քաղաքական հարթությունում: Նկատենք, որ այս աշխատության ի հայտ գալը նույնպես զգալի չափով պայմանավորված է այդ գործընթացներով: Հատկանշական է նաև, որ այս հետազոտությունն արդյունք է միջգերատեսչական-կոլեկտիվ աշխատանքի, որին մասնակցել են ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետները: Աշխատանքի կազմակերպման նման միջոցիցիվինար ոճը հատկապես արդյունավետ է պատմամշակութային, սոցիոհոգեբանական, ռազմաքաղաքական, տեխնոլոգիական և բազմաթիվ այլ բաղադրամասերի ամբողջություն կազմող SU ոլորտի հետազոտություններում:

Ակնհայտ է, որ մեր հանրության դեմ ուղղված տեղեկատվական մարտահրավերները և խնդիրները չեն սահմանափակվում միայն ադրբեջանական գործոնով: Մինևույն ժամանակ, ստեղծված իրադրությունում ընտրված թեման, անկասկած, ամենաարդիականն է: Հարկ է շեշտել, որ ինչպես ԼՂՀ-ի շուրջ զինված հակամարտությունում, այնպես էլ ներկա տեղեկատվական պատերազմում նախահարձակը հարևան հանրապետությունն է: Ակնհայտ է նաև, որ քաղաքակրթական անհրաժեշտ ավանդույթներ և բավարար հոգևոր-մտավոր ռեսուրսներ չունեցող նորաստեղծ Ադրբեջանը տեղեկատվական այս հակամարտությունում, ինչպես և ժամանակին ռազմական հակամարտությունում, նույնպես պարտվելու է:

Մինևույն ժամանակ, ցանկացած հաղթանակի գրավականներից է հակառակորդի ռազմավարության ճանաչումը: Այդ համատեքստում ադրբեջանական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունն ավելի քան հրատապ խնդիր է: Նման հետազոտությունների համալիրը թույլ կտա էլ ավելի իմաստավորել և համակարգել սեփական գործողությունները:

Աշխատության նպատակն է Ադրբեջանի կողմից տեղեկատվական ոլորտում կիրառվող մեթոդաբանության առանձնահատկությունների բացահայտումը և այդ երկրում առկա որոշ տեղեկատվական ռեսուրսների ներկա իրավիճակի լուսաբանումը:

Առաջին գլխում ներկայացված են SU և տեղեկատվական պատերազմ հասկացությունների վերաբերյալ արդիական պատկերացումները, որոնց հետ հարաբերվում են ՀՀ SU խնդիրները՝ ադրբեջանական ինֆորմացիոնության համատեքստում: Երկրորդ գլխում քննարկվել են ադրբեջանական հակահայկական ինֆորմացիոնության համակարգը և տեղեկատվական գործողություններում կիրառվող մեթոդաբանությունը: Երրորդ գլխում կոնկրետ օրինակների վրա դիտարկվել են այն տեխնոլոգիաները և մեթոդները, որոնք օգտագործվում են ադրբեջանական ՁԼՄ-ում հայի՝ որպես «թշնամու կերպարի», ձևավորման նպատակով: Ադրբեջանի կողմից իրագործվող «Էլեկտրոնային-հաքերային» հարձակումների առանձնահատկությունները քննարկվել են չորրորդ գլխում: Գրքի վերջին մասում բերված են փաստագրական տվյալներ ակտիվ տեղեկատվական դերակատարում ունեցող ադրբեջանական տարաբնույթ կենտրոնների մասին:

***Գագիկ Հարությունյան***

# ԳԼՈՒԽ 1

## ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաձայն արդի պատկերացումների, ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացությունը ներառում է երեք բաղադրամաս՝ ռազմաքաղաքական անվտանգություն, սոցիալ-տնտեսական անվտանգություն և տեղեկատվական անվտանգություն (ՏԱ): Այդ բաղադրամասերից որևէ մեկի թերագնահատումն արժեզրկում է ցանկացած ԱԱ համակարգ: Այսօր ԱԱ վերոնշյալ ոլորտներն ինտենսիվ կերպով փոխազդվում և ինտեգրվում են, այսինքն՝ ԱԱ բաղադրամասերի միջև սահմանները սկսել են, որոշակի առումով, պայմանական բնույթ կրել: Նշենք նաև, որ ռազմաքաղաքական-տնտեսական անվտանգության խնդիրների և այդ ոլորտներում ընթացող հակամարտությունների վերաբերյալ ուսումնասիրությունները հենվում են հարուստ պատմական ավանդույթների, հղկված տեսական և գործնական մշակումների վրա: Մինչդեռ ընդամենը նախորդ դարի վերջին քառորդում Մառը պատերազմի և տեղեկատվական հեղափոխության համատեքստում առաջացած տեղեկատվական պատերազմների մասին պատկերացումները դեռևս վերջնական տեսական ձևակերպումներ չեն ստացել: Հատկանշական է, որ, չնայած որոշ երկրների փորձերին, առայսօր գործնական հարթությունում բացակայում է տեղեկատվական պայքարը կարգավորող որևէ միջազգային-իրավական նորմ. տեղեկատվական պատերազմներն ինչ-որ տեղ նման են առանց խաղի կանոնների ընթացող սպորտային մենամարտերի:

Մասամբ վերոնշյալ գործոններով պետք է պայմանավորել այն իրողությունը, որ մեր հանրությունում ՏԱ ոլորտի վերաբերյալ մոտեցումները երբեմն փոքր-ինչ աղոտ են և ոչ միանշանակ: Այդ պատճառով, մինչև Ադրբեջանի հետ տեղեկատվական հակամարտության մեջ գտնվող ՀՀ ՏԱ խնդիրների դիտարկումը, համառոտ ներկայացնենք ՏԱ և տեղեկատվական պատերազմ հասկացությունների վերաբերյալ արդիական պատկերացումները:



### **1.1 Տեղեկատվական անվտանգություն և տեղեկատվական պատերազմ**

SU-ն ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի, ցանցերի և դրանց գործառնությունների ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին: Կարելի է փաստել, որ SU-ն փոքր-ինչ ավելի անմիջականորեն, քան ԱԱ մնացյալ բաղադրամասերը, կապված է մարդկային, հանրային, էթնոսոցիալ-հոգեբանական գործոնների ու դրանց վերահսկման և օգտագործման հետ: Այս տեսանկյունից նպատակահարմար է դիտարկել մասնագիտական գրականությունում շրջանառվող SU հետևյալ ըմբռնումը.

- **տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը** տեղեկատվական-հոգեբանական հարաբերությունների համակարգի այնպիսի վիճակ է, որի պայմաններում համակարգը կարող է արդյունավետորեն, կայուն և անընդհատ զարգանալ՝ դիմակայելով իր վրա ազդող ներքին ու արտաքին գործոններին, որոնք կարող են ինչպես կայունացնող, այնպես էլ ապակայունացնող տեղեկատվական-հոգեբանական ներգործություն ունենալ:

Նկատենք, որ այսօր SU-ն սահմանվում է բազմաթիվ այլ, այս կամ այն չափով մոդիֆիկացված և կատարելագործված «բանաձևերի» միջոցով: Ուշագրավ են նաև այն հետազոտությունները, համաձայն որոնց՝ հանրության SU-ն (առանց «տեխնիկական բաղադրիչի»), որը ներառում է հանրության մտավոր և հոգևոր ոլորտներում ընթացող գործառնությունները, անմիջականորեն առնչվում է ընդհանրական գաղափարախոսության մաս կազմող ազգային-պահպանողական գաղափարախոսության հետ կամ, այլ խոսքերով, այդ գաղափարախոսության արտացոլումն է: Նման պնդման համար որպես հենք վերցվում է Վյաչեսլավ Յանկոյի այն թեզը, համաձայն որի՝ ընդհանրական գաղափարախոսությունը «հրահանգների համալիր է, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմն ու փոխկապակցվածությունը»<sup>1</sup>: Դինամիզմ պարունակող այդ ձևակերպումը, ըստ ամենայնի, սահմանում է հանդիսանում նաև SU-ի համար:

<sup>1</sup> Янко В. А., <http://yanko.lib.ru>

Ակնհայտ է, որ գաղափարախոսությունն իրական գործոնի է վերածվում, երբ դառնում է հանրային գիտակցության բաղադրամաս, իսկ դա հնարավոր է իրագործել միայն տեղեկատվական տեխնոլոգիաների (լայն մեկնաբանելով այս եզրը և դրա տակ չհասկանալով միայն պարզունակ քարոզչությունը) միջոցներով: Այլ խոսքով՝ ընդհանրական գաղափարախոսության մաս հանդիսացող ազգային-պահպանողական գաղափարախոսությունը, վերջինիս անհրաժեշտության գիտակցման պարագայում, պետք է հանդիսանա տեղեկատվական դաշտի կարևոր բաղադրամասերից մեկը, այսինքն՝ ՏԱ հիմնական խնդիրներից են, մասնավորապես.

- ներքին տեղեկատվական դաշտում ազգային-պահպանողական գաղափարախոսության հիմնադրույթների ներդրումը և դրանց պաշտպանությունն արտաքին և ներքին խեղաթուրումներից,
- ազգային շահերի համատեքստում գաղափարական կոնցեպտների նպատակային սփռումը արտաքին տեղեկատվական դաշտում:

Միևնույն ժամանակ, ՏԱ ոլորտին բնորոշ է դինամիզմը, որը, մասնավորապես, արտահայտվում է *տեղեկատվական գործողությունների և տեղեկատվական պատերազմների* միջոցով: Այդ հասկացությունները մշակվել են 1976թ. ամերիկյան ՌԵՆՆ «ուղեղային կենտրոնում», Թոմաս Ռոնի կողմից և ժամանակակից ձև, բովանդակություն ու եզրաբանություն են ստացել 1991թ. Իրաքյան առաջին պատերազմի ընթացքում: 1998թ. ԱՄՆ Պաշտպանության նախարարությունը շրջանառության մեջ դրեց «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրին» փաստաթուղթը, որում «տեղեկատվական գործողություն» և «տեղեկատվական պատերազմ» հասկացություններին տրվել են հետևյալ սահմանումները.

- ***Տեղեկատվական գործողությունը*** ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն ժամանակ պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:
- ***Տեղեկատվական պատերազմը*** համալիր ներգործություն է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկա-

վարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:

ՌԵՆԴ-ի մասնագետները մշակել են նաև նոր՝ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը դիտվում էր որպես կարևոր բաղադրամաս պատերազմի ավանդական միջոցների՝ միջուկայինի, կենսաբանականի և այլնի կողքին, ապա երկրորդ սերնդինը կարող է հանդես գալ լիովին ինքնուրույն կերպով: Ի թիվս այն խնդիրների, որոնք ձգտում են լուծել երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների միջոցով, առանձնացնենք հետևյալները.

1. բարոյագուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,
2. քաղաքական լարվածության ու քառսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա,
3. առճակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխուչնչացման դրդում,
4. իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում,
5. սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում,
6. պետության միջազգային հեղինակազրկում, այլ երկրների հետ նրա համագործակցության, քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում:

Նշենք, որ Ադրբեջանի կողմից ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ վարվող տեղեկատվական պատերազմում առկա են վերոնշյալ ցանկի գրեթե բոլոր կետերը: Ինչպես տեսնում ենք, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներում հատկապես կարևորվում են հոգևոր-գաղափարախոսական բնույթի գործոնները:

Հոգևոր-քաղաքակրթական ոլորտում ընթացող տեղեկատվական հակամարտությունները երբեմն որակում են նաև «մշակութային պատերազմներ»: Ակնհայտ է, որ ժամանակակից տեղեկատվական մեծ ծավալի հոսքերի պայմաններում նման ինֆոզեն սպառնալիքներից (ինչպիսին է, օրինակ, «հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծումը») անհնար է պաշտպանվել միայն պատասխան գործողությունների միջոցով: Այդ ոլորտում արդյունավետ կարող են լինել տվյալ երկրի ՏՄ համակարգի ներսում «մշակութային ժառանգության» հանդեպ ունեցած զարգացած և համընդհանուր պատկերացումները:

Ներկայումս գործում է նաև երրորդ սերնդի, այսպես կոչված, «ցանցակենտրոն տեղեկատվական պատերազմների» հայեցակարգը, որը մշակվել է նախորդ դարի 90-ականների վերջին նույն ՌԵՆԴ-ի աշխատակիցներ Ջ. Ակվիլի և Դ. Ռոնֆելտի կողմից: Որպես ելակետ ընդունվել է այն դրույթը, որ տեղեկատվական հասարակարգում պետության–հանրության հզորությունը պայմանավորված է առաջին հերթին իրազեկությամբ և տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ, այդ գործընթացների արագ ու համապատասխան արձագանքելու ունակությամբ: «Ցանց» հասկացությունը ենթադրում է հրաժարվել ինդուստրիալ հասարակարգին բնորոշ «կենտրոն–ծայրամաս» հիերարխիկ կառավարման մեթոդից և ձևավորել հստակ կառուցվածք չունեցող համակարգ, որը ենթարկվում է ինքնազարգացման, ինքնակազմակերպման և ոչգծային գործընթացների տրամաբանությանը: Նման համակարգում բացակայում է «կենտրոնը», սակայն համակարգը կազմող օղակներից յուրաքանչյուրն իր վրա կարող է վերցնել դեկավարող «կենտրոնի» գործառույթները:

ՌԵՆԴ-ի հայեցակարգը գրավեց ռազմական ոլորտի ստրատեգների (Ջ.Ռամսֆելդ, Փ.Վուլֆովից և այլք) ուշադրությունը, և շատ արագ այդ կոնցեպտի գործնական ներդրումով սկսեցին զբաղվել բազմաթիվ «ուղեղային կենտրոններ»: Պենտագոնում հիմնադրվեց «Զինված ուժերի ձևա-

փոխման» դեպարտամենտը, որը, ելնելով ցանցային պատերազմների սկզբունքներից, իրագործում է ամերիկյան ՁՈՒ բարեփոխումները և կատարում նոր մշակումներ: Վերջիններից առանձին ուշադրության է արժանի «էֆեկտների վրա հիմնված գործողությունների» դոկտրինը, որը սահմանվում է որպես «գործողությունների համախումբ՝ ուղղված բարեկամների, չեզոք ուժերի և թշնամիների վարքագծի մոդելի ձևավորմանը խաղաղության, ճգնաժամի ու պատերազմի պայմաններում»:

Ինչպես տեսնում ենք, «ցանցակենտրոնության» հայեցակարգը ներկայացնում է.

- բարձր մտավոր ռեսուրսների տիրապետող համակարգ, որի բաղադրիչները ունակ են լիարժեք իրազեկվել և արագ ու ադեկվատ արձագանքել ստացած տեղեկատվությանը,
- պատերազմական իրավիճակի (լայնորեն մեկնաբանելով այս հասկացությունը և նկատի չունենալով զուտ ռազմական գործողությունները) գիտակցություն և համապատասխան հոգեբանություն ու գործելաոճ:

Հատկանշական է, որ «ցանցակենտրոն պատերազմների» տեսաբաններն այսօր նույնացնում են այլ ժողովուրդներին սեփական «մշակութային կոդի» հաղորդումը արդիական պատերազմի էության հետ, և այդ առումով ուշագրավ են հետևյալ նկատառումները:

Հայտնի է, որ տեղեկատվական ոլորտի տեխնիկական հատվածի առաջնահերթ խնդիր է համարվում, այսպես կոչված, կրիտիկական ենթակառուցվածքների՝ կառավարման, կոմունիկացիոն-տեղեկատվական, էներգա- և ջրամատակարարման, ոստիկանական-փրկարարական, ֆինանսական և այլ համակարգերի, տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովումը: Կարծում ենք՝ նման «կրիտիկական ենթակառուցվածքները» բնորոշ են և խիստ կարևոր նաև ՏԱ բովանդակային, այսինքն՝ գաղափարախոսության ազգային-պահպանողական հատվածի համար. պատահական չէ, որ ամերիկյան փորձագետները ԱԱ հիմնական խնդիրն են համարում ազգային արժեքների պաշտպանությունը: Գործնական հարթությունում դա նշանակում է, որ ազգային արժեհամակարգում պետք է ընտրվեն և հատուկ պաշտպանության

առարկա դարձվեն այն գաղափարախոսական-քաղաքակրթական հիմնադրույթները, որոնց խեղաթյուրումը կարող է հանգեցնել ազգային բարոյալքման և կազմալուծման (հիշենք SU և Ազգային գաղափարախոսության նույնացման վերաբերյալ թեզը):

### **1.2 ՀՀ SU նպատակները և խնդիրները**

Յուրաքանչյուր պետության SU ապահովումը ենթադրում է տեղական և միջազգային տեղեկատվական դաշտում կոնկրետ հիմնախնդիրների առանձնացումն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը: SU ապահովման նկատմամբ համակարգային մոտեցման կիրառումը թույլ է տալիս առանձնացնել այն կիզակետային նպատակները և խնդիրները, որոնց ձևակերպումն ու լուծումը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կնպաստեն պետության և հասարակության պաշտպանվածությանը տեղեկատվական դաշտում:

ՀՀ SU ապահովումը պետք է իրականացվի երկու մակարդակներում.

1. անհատական մակարդակ,
2. համապետական, ընդհանուր-հասարակական մակարդակ:

**Առաջին մակարդակը** ներառում է մարդու և քաղաքացու պաշտպանվածությունը տեղեկատվական դաշտում: Այն ենթադրում է.

- մարդու և քաղաքացու՝ տեղեկատվություն ստանալու և օգտագործելու սահմանադրական իրավունքները և ազատությունները,
- մարդու և քաղաքացու պաշտպանվածությունն իր բարոյահոգեբանական և արժեքային համակարգն ապակայունացնող տեղեկատվական հոսքերից, վնասակար և իր կամքից ու ցանկությունից դուրս իր վրա ներագրող քարոզչական, հոգեբանական, տեղեկատվական գործոններից, որոնք միտված են ապակողմնորոշելու և կառավարելու մարդու վարքը, քայքայելու նրա հոգեկանը:

**Երկրորդ մակարդակը** ներառում է տեղեկատվական անվտանգության ապահովումը համապետական, ընդհանուր-հասարակական մակարդակում և ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը.

- հասարակության բարոյական և հոգևոր արժեքների, հայրենասիրության և մարդասիրության ավանդույթների, երկրի մշակութային և գիտական ներուժի պահպանումն ու ամրապնդումը,
- պետության և հասարակության համարժեք տեղեկատվական ներկայացվածությունը, որը ենթադրում է ազգային արժեքների զարգացումն ու տարածումը,
- պետության տեղեկատվական մարտունակությունը՝ համապատասխան մեխանիզմների առկայությունը, որոնք ուղղված են պետության արդյունավետ գործառությանն ու զարգացմանը, պետության դրական համբավի պաշտպանմանն ու ամրապնդմանը տեղական և միջազգային տեղեկատվական դաշտում,
- հասարակության համախմբվածությունը և ազգային ինքնության պահպանումը:

ՀՀ SU ապահովումը կապված է մի շարք նպատակների և խնդիրների ձևակերպման և դրանց հետամուտ լինելու հետ, որպեսզի ազգային շահերի պաշտպանությունը հակառակորդի տեղեկատվական գործողություններից գործնական բնույթ ունենա: Կարելի է առանձնացնել ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման երեք փոխկապված և փոխլրացնող՝ իրավական, կազմակերպական-տեխնոլոգիական և տեղեկատվական-քաղաքական խնդիրներ:

ՀՀ SU ապահովման **իրավական խնդիրներն** են.

- ՀՀ SU ապահովմանն ուղղված պետական մարմինների գործառության իրավական հիմքերի, նորմատիվային ակտերի ստեղծումն ու դրանց կիրառումը,
- ՀՀ SU ապահովման համար անհրաժեշտ իրավական ակտերի առկայությունը՝ տեղեկատվական գործունեության հետ առնչվող բոլոր ոլորտներում, ներառյալ ՀՀ տարածքում տեղական և միջազգային տեղեկատվական գործակալությունների կարգավիճակը, ՋԼՄ-ի, ինտերնետ ցանցի գործունեությունը:

**ՀՀ ՏՄ ապահովման կազմակերպական-տեխնոլոգիական խնդիրներն են.**

- պաշտպանության համակարգի ստեղծումը և կիրառումը, ինչը կկանխարգելի տեղեկությունների և տեղեկատվական բազաների հանդեպ չարտոնված ազդեցությունը, դրանց վնասումը, դրանց օգտագործումն ապակառուցողական նպատակներով,
- ինֆորմացիայի արտահոսքի կանխարգելումը,
- պետական կառավարման մարմինների գործառության տեղեկատվական հենքի ապահովումը և պաշտպանությունը, պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը,
- տեղեկատվական ռեսուրսներից ազատ օգտվելու և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծման ու կիրառման սատարումը,
- տեղական հեռահաղորդակցային միջոցների և հեռարձակվող տեղեկատվության պաշտպանությունը չարտոնված արտաքին ազդեցությունից,
- տեղեկատվական պատերազմին հակազդելու ռազմավարությունների մշակումն ու ակտիվ իրագործումը,
- պետական մարմինների տեղեկատվական անվտանգության մակարդակի պարբերական մոնիթորինգը:

**ՀՀ ՏՄ ապահովման տեղեկատվական-քաղաքական խնդիրները ներառում են ներքաղաքական և արտաքին-քաղաքական բնագավառները:**

***Ներքաղաքական բնագավառներն են.***

- հասարակության պաշտպանությունը ՀՀ տարածքում գործող տարբեր կարգավիճակ ունեցող կազմակերպությունների ապատեղեկատվական, հասարակության հոգևոր առողջությունը վտանգող քարոզչական գործունեությունից,
- հասարակության համախմբումն ազգային կարևորություն ունեցող հարցերի ու խնդիրների լուծման շուրջ, այդ հարցերում քաղաքական կազմակերպությունների և հասարակության համագործակցության ապահովումը,
- պետական իշխանության, անկախության և տարածքային ամբողջականության, ինչպես նաև ազգային միաբանության և սահմանադրական կարգի պաշտպանությունը,



- պետական իշխանության մարմինների հանդեպ հասարակության վստահության բարձրացումը:

***Արտաքին-քաղաքական բնագավառներն են.***

- պետական իշխանության մարմինների և ազգային անվտանգության տեսանկյունից կարևորություն ունեցող կազմակերպությունների տեղեկատվական բազաների, միջգերատեսչական հաղորդակցման խողովակների ձևավորումը և պաշտպանությունն արտաքին միջամտությունից,
- պետական և ազգային տեղեկատվական ռեսուրսների, մշակութային արժեքների ձևավորումը և պաշտպանությունն արտաքին ներազդեցությունից, ոչնչացումից կամ ձևափոխումից,
- արտասահմանում ՀՀ քաղաքականության մասին ապատեղեկատվության տարածման կանխարգելումը,
- ՀՀ քաղաքացիների և կազմակերպությունների տեղեկատվական իրավունքների պաշտպանությունն արտասահմանում, այդ իրավունքների խախտման կանխումը,
- համաշխարհային տեղեկատվական դաշտում Հայաստանի և Հայության դրական կերպարի ձևավորումը, ազգային տեղեկատվական, գիտական, մասնագիտական, մշակութային և հոգևոր արժեքների ակտիվ տարածումն ու քարոզումը,
- ՀՀ պաշտոնական տեղեկատվության արդյունավետ տարածումն ու դրան խոչընդոտող արտաքին գործողությունների կանխումը,
- պետական գաղտնիքի պաշտպանությունը:

***1.3 ՀՀ SU սպառնալիքները***

Կարելի է առանձնացնել պետության և, մասնավորապես, ՀՀ տեղեկատվական անվտանգությանն սպառնացող երևույթների և գործընթացների ամբողջությունը՝ ըստ դրանց հետևյալ դրսևորումների.

- սպառնալիքներ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբակային և հասարակական գիտակցության ձևավորման գործընթացին,

- սպառնալիքներ ՀՀ ազգային քաղաքականության տեղեկատվական ապահովմանը,
- սպառնալիքներ հայրենական տեղեկատվական միջոցների զարգացմանը, դրանց արտադրանքի ներքին շուկայի բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների ձևավորման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը,
- սպառնալիքներ Հայաստան-Միլյուոք համագործակցության տեղեկատվական ապահովմանը,
- սպառնալիքներ հանրապետության տարածքում գործող, տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների և համակարգերի անվտանգությանը,
- սպառնալիքներ ՀՀ տարածքում տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների ազատ մրցակցությանը:

Ինչպես տեսնում ենք, նշված սպառնալիքները սահմանվում են ըստ ՀՀ ազգային տեղեկատվական անվտանգության ապահովման գերակայությունների. վտանգների և սպառնալիքների դերում կարող է հանդես գալ այն ամենը, ինչ դրսևորվում է որպես նշված գերակայություններին խոչընդոտող, դրանք խարխալող երևույթ կամ գործընթաց: Այդ իմաստով **ՀՀ ՏԱ-ի համար սպառնալիք կարող է հանդիսանալ ինչպես անհատական, այնպես էլ հավաքական սուբյեկտը, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնը:**

Կարելի է առանձնացնել ՀՀ ՏԱ հետևյալ ներքին և արտաքին սպառնալիքները.

### ***Ներքին սպառնալիքներ***

1. գիտակրթական համակարգի ցածր արդյունավետությունը, տեղեկատվական ոլորտում բարձր որակավորում ունեցող կադրերի պակասը,
2. կրթօջախներում ֆիզիկական ու հոգևոր առողջության արժեքների տարածման, հայրենասիրական դաստիարակության տեղեկատվական-մասնագիտական անբավարար մակարդակը,
3. տեղական ՁԼՄ-ի գործունեության անբավարար մակարդակը և

որակը, մասնագիտական մոտեցման պակասը, հասարակության բարոյահոգեբանական առողջությանը չնպաստող տեղեկատվության տարածումը,

4. տեղեկատվական ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական, նորմատիվային հիմքերի, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի անբավարար վիճակը,
5. իշխանության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անբավարար ակտիվությունն իրենց գործունեության և ընդունված որոշումների մասին հասարակության իրազեկման գործում,
6. ՀՀ ՏԱ ապահովման ուղղությամբ իրականացվող միջոցառումների անբավարար ֆինանսավորումը,
7. քրեական տարրերի կողմից պետական-ծառայողական նշանակության տեղեկատվության հասանելիության ձեռքբերումը, տեղեկատվության ոլորտում քաղաքացիների, հասարակության և պետության օրինական շահերի պաշտպանվածության աստիճանի նվազեցումը:

### ***Արտաքին սպառնալիքներ***

1. Արտասահմանյան քաղաքական, տնտեսական, ռազմական, հետախուզական և տեղեկատվական կառույցների գործունեությունը՝ ուղղված տեղեկատվության ոլորտում ՀՀ շահերի դեմ,
2. միջազգային տեղեկատվական դաշտում գործող այլ սուբյեկտների ձգտումը՝ խախտել ՀՀ շահերը համաշխարհային տեղեկատվական տարածքում, դուրս մղել նրան տեղեկատվական շուկաներից,
3. միջազգային ատյաններում հակահայկական որոշումների ընդունման սատարումը, ՀՀ և Հայության դրական կերպարի շահարկումը, միջազգային տեղեկատվական աղբյուրներով հակահայկական տեղեկատվության տարածումը,
4. տեղեկատվության ցանցային տեխնոլոգիաների կիրառումը՝ ուղղված ՀՀ շահերի դեմ,
5. արտաքին սուբյեկտների կողմից տեղեկատվական պատերազմների հայեցակարգերի մշակումը՝ ՀՀ տեղեկատվական ոլորտի վրա ներգործելու, տեղեկատվական և հեռահաղորդակցային համա-

կարգերի բնականոն գործառույթը խախտելու, տեղեկատվական միջոցների պահպանումը խաթարելու, ՀՀ տեղեկատվության դաշտ չարտոնված կերպով մուտք գործելու նպատակով:

Արտաքին սպառնալիքների շարքում, անշուշտ, պետք է առաջին հերթին կարևորել Ադրբեջանի կողմից ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Հայության դեմ համակարգված ձևով վարվող տեղեկատվական պատերազմը: Նկատենք, որ այդ երկիրը տիրապետում է արդիական տեղեկատվական ազդեցության զինանոցին, և խիստ պարզունակ կլիներ այդ հանգամանքը վերագրել բացառապես խորհրդային տարիներին ձևավորված ավանդույթներին: Ակնհայտ է, որ ադրբեջանական ազիտացիոն-պրոպագանդիստական համակարգն օգտվում է մասնագիտական խորհրդատվությունից, և այստեղ պետք է առաջին հերթին հաշվի առնվեն թուրքական և նավթային գործոնները:

Միևնույն ժամանակ, հայտնի է, որ տեղեկատվական մարտահրավերների արդյունավետ և հարձակողական հակազդումը ենթադրում է պայմանական հակառակորդի տեղեկատվական համակարգի շարունակական ուսումնասիրություն և այդ համակարգի կողմից ձեռնարկվող գործողությունների օրինաչափությունների վերհանում: Այդ խնդիրների մասնակի լուսաբանմանն են ուղղված այս հետազոտության հաջորդ բաժինները:

Պատերազմը խաբեություն է:  
Սուն-Յզի, մ.թ.ա. 6-րդ դ.

## ԳԼՈՒԽ 2

### ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղբբեջանական հակահայկականությունը սկիզբ է առել Թուրքիայի ծայրահեղական ազգայնական քաղաքականության ազդեցությամբ՝ 1918թ. աղբբեջանական պետական միավորի ձևավորումից և 1930-ական թթ. «աղբբեջանցի» ժողովրդի կերտման նպատակադրումից ի վեր: Այն ինտենսիվորեն զարգացել է խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես սկսած 1960-ականներից) և մինչ օրս շարունակում է իր համակարգային ընդարձակումը:

Խորհրդային ժամանակաշրջանում ինֆորմացիոնության հիմնական բաղադրիչն էր հանդիսանում պատմամշակութային հարթությունը. «բունիաթոնյան դպրոցի»<sup>1</sup> պատմաբանները ձգտում էին աղբբեջանականացնել Ադր. ԽՍՀ տարածքում բնակվող տարբեր էթնիկ խմբերի, հատկապես հայերի պատմամշակութային ժառանգությունը՝ միաժամանակ կեղծելով բնիկ ժողովուրդների էթնագրային պատմությունը: Այդ հիմնադրույթներն իրենց հետագա զարգացումն ապրեցին նաև ԽՍՀՄ փլուզումից հետո՝ նորաստեղծ Աղբբեջանի Հանրապետությունում (ԱՀ):

<sup>1</sup> Զիա Բունիաթովը, որը Ադր. ԽՍՀ ԳԱ Մերձավոր և Միջին Արևելքի ինստիտուտի տնօրենն էր, Աղբբեջանի Կենտրոնի պատվերով ազգայնամոլական քարոզչական քաղաքականություն էր վարում, մասնավորապես, աղբբեջանցիների՝ իբրև Կովկասյան Աղվանքի հետնորդների 1930-ականների ստեղծված տեսության վերաշրջանառման միջոցով: Նրա նախաձեռնությամբ ու հեղինակությամբ էին հրատարակվում և վերահրատարակվում «պատմագրական» գրքեր, որոնցում, մասնավորապես, հայերը ներկայացվում էին որպես աղվաններ:

## **2.1 Աղբբեջանական ինֆորմացիոնային արդի փուլերը**

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Աղբբեջանում հակահայկականությունը վերստին ակտուալացավ ԼՂԻՄ կարգավիճակի հետ կապված հիմնախնդրի համատեքստում: 1988-1990թթ. Սումգայիթի, Կիրովաբադի և Բաքվի ցեղասպանական գործողությունները հրահրվեցին և ընթացան աղբբեջանական հասարակության ներսում հատուկ կերպով շրջանառվող ապատեղեկատվության համատեքստում, ըստ որի՝ հայերը «դաժանություններ» էին իրականացնում ՀԽՍՀ և ԼՂԻՄ սահմաններում բնակվող աղբբեջանցիների նկատմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո աղբբեջանական տեղեկատվական քաղաքականությունն ավելի ակտիվացավ:

1991-1994թթ. փուլի, որը պայմանականորեն կարելի է համարել անկախության շրջանի առաջին փուլ, տեղեկատվական քաղաքականության նպատակներն էին՝

- հանրային կարծիքի համախմբումը «ծավալապաշտական» նկրտումներ ունեցող «հայ անջատողականների» և «ագրեսորների» դեմ պայքարում,
- հայկական զինված ուժերի կողմից «բռնազավթված» տարածքների «ազատագրման» և մոտալուտ հաղթանակի անխուսափելիության գաղափարների ներդրումը հասարակական գիտակցությունում:

Հայկական և աղբբեջանական կողմերի միջև 1994թ. հրադադարի կնքումից սկսած՝ տեղեկատվական քաղաքականությունը, մնալով կոնֆլիկտային հաղորդակցման տրամաբանության շրջանակներում, մտավ նոր՝ հետպատերազմյան շրջան:

Երկրորդ՝ 1995-1997թթ. ընդգրկող փուլում Բաքվի քարոզչության նպատակը միջազգային հանրության միջոցով պատերազմի հետևանքների վերացումն էր, զինադադարի երկարաձգումը և փախստականների սոցիալական խնդիրների բարձրաձայնումը: Հայաստանը ներկայացվում էր որպես «ոճիրների ունակ» երկիր, որը Սփյուռքի օգնությամբ կարողացավ «գրավել» աղբբեջանական տարածքները: Այդ շրջանում Հայաստանի դեմ պատերազմի մասին խոսելը, ռևանշիզմի մասին ակնարկները կարող էին աշխատել միայն Հ.Ալիևի դեմ, քանի որ միջազգային հանրությունը միակարծիք էր, որ Հայկական բանակը պատերազմն

ավարտել էր հաղթանակով ու դիտվում էր որպես տարածաշրջանի ամենամարտունակ զինուժը:

Իրավիճակի որոշակի փոփոխություն արձանագրվեց 1996 թվականից՝ հայաստանյան ներքաղաքական զարգացումների հետևանքով, երբ Աղբբեջանում փոխվեցին հայ ժողովրդի հավաքականության, միասնական բռունցք լինելու մասին կարծրատիպերը: Զուգահեռաբար, Տեր-Պետրոսյան - Ալիև հանդիպումներում ակնհայտ դարձան ԼՂՀ հակամարտության շուրջ բանակցություններում մեծ պետությունների աճող հակասությունները: Արդյունքում՝ Հ.Ալիևը զգուշությամբ սկսեց վերանայել ռազմավարական առաջնահերթությունները, քաղաքական ու քարոզչական գերակայությունները և նախաձեռնեց Հայաստանի ու հայ ժողովրդի վարկաբեկման և հայոց պատմության նորովի աղավաղման քաղաքականություն:

1998-2002թթ. Աղբբեջանում սկսվեց տեղեկատվական գործողությունների ռազմավարական մեթոդների ակտիվ փնտրտուք, որը կարելի է առանձնացնել իբրև երրորդ փուլ: Մասնավորապես, կրկնապատկվեց Խոջալուի իրադարձությունների ժամանակ աղբբեջանցի ու թուրք մեսիխեթցի զոհերի թիվը, և տեղեկատվական շրջանառության մեջ դրվեց 613 թիվը<sup>1</sup>: Այս քայլի տրամաբանական շարունակությունը դարձավ մեկ ամիս անց, 1998թ. մարտին, Հ.Ալիևի կողմից «աղբբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագրի ստորագրումը: Ներքաղաքական բարդ իրավիճակում գտնվող ՀՀ-ում այս քայլը աղեկվատ չընդունվեց, և դրա հնարավոր հետևանքները թերագնահատվեցին: Իսկ Աղբբեջանը ՀՀ ԱԺ-ում կատարված 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունն ընկալեց որպես լրացուցիչ հնարավորություն Հայաստանի դեմ քարոզչության ծավալման համար: Հրամանագիրն ու հակահայկական քարոզչությունը սկսեց ծառայեցվել նաև իբրև հիմնարար գործոն աղբբեջանցիների միասնական «ողբերգական» անցյալի շուրջ ազգակերտման ինտենսիվ գործընթացում:

Այսպիսով, 1998-2000թթ. Հայաստանի ներքաղաքական զարգացումները մեծապես նպաստեցին Հ.Ալիևի վարչակարգի կողմից հակահայկական ինֆորմաքաղաքականության հիմնական ուղղությունների ձևա-

<sup>1</sup> Ոչ պաշտոնական քարոզչական տեղեկություններում զոհերի թիվն էլ ավելի է ուռճացվում՝ հասցվելով հազարների:

վորմանը և որոշ մեթոդների փորձարկմանը: Բնորոշ է, որ 2000թ. փորձարկվեց նաև տեղեկատվական հարձակման տեխնոլոգիական բաղադրիչը. առաջին անգամ աղբբեջանական ցանցահեռնների՝ հաքերների կողմից ժամանակավորապես շարքից դուրս բերվեցին հայկական մի շարք ինտերնետ կայքեր, որոնցում շոշափվում էին Ցեղասպանության և ԼՂՀ թեմաները:

2001-2002 թվականներից<sup>1</sup> աղբբեջանական տնտեսությունում նավթային գործոնի ուժգնացումը, Թուրքիայում նոր իշխանությունների հաստատումը և Հարավային Կովկասում տեղեկատվական տեխնոլոգիաների տարածումը նպաստեցին հակահայկական ինֆորմացիոնության մեթոդաբանության նկատելի փոխակերպմանը: Տնտեսական գործոնը թույլ տվեց Աղբբեջանին զգալի ֆինանսական միջոցներ տրամադրել հակահայկական ինֆորմացիոնության մշակման, կազմակերպման և իրականացման գործին, ինչպես նաև ներգրավել ոլորտի մասնագետների այլ երկրներից: 2002թ. Արդարություն և զարգացում կուսակցության հաղթանակից հետո Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց ինչպես հարավկովկասյան քաղաքականության, այնպես էլ հակահայկական քարոզչության ոլորտում: Դրան զուգահեռ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն տվեց Աղբբեջանին ընդլայնել տեղեկատվության տարածման ուղիները, նորացնել ինֆորմացիոն «զինանոցը» և մեծացնել ազդեցության լսարանը:

Վերջին՝ ընդգրկմամբ և մեթոդաբանական մշակմամբ ամենախնդրահարույց շրջանը հակահայկական ինֆորմացիոնության մեջ սկսվեց 2003-ից, երբ Աղբբեջանի նախագահի պաշտոնում Հ.Ալիևին փոխարինեց նրա որդին՝ Իլհամը, և շատ արագ նոր որակ ու շեշտադրումներ ներմուծեց գործընթացում: Նշենք, որ ինֆորմացիոնության նոր մոտեցումները պայմանավորված էին ոչ միայն գործընթացի զարգացման տրամաբանությամբ և հայաստանյան իրողությունների ազդեցությամբ, այլև ներաղբբեջանական քաղաքական գործոններ-

<sup>1</sup> Հատկանշական է, որ 2001թ. տեղեկատվական պատերազմներ վարելու առաջարկով հանդես է եկել Աղբբեջանի հեռուստառադիոպետկոմի 1978-1990թթ. ղեկավար Էլշադ Գուլիևը (տե՛ս Հ.Ղեմոյան, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ», «Տարածաշրջան» տեղեկագիր, Նորավանք ԳԿՀ, Երևան, 2005, էջ 66, [http://www.noravank.am/file/article/76\\_am.pdf](http://www.noravank.am/file/article/76_am.pdf)):



րով: Կրտսեր Ալիևի իշխանության գալուց հետո ադրբեջանական հասարակության որոշ շրջանակներ փորձեցին հարցականի տակ դնել իշխանության ժառանգականության նպատակահարմարությունը: Ադրբեջանի ղեկավարության առջև ծառայել էր ներքաղաքական ու հասարակական համախմբման լրջագույն խնդիր, որի հիմքում ընկած էր ալիևյան վարչակազմի պահպանման նպատակը: Եթե վերնախավային մակարդակում Ի.Ալիևին հաջողվեց զանազան լծակներ օգտագործելով հարթել իշխանության թևերի տարակարծությունը, ապա հանրային կարծիքի կառավարման տեսանկյունից հարկավոր էին այլ բնույթի հնարքներ: Ադրբեջանի ղեկավարության համար տեղեկատվական հարձակման ուղղակի թիրախ դարձան ՀՀ-ն, ԼՂՀ-ն և Հայությունը՝ հանրային կարծիքը նորովի կերտելու և նրա զարգացման հիմնական միտումները կանխորոշելու համար: Հայաստանը և Հայությունը ներկայացվեցին որպես «գոյատևման սպառնալիքներ» ադրբեջանական հասարակության ու նրա անվտանգության համար: «Վերահաս սպառնալիքը» կանխարգելելու համար ՀՀ-ի ու ԼՂՀ-ի դեմ պատերազմի նախապատրաստումը, Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության խորացումը, երկրի ռազմական բյուջեի շեշտակի աճը համեմվեց նախ Ադրբեջանում, ապա արտերկրում հակահայկականության աննախադեպ քարոզչության ծավալումով: Այդ երկրում ամրապնդվեցին հայից թշնամու կերպարի կերտման միտումները<sup>1</sup>, ինչպես նաև վերադարձ կատարվեց խորհրդային ժամանակաշրջանի ադրբեջանական բունիաթովյան պատմագրության հիմքերին, այն է՝ հարցականի տակ դնել Հայության քաղաքակրթական դերակատարումը, հայ ժողովրդի պատմությունը և ինքնությունը<sup>2</sup>: Հայության դերի ու համաշխարհային քաղաքակրթական-մշակութաբանական արժեքայնության լեգիտիմության հարցադրումը դասվեց պետական ռազմավարության մակարդակի և դրվեց անձամբ Ի.Ալիևի և նրան հարող կլանային բուրգի հսկողության ներքո: Իսկ 2004թ. մայիսի 10-ին նախագահի ընտանիքի կողմից կառավարվող Հեյդար Ալիևի հիմնադրամի<sup>3</sup> պաշտոնական բացումը ադրբեջանական հակահայկական ինֆորմաքականության պետականորեն ինստիտուցիոնալացման սիմվոլիկ դրսևորումը դարձավ:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Գլուխ 3:

<sup>2</sup> 2005թ. Բլհամ Ալիևի էլույթը ԳԱԱ-ում, <http://www.regnum.ru/news/565316.html>

<sup>3</sup> Հիմնադրամի գործունեությունը ներկայացված է 5-րդ գլխում:

Այսպիսով, 2003-ից ի վեր նախագահ Ի.Ալիևը հակահայկական քարոզչության բոլոր ոլորտներում իրեն դրսևորեց որպես նախահարձակ դերակատար: Նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվեց մի համակարգ, որի նպատակներն են՝ հեղինակագրվել ՀՀ-ն ու Հայությանը, սեպ խրել Մփյուռքի ու Հայաստանի միջև, Հայությանը ներկայացնել որպես ցեղասպան ազգ, որի հետ համատեղ գոյակցումը սպառնում է Ադրբեջանի ազգային անվտանգությանը և այլն: Ջուգահեռաբար փոխվեցին նաև դիրքորոշումները ԼՂՀ խնդրի կարգավորման հարցում: Բանակցային գործընթացում Ի.Ալիևը դարձավ առավել ագրեսիվ ու այդ գործընթացը զուգորդեց հակահայության ինտենսիվ քարոզչությամբ և ռազմատենչ տրամադրությունների ծայրահեղականացման պետական քաղաքականությամբ, ինչը հետագայում էլ ավելի զարգացավ ու ընդլայնվեց<sup>1</sup>:

Ամփոփելով Ադրբեջանի հակահայկական քարոզչության կայացման ու համակարգային կերպափոխման փուլերի դիտարկումը՝ կարող ենք փաստել, որ դրա հիմքում առանձնանում էին երեք սկզբունք՝ Ալիևների ընտանիքը, Էներգետիկ ռեսուրսները և ԼՂՀ-ն:

Ալիևների ընտանիքի կենդանի և մահացած յուրաքանչյուր անդամի շուրջ շարունակում է ստեղծվել առասպելաբանական, խորհրդանշանային և կերպարային համակարգ, որն էլ ուղղորդում է հասարակության քաղաքական ու սոցիալական գերակայությունները<sup>2</sup>:

Էներգետիկ ռեսուրսներից սպասվող խոշոր եկամուտների հեռանկարը և սոցիալական խնդիրների շուտափույթ լուծման տեսլականն ադրբեջանական քարոզչության մյուս, ոչ պակաս կարևոր սկզբունքն է:

Վերջին, սակայն կարևորությամբ ու մասշտաբայնությամբ ամենամեծ դերը վերապահված է Արցախյան հակամարտությանը, իսկ գլխավոր հարվածային ուժն ուղղված է Հայաստանի, ԼՂՀ-ի և Հայության դեմ: Հայաստանն աշխարհաքաղաքական առումով ներկայացվում է որպես երկրորդային դերակատար, որն աղքատ է, ղեկավարվում է 21-րդ դարին ոչ հարիր քաղաքակրթական սկզբունքներով:

---

<sup>1</sup> Այսպես, օրինակ, 2008թ. ապրիլի 14-ի կառավարության նիստին Ի.Ալիևի ելույթը Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ ավելի ինտենսիվ քարոզչության իրականացման կոչ էր:

<sup>2</sup> Ադրբեջանի Միլի մեջլիսը 1997թ. հունիսի 27-ին «Ազգային փրկության օր» հռչակեց հունիսի 15-ը՝ 1993թ. Հ.Ալիևի իշխանության վերադառնալու օրը: [http://news.bakililar.az/news\\_v\\_azerbayjane\\_otmechaetsya\\_22826.html](http://news.bakililar.az/news_v_azerbayjane_otmechaetsya_22826.html)

Այսպիսով, Հ.Ալիևի կողմից հիմնված և Ի.Ալիևի օրոք նոր թափ առած հակահայկական գործողությունները համադրելով՝ կարելի է փաստել, որ ներկայումս Աղբբեջանը ՀՀ-ի, ԼՂՀ-ի և ընդհանուր առմամբ Հայության նկատմամբ իրականացնում է նպատակային, պետականորեն կառավարվող տեղեկատվական համակարգված քաղաքականություն:

## **2.2 Հակահայկական ինֆորաղաքականության սկզբունքները**

Աղբբեջանի հարձակողական հակահայկական ինֆորաղաքականությունը պետական քաղաքականության անբաժանելի մասն է և միտված է հայկական սուբյեկտների (ՀՀ, ԼՂՀ և Հայություն) բազմակողմանի վարկաբեկմանը՝ ուղղված տարբեր լսարանների վրա ազդեցություն գործելուն: Նման ինֆորաղաքականությունը միաժամանակ ուղեկցվում է սեփական երկրի և ժողովրդի նկատմամբ բարենպաստ կերպարի ձևավորմամբ և խնդրահարույց հարցերի վերաբերյալ աղբբեջանական մեկնաբանությունների տարածմամբ: Քաղաքականության այդ երկու զուգահեռ գործընթացներն այն աստիճան են սերտաճել, որ Աղբբեջանի ժամանակակից ինքնաներկայացման բաղադրիչ է հանդիսանում Հայաստանին ու Հայությանը հակադրվելը, որը նաև աղբբեջանական հասարակության նոր ինքնության մեջ ներդրվող նշանակալի գործոններից է: Այսպիսով, հակահայկական ինֆորաղաքականությունն այսօր Աղբբեջանի քաղաքական ռազմավարության կարևոր ուղեգծերից է, որի գլխավոր սկզբունքներն են.

1. Հայաստանի և Հայության մասին տեղեկատվության լիարժեք հավաքագրումը և հայի սոցիալ-հոգեբանական, մշակութային կերպարի ուսումնասիրությունը<sup>1</sup>,
2. հակահայկական տեղեկատվական քաղաքականության նպատակադրումը և մշակումը՝ հիմնված այլ երկրների, հատկապես Թուրքիայի փորձի վրա,

<sup>1</sup> Աղբբեջանում ներկայումս գործում է Հայկական հետազոտությունների կենտրոնը՝ Գաֆար Չախմաղիի գլխավորությամբ, որի վերաբերյալ տեղեկատվությունը խիստ սակավ է: Նկատենք, որ Հայության ֆենոմենի ուսումնասիրության և ապագայում հայագիտության ինստիտուտի ստեղծման հնարավորության մասին դեռ 2008թ. հրապարակայնորեն արտահայտվել է Աղբբեջանի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Էլիան Նուրիևը (կենտրոնի մասին առավել մանրամասն տե՛ս Գլուխ 5):

3. հակահայկական քաղաքականության վարման մեջ բազմավեկտոր նախահարձակ դիրքորոշումը, ինչպես նաև հայամետ տեղեկատվական հոսքերի հակազդումը օպերատիվ-մարտավարական և ռազմավարական մակարդակներում,
4. հակահայկական տեղեկատվության տարածումը դիֆերենցված և թիրախային լսարաններին (*սեփական հանրությանը, հայկական հանրությանը, իսլամական աշխարհին, հետխորհրդային և արևմտյան հանրությանը՝ որպես թիրախ ընտրելով հատկապես երիտասարդությանը և անգամ երեխաներին<sup>1</sup>, ինչպես նաև աշխարհաքաղաքական իմաստով նշանակալի երկրներում ու միջազգային կառույցներում որոշումներ կայացնողներին*),
5. յուրաքանչյուր լսարանի նկատմամբ ուրույն մոտեցումների և դիսկուրսի կիրառումը՝ տվյալ լսարանի առանձնահատկությունների համապատասխան,
6. հակահայկական ինֆորքաղաքականության ինտեգրումը պետական քաղաքականության բոլոր ոլորտներում և դրա ամբողջական համակարգային գործառումը:

### ***2.3 Աղբբեջանական ինֆորքաղաքական համակարգի բաղադրիչները***

Ելնելով վերոնշյալ վերջին սկզբունքից՝ դիտարկենք հակահայկական ինֆորքաղաքականության համակարգի բաղադրիչները և այն հարթակները, որտեղ իրականացվում են աղբբեջանական տեղեկատվական գործողությունները: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ նշված բաղադրիչները, ծառայելով մեկ ընդհանուր գործի, գործնականում փոխկապակցված են համակարգային կապերով, և դրանց տարանջատումը զուտ վերլուծական նպատակ է հետապնդում:

---

<sup>1</sup> Բացի նրանից, որ աղբբեջանական դպրոցական դասագրքերում հստակ տեղ ունեն հայատյացություն սերմանող տեքստերը, Աղբբեջանում Հ.Ալիևի հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվում են «Նոջալուն երեխաների աչքերով» խորագրով շարադրությունների կամ կերպարվեստի մրցույթներ, հաղթող երեխաները ստանում են մրցանակներ: Հայտնի է, որ դպրոցահասակ երեխաների հոգեկերտվածքի ձևավորման մանիպուլյացիայի նման միջոցառումներն արտահանվում են նաև այլ երկրներ, օրինակ՝ Պակիստան:

### **Պատմամշակութային բաղադրիչ**

Պատմամշակութային դաշտն Աղբբեջանում հակահայկական ինֆորպարացիանության առավել ավանդական բաղադրիչներից է, որն սկիզբ է առել նախորդ դարի 30-ականներին, հատկապես զարգացել 60-ականներին Ջ.Բունիաթովի կողմից և արդիականացվել 2000 թվականից: Պատմական փաստերի խեղաթյուրման աշխատանքը հիմնականում վարում է Աղբբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան՝ Պատմության, Մարդու իրավունքների և այլ ինստիտուտներով (տե՛ս *Գլուխ 5*): Այդ հաստատությունների գործունեության հիմքում ընկած է Հայաստանի, հայ ժողովրդի և Աղբբեջանի պատմության կեղծումը՝ «աղբբեջանցի» և «Աղբբեջան» տերմինների նույնականության ամրապնդման, կովկասյան աղվանների աղբբեջանականացման, տարածաշրջանում և հատկապես պատմական Արցախում «թյուրքերի բնիկ» և «հայերի եկվոր» լինելու հիմնավորման նպատակներով: Հատկապես ուշագրավ են Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների (հայեր, դադստանալեզու և պարսկալեզու ազգություններ) պատմամշակութային ժառանգության և տարածքների այբանական-նախաաղբբեջանական պատկանելության մասին հակազիտական պատմաքաղաքական հայեցակարգի հորինումն ու տարածումը: Վերջին 20 տարիների նորամուծություններից են նաև ՀՀ-ի նկատմամբ պահանջատիրական նկրտումները, ինչն իրականացվում է «Արևմտյան Աղբբեջան» հասկացության ներմուծմամբ և շրջանառմամբ: Արցախի և առհասարակ պատմական Հայաստանի քաղաքական պատմության կեղծումը հիմք է ծառայում ԼՂՀ հարցում աղբբեջանական դիրքորոշումներն առաջ մղելու, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ Աղբբեջանի հնարավոր ագրեսիան արդարացնելու համար: Վերաշարադրման են ենթարկվում նաև ոչ վաղ անցյալի փաստերը: Սրբագրվում է 20-րդ դարի սկզբում աղբբեջանական պետության ձևավորման շրջանում հայերի ունեցած դերակատարումը, փոխարենը նրանց վերագրվում են բազում հանցանքներ: Նենգափոխվում են 1988-1990թթ. Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ աղբբեջանական ղեկավարության իրականացրած ցեղասպանական գործողությունները՝ դրանք ներկայացնելով որպես «հայկական սադրանքներ»:

Պատմության սրբագրման աշխատանքները կատարվում են ինչպես տարածաշրջանում բնակվող բնիկ ժողովուրդների էթնոագգային պատմությունը նկարագրող տեքստերի կեղծման ու վերաշարադրման միջոցով, այնպես էլ այդ տեքստերի վկայություն հանդիսացող պատմամշակութային ժառանգության, օրինակ՝ հուշակոթողների վերացման և նորերի կառուցման ճանապարհով: Ինչ վերաբերում է ժամանակակից Ադրբեջանում գտնվող հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, ապա դրանք կա՛մ ֆիզիկապես ոչնչացվում են, ինչպես 2005-2006թթ. տեղի ունեցավ Նոր Ջուղայի գերեզմանատան խաչքարերի հետ, կա՛մ էլ հուշակվում են «բուն ադրբեջանական»: Նույնիսկ ՀՀ և ԼՂՀ սահմաններում գտնվող հայկական եկեղեցիները, քրիստոնեական ու գուտ հայկական մշակույթին բնորոշ հուշարձանները վերագրվում են Կովկասյան Աղվանքի ժողովրդին՝ դրանց հետագա ադրբեջանականացումը հիմնավորելու համար: Ադրբեջանականացման ռազմավարությանն է ծառայում նաև ժամանակակից ադրբեջանական դրոշմանիշերի և դրամների վրա հայկական մշակութային հուշակոթողների պատկերումը<sup>1</sup>:

Ադրբեջանական քարոզչության ոգով ստեղծվում են նաև նոր «հիշողության վայրեր», ինչպիսիք են «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված հուշարձանը և Շեհիդների ծառուղին՝ Ղարաբաղյան պատերազմում զոհվածների գերեզմաններով, ադրբեջանցիների «ցեղասպանության», 1918թ. Բաքվի գրավման ժամանակ զոհված թուրք զինվորների հիշատակի և այլ հուշակոթողներով:

### ***Իրավական բաղադրիչ***

Ադրբեջանի Հանրապետությունն իրականացնում է հետևողական քաղաքականություն ինչպես ներքին, այնպես էլ միջազգային իրավաօրենսդրական դաշտում սեփական շահերն ու տեսանկյուններն արտացոլելու և դրանք հետագայում կիրառելու ուղղությամբ: Նման գործողությունները դրսևորվում են 1991-ից՝ ԼՂՀ հայկական տեղանունների վերանվանման նախաձեռնություններից սկսած մինչև 2008թ. Եվրախորհրդի և ՄԱԿ բանաձևերում Լեռնային Ղարաբաղի հարցում ադրբեջանամետ դիրքորոշումների ամրագրմամբ:

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Հ. Դեմոյան, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», [http://www.noravank.am/file/article/76\\_am.pdf](http://www.noravank.am/file/article/76_am.pdf):

Միջազգային իրավաքաղաքական փաստաթղթերում ցանկալի դրույթների ամրագրման հարցում տեղեկատվական ազդեցության նշանակությունն ընդգծելու համար նշենք, որ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 2008թ. մարտի 14-ին ընդունած *A/62/L.42* բանաձևը<sup>1</sup>, որը պատրաստվել էր ԱՀ-ի կողմից, և որը միանշանակ արտահայտում է ԼՂՀ խնդրի նկատմամբ ադրբեջանամետ դիրքորոշումը, ընդունվել է ՄԱԿ անդամ 192 երկրներից միայն 39-ի «կողմ» քվեարկությամբ (100 երկիր «ձեռնպահ» է քվեարկել): Միննույն ժամանակ, «կողմ» քվեարկած որոշ երկրներ ակնհայտ քաղաքական շարժառիթ չունեին նման դիրքորոշման համար, և նրանց «կողմ» կամ «դեմ» որոշումը կարող էր պայմանավորված լինել խնդրի շուրջ ձևավորված տեղեկատվական «մթնոլորտով»:

Իրավական հարթության մեջ հակահայկական ինֆորմաքաղաքականության քայլերից է նաև 1998թ. նախագահ Հ.Ալիևի հրամանով մարտի 31-ը ադրբեջանցիների «ցեղասպանության» օր հռչակելը, որի իրականացման մեջ պաշտոնապես մեղադրվում են հայերը: Այդ հրամանագրով պետական մակարդակով իրավական հիմք ստեղծվեց հակահայկական հատուկ քարոզչության համար, որն առայսօր ակտիվորեն իրականացվում է: Նույն կերպ 1992թ. Խոջալու բնակավայրի մերձակայքում տեղի ունեցած իրադարձություններն Ադրբեջանում համարվում են ցեղասպանություն, որը վերագրվում է հայ զինվորականներին, և քայլեր են ձեռնարկվում այն միջազգայնորեն ցեղասպանության իրավական գնահատականի հասցնելու ուղղությամբ:

Հակահայկական քարոզչության իրավական բաղադրիչի հիմքում դրված են նաև ԽՍՀՄ հիմնադրմանը և հատկապես փլուզմանը նախորդող իրավաքաղաքական ու միջազգային պայմանագրերի, ԼՂՀ անկախացման իրավաքաղաքական հիմքերի մեկնաբանությունների խնդիրները: Կարևոր մանիպուլյացիոն քայլ է նաև ՄԱԿ-ի կողմից ժամանակակից Ադրբեջանը Ադր. ԽՍՀ տարածքային սահմաններով ճանաչելու փաստի շահարկված ներկայացումն ու դրա իրավապարտադրականության նորմի գերագնահատումը:

<sup>1</sup> <http://www.un.org/russian/ga/62/docs/62res3.shtml>

### **Ժողովրդական դիվանագիտության բաղադրիչ**

Այս ոլորտին են վերաբերում տարածաշրջանային և միջազգային ձևաչափերով ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների (ՀԿ)<sup>1</sup> միջոցառումներին ԱՀ-ից գործուղվող անձանց միջոցով տարվող աշխատանքները: Նման հանդիպումներին հաճախ մասնակցում են նաև ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները կամ պետական մարմինների կողմից հրահանգավորված անձինք, որոնք պետական քարոզչական աշխատանք են վարում: Ըստ հայաստանյան փորձագետների դիտարկումների, ՀԿ-ների ադրբեջանցի ներկայացուցիչներն իրենց ձեռքի տակ, որպես կանոն, ունենում են կոնկրետ հարցերի շուրջ պատրաստի հակահայկական պատասխաններով նյութեր: Հայտնի են դեպքեր, երբ միջազգային հանդիպումներին ադրբեջանական կողմից գործուղվող այդպիսի «շրջիկ ինֆորմատորները» ներկայանում են իբրև հայկական «ազդեհիայից» տուժածներ: Ստամբուլում տեղի ունեցած համանման հանդիպումներից մեկի ժամանակ Ադրբեջանը ներկայացնում էր Անար Ուսուբովը, որը հանդես էր գալիս իբրև փախստական Խոջալուից: Նույն Անարը և ում Ջատուր Ալիև 2009թ. փետրվարի 27-ին մասնակցում էին Մոսկվայում Հ.Ալիևի հիմնադրամի կողմից Խոջալուին նվիրված տեղեկատվական-քարոզչական միջոցառմանը և, իբրև դեպքերի ակնատեսներ, «պատմում էին սեփական հիշողությունները հայ զինվորականների կողմից ադրբեջանական բնակավայրի խաղաղ բնակիչների նկատմամբ իրականացված գազանությունների և անարգանքների մասին»<sup>2</sup>, այնինչ նրանք 1992թ. մանկահասակ երեխաներ էին:

Ժողովրդական դիվանագիտության շրջանակներում տարվող քաղաքականության մաս է կազմում նաև ԱՀ-ում և արտասահմանում գործող ՀԿ-ների (ադրբեջանական *GONGO*<sup>3</sup>-ների), ինչպես նաև արտասահմանում ապրող կամ սովորող ադրբեջանցիներից կազմվող համայնքների գործունեությունը: Ադրբեջանի ներսում այդպիսի *GONGO*-ների ձևավորումը համակարգված կերպով խրախուսվում է նախագահին կից գործող Հասարակական կազմակերպությունների պետական

<sup>1</sup> Տե՛ս Գլուխ 5:

<sup>2</sup> <http://news-ru.trend.az/karabakh/1432478.html>

<sup>3</sup> Անգլերեն «Government-operated Non-governmental organization»-ից:



աջակցության խորհրդի կողմից, որը ՀԿ-ներին դրամաշնորհներ է տրամադրում «առաջնահերթ» ոլորտներում գործունեության համար, ինչպիսիք են, օրինակ, Ադրբեջանի տարածքային ամբողջականության և փախստականների ու հարկադրված տեղահանվածների իրավունքների հետ կապված ծրագրերը: Այդ մեխանիզմով ԱՀ-ում գործում են նաև թվացյալ, այսպես կոչված «քվազի իրավապաշտպանական» ուղղվածությամբ ՀԿ-ներ, որոնց գործունեությունը ծառայում է ոչ թե Ադրբեջանի քաղաքացիների իրավունքների ազատ իրացմանը, այլ պետական քարոզչական քաղաքականությանը (օրինակ՝ «Ընտրության իրավունք» ՀԿ-ն): Այնուամենայնիվ, ադրբեջանական GONGO-ների ամենավառ օրինակը վերը հիշատակված Հ.Ալիևի հիմնադրամն է, որը լավագույնս համադրելով իր հասարակական կարգավիճակը և կառավարական մանդատը՝ հնարավորություն ունի մասնակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ցանցերին և ակտիվորեն համագործակցել աշխարհի տարբեր երկրների հասարակական կառույցների հետ:

Ադրբեջանական կառավարությունը լուրջ ջանքեր է գործադրում նաև տարբեր երկրներում նոր, հատկապես երիտասարդական ՀԿ-ների ստեղծման ու դրանց գործունեությունը պաշտոնական քարոզչական աշխատանքներին ուղղորդելու նպատակով: Վերջիններիս շարքում է Ռուսաստանի ադրբեջանական երիտասարդական կազմակերպությունը, որի հիմնադիր կոնֆերանսում (2009թ. ապրիլի 19) նախագահ ընտրվեց Լեյլա Ի.Ալիևան (որը նաև Հեյդար Ալիևի հիմնադրամի ՌԴ ներկայացուցչության ղեկավարն է, տե՛ս *Գլուխ 5*):

Ինչ վերաբերում է արտասահմանում ապրող ադրբեջանցիների մոբիլիզացմանը, նրանց միջև համայնքային կապերի ձևավորմանը և ադրբեջանական սփյուռքի ստեղծմանը, ապա վերոնշյալ հիմնադրամից բացի՝ այդ աշխատանքները հիմնականում տարվում են Սփյուռքի հետ աշխատանքների պետական կոմիտե և Աշխարհի ադրբեջանցիների համակարգման խորհուրդ կոչվող կառույցների միջոցով, ինչպես նաև տարբեր երկրներում Ադրբեջանի դեսպանատների անմիջական մասնակցությամբ: Համայնքային կառույցներն ադրբեջանական պետական քարոզչական շահերին ծառայեցնելը դրսևորվում է նրանց հակահայկական ակցիաներում և հրատարակչական գործունեությամբ: Այսպես, Լոնդոնի ադրբեջանական համայնքի կազմակերպության նախաձեռնու-

թյամբ «Խոջալուի ողբերգությունը. միջազգային տեսակետ» և «Միջազգային տեսակետներ. ԼՂՀ-ի շուրջ հայ-աղբրեջանական հակամարտությունը» անգլիալեզու աղբրեջանամետ հրատարակությունների օրինակներ են ուղարկվել Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Դևիդ Միլիբանդին, Համայնքների պալատի 646 անդամների, ԵՄ խորհրդարանում Բրիտանիան ներկայացնող 78 պատգամավորների, միջազգային լրատվամիջոցների՝ «Վաշինգթոն փոստին», «Սանդի թայմսին», «Նյու Յորք թայմսին», «Նյուգուրդին», «Բոսթոն գլոբին» և աշխարհի 60 գրադարանների<sup>1</sup>:

Այսօր աղբրեջանական համայնքային կազմակերպություններ են գործում ԱՄՆ-ում, Իսրայելում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Թուրքիայում, Վրաստանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Գերմանիայում, Հոլանդիայում և այլուր:

Ժողովրդական դիվանագիտության ճակատը լայնացնելու նպատակով աղբրեջանական կողմը սերտորեն համագործակցում է նաև արևմտյան երկրների իսլամական կամ թուրքալեզու այլ ժողովուրդների համայնքների, հատկապես թուրքական՝ շատ ավելի մոբիլիզացված սփյուռքի հետ, որոնց գործողությունները համատեղվում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դեմ և ԼՂՀ հարցում աղբրեջանամետ տեսակետների տարածման հարցերում: Այսպես, 2007-ի նոյեմբերին Ի.Ալինի նախաձեռնությամբ Բաքվում կայացավ նաև թուրքական պետությունների և համայնքների բարեկամության, եղբայրության և համագործակցության XI նիստը: Նույն թվականի մարտի 9-ին Բաքվում տեղի էր ունեցել աղբրեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների ղեկավարների առաջին ֆորումը, որի արդյունքում ընդունվեցին «Աղբրեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների համատեղ գործունեության ռազմավարություն» և «Բաքվի հոչակագիր» կոչվող փաստաթղթերը: Իսկ արդեն 2008թ. մարտի 27-ին Բեռլինում կայացավ «Աղբրեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների համակարգման խորհրդի» նիստը, որը այդուհետ որոշվեց գումարել ամեն տարի:

Այսպիսով, աղբրեջանական ՀԿ-ները, արտասահմանում ապրող աղբրեջանցիները և այլ թուրքալեզու միգրանտներ թուրքական համայն-

---

<sup>1</sup> Հայկարամ Նահապետյան, «Աղբրեջանական սփյուռքի քարոզչական ձեռնարկները», <http://www.noravank.am/am/?page=theme&thid=5&nid=1276>

քային միավորումների հետ միասին համակարգված տեղեկատվական ցանց են կազմում ժողովրդական դիվանագիտության ճանապարհով Հայաստանի և Հայության դեմ մղվող ինֆոքաղաքականության հարցում: Այդ ցանցն ապահովում է ոչ միայն ցանկալի տեղեկատվական հոսքերը, այլև կազմակերպում է «քաղաքացիական ակցիաներ»՝ փորձելով այդպիսով ազդել միջազգային հանրային կարծիքի վրա:

### ***Լոբբինգային գործունեություն***

Այս բնագավառում Ադրբեջանն օգտագործում է և՛ դիվանագիտական խողովակները, և՛ տվյալ երկրում իր համայնքային ռեսուրսներն ու նպատակայնորեն ձևավորված ՀԿ-ները: Նման գործողությունների օրինակ է Նիդեռլանդներում ադրբեջանական դեսպանատան կողմից Հաագայի Խաղաղության պալատի գրադարանին «Խոջալուի ցեղասպանության» թեմայով 16 հատորյակի տրամադրումը: Միջազգային քաղաքական հարթությունում տարվող աշխատանքներից է նաև զանազան ճանապարհներով օտարերկրյա դիվանագետներին ադրբեջանամետ դիրքեր ներքաշելը, ինչպես նաև հակահայկական գործողություններով աչքի ընկած անձանց առաջխաղացմանն աջակցելը տարբեր երկրների քաղաքական ասպարեզներում:

Լոբբինգային գործունեությամբ հատկապես աչքի է ընկնում Իսրայելում 2007թ. հիմնադրված Իսրայել-Ադրբեջան միջազգային ասոցիացիան (կրճատ՝ «ԱզԻգ»): Այն հիմնադրվել է ծնունդով բաքվեցի, Իսրայելի 17-րդ գումարման Քնեսեթի պատգամավոր Յոսեֆ Շագալի<sup>1</sup> և Արտասահմանում ապրող ադրբեջանցիների հետ աշխատանքների պետական կոմիտեի<sup>2</sup> համատեղ ջանքերով և միավորում է 80-110 հազար անդամ ողջ Իսրայելից (այդ թվում՝ Ադրբեջանից տեղափոխված իսրայելցիների բոլոր նախկին համայնքային կառույցները և նրանց անդամներին): Կառույցի շարքերում են հասարակական կշիռ ունեցող, նախկինում ադրբեջանաբնակ հրեաներ՝ 30 գործող լրագրողներ Իսրայելի ռուսալեզու

<sup>1</sup> Հատկանշական է, որ «ԱզԻգ»-ի նախագահ Յոսեֆ Շագալն այլևս տեղ չի գրադեցնում 2009թ. ձևավորված 18-րդ գումարման Քնեսեթում, ինչի հետ կարող է կապված լինել կազմակերպության ակտիվության նվազեցումը: Կառույցի ֆորումում 2009թ. մարտին նույնիսկ նշվում է գումարների սղության մասին (<http://www.druzya.com/forum/showthread.php?t=50572>):

<sup>2</sup> 2008-ից այն վերանվանվել է Սփյուռքի հետ աշխատանքների պետական կոմիտե:

լրատվամիջոցներից, շուրջ 15 պրոֆետոր իսրայելական 6 համալսարաններից, 150 բժիշկ և այլն: Այս կառույցի գործունեությունն ուղղված է Ադրբեջանի և Իսրայելի, ինչպես նաև Ադրբեջանի և ԱՄՆ-ում հրեական լոբբիի միջև կապերի հաստատմանն ու զարգացմանը, հակահայկական և ադրբեջանամետ քաղաքականությանն աջակցելուն: Կարճատև գործունեության ընթացքում «ԱզԻԳ»-ը հասցրել է անմիջական դերակատարում ունենալ Իսրայելի և Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների կազմակերպման, «Ամերիկայի հրեական կոմիտեի» և ԱՀ-ի միջև կապերի հաստատման<sup>1</sup>, ինչպես նաև 2008թ. Քնեսեթում Հայոց ցեղասպանության ճանաչումը մերժելու, հրեաների կոտորածներում հայերին մեղադրող ադրբեջանական քարոզչական գրականությունն Իսրայելում հրատարակելու և տարածելու աշխատանքներում: «ԱզԻԳ»-ի գործադիր տնօրեն Լև Սպիվակը Ռովշան Մուսթաֆանի<sup>2</sup>, 2008թ. փետրվարին Մոսկվայում լույս տեսած «Մահվան տանգո» գրքի գլխավոր խորհրդատուն էր, 2008թ. աշնանը Երուսաղեմում երբայերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած «Մահվան երթ» հերթական հակահայկական քարոզչական աշխատության գրախոսը: Այդ «աշխատություններում» հեղինակը հայկական ծագում է որոնում Հոլոքոսթի մասնակից գերմանացի առաջնորդների շրջանում՝ միաժամանակ հայերին մեղադրելով 1918-1919թթ. ադրբեջանական Ղուբա քաղաքում հրեաներին կոտորելու մեջ<sup>3</sup>: «ԱզԻԳ»-ի ջանքերով «Մահվան երթը» բաժանվել է Քնեսեթի անդամներին և Իսրայելի գրադարաններին, տարածվել այլ երկր-

<sup>1</sup> 2007թ. «ԱզԻԳ»-ի նախագահ Յոսեֆ Շազալի ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցավ ԱՄՆ հրեական կառույցների հետ Նազիմ Բբրահիմովի (Արտասահմանում ապրող ադրբեջանացիների հետ աշխատանքների պետական կոմիտեի ղեկավարի) առաջին հանդիպումը, որի ժամանակ ամերիկացի ազդեցիկ հրեաներին «ապշեցրին իրական տեղեկություններն այն մասին, որ Ադրբեջանն աշխարհի միակ երկիրն է, որտեղ հակասեմիթականության ոչ մի դեպք երբևէ չի դրսևորվել» (<http://day.az/news/politics/98646.html>): Իսկ արդեն հաջորդ տարի Ամերիկայի հրեական կոմիտեի գործադիր տնօրեն Դեյվիդ Հարիսը եռօրյա այցով հյուրընկալվեց Բաքվում, հանդիպում ունեցավ Ի.Ալիևի հետ և մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ իր կազմակերպությունը ԱՄՆ-ում ներկայացնելու է Ադրբեջանի շահերը (<http://ayekikan.wordpress.com/2008/08/19/american-jewish-committee-to-lobby-for-azeri-interests-announces-director/>):

<sup>2</sup> Այժմ հանգուցյալ Ռովշան Մուսթաֆանը Ադրբեջանի ԳԱԱ Մարդու իրավունքների ինստիտուտի տնօրենն էր և համարվում էր «տեղեկատվական պատերազմի ինքնամոռաց մարտիկ», (<http://www.xalqgazeti.com/index.php?lngs=aze&cats=12&ids=26654>):

<sup>3</sup> Ռովշան Մուսթաֆանը Ադր. ԳԱԱ շրջանակներում հակահայկական հրատարակումով հանդես է եկել դեռևս 2002թ. (Преступления армянских террористических и бандитских формирований против человечества (XIX-XXI вв.), Баку - элм - 2002)՝ մեղադրելով հայերին Էթնազգային տարբեր խմբերի անմարդկային, զազանաբար ոչնչացնելու մեջ, ընդ որում հղում կատարելով *հակասեմիթականությանը* և *հայատյացությանը* հայտնի ծայրահեղ նացիոնալիստ Վասիլի Լվովիչ Վելիչկովի վկայություններին (<http://www.kitab.az/cgi-bin/catlib2/item.cgi?lang=az&item=20060619060511499>):

ներում: Կարևոր հանգամանք է այն, որ չնայած «Իսրայել-Ադրբեջան» միջազգային ընկերակցության ծավալուն աշխատանքներին նրանց գործողություններն իրականում համընդհանուր թուրքական ավանդական քաղաքականության դրսևորումներ են<sup>1</sup>:

Լոբբինգային բաղադրիչում շահարկվում է նաև «մարդու իրավունքների» գաղափարը: Օրինակ, Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպան Էլմիրա Մուլեյմանովան նպատակային հակահայկականություն է քարոզում միջազգային կառույցների շրջանակներում՝ մեղադրելով հայերին բազմաթիվ հանցանքներում, այդ թվում՝ միանգամից 3՝ «Քյարքիջահանի, Ղարադաղլիի և Խոջալուի»<sup>2</sup> ցեղասպանությունների կատարման մեջ:

Ադրբեջանական լոբբինգային գործունեության ամենացցուն արդյունքը կարելի է համարել Նևադայի նահանգապետ Ջիմ Գիբոնսի կողմից մարտի 31-ը իբրև «ադրբեջանցիների հիշատակի օր» հռչակելը<sup>3</sup>: Այս ձեռքբերումը ԱՄՆ-ում կազմավորված «ԱՄՆ ադրբեջանցիների ցանց» (*US Azeri's Network 'USAN*) կազմակերպության և նրա գործադիր տնօրեն Ադիլ Բադիրովի<sup>4</sup> ջանքերի հետևանքն է: Կազմակերպության շնորհիվ է, որ ԱՄՆ Կոնգրեսի նիստերի արձանագրություններում ներառված են ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի մի շարք անդամների ելույթները՝ նվիրված Խոջալուի ողբերգությանը: Ակնհայտ է, որ *USAN*-ը (այն սովորաբար անվանում են «թանկարժեք լոբբիստներ») այս արդյունքի վրա կանգ չի առնելու: Ադիլ Բադիրովի խոսքերով՝ «...քաղաքական գործունեության շնորհիվ հնարավոր է շատ բան անել... Մենք կարող ենք շատ բանի հասնել և մրցել նույնիսկ այնպիսի ուժեղ մրցակցի հետ, ինչպիսին են հայկական սփյուռքն ու իր լոբբին»<sup>5</sup>:

<sup>1</sup> 2009թ. փետրվարին Թուրքիայի արտգործնախարարի Իսրայել կատարած այցի և նրա կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հակազդման աշխատանքների մասին տեղեկանում ենք Թոմ Սեզլի «*Mozart and the Armenian genocide*» հոդվածից (<http://www.haaretz.com/hasen/spages/914602.html>):

<sup>2</sup> <http://www.regnum.ru/news/1056691.html>

<sup>3</sup> <http://www.panarmenian.net/news/eng/?nid=32022&date=2009-05-21>

<sup>4</sup> Ադիլ Բադիրովը 2009թ. փետրվարին ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Շոխրեթ» շքանշանով պետական ծառայության մեջ արդյունավետ գործունեության համար: Նա *USAN* գործադիր տնօրենի պաշտոնը համատեղում է Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի փոխնախագահի պաշտոնի հետ:

<sup>5</sup> <http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav050809aru.shtml>

### **Ներքաղաքական բաղադրիչ**

Աղբբեջանի ներքաղաքական կյանքում հակահայկական տրամադրությունների ձևավորումը միանշանակ և այլընտրանք չունեցող ուղեգիծ է: Իշխանությունների ռազմատենչ հռետորաբանությունը, ռազմական բյուջեի ցուցադրական ուռճացումը, ՁԼՄ կառավարումը և իշխանական տեղեկատվական հոսքերին հակասող դիրքորոշումների լռեցումը ծառայում են հակահայկական ինֆորմացիոն քաղաքականությանն ու աղբբեջանական հասարակության ներսում հայի կերպարի նկատմամբ անհանդուրժողականության սերմանմանը<sup>1</sup>: Նման ռազմավարության արդյունքում հակահայկականությունը Աղբբեջանի հասարակության համար դարձել է առօրեական երևույթ և գիտակցության բաղադրամաս: Դրան են ծառայում «հայերի կողմից» հրադարարի ռեժիմի խախտման կեղծ տեղեկատվությունների և հակահայկական նյութերի գրեթե ամենօրյա հրապարակումներն աղբբեջանական ՁԼՄ-ում, ինչպես նաև պետական տոնացույցում մի շարք տոների և սզո օրերի սահմանումը, ինչպիսիք են, օրինակ, հունվարի 20-ի «համազգային սզո օրը», փետրվարի 26-ի «Խոջալուի ցեղասպանության և համազգային սզո օրը», մարտի 31-ի «աղբբեջանցիների ցեղասպանության օրը» և հունիսի 15-ի «ազգային փրկության օրը»:

ԼՂՀ գոյության մերժումը և նրա՝ որպես Աղբբեջանի մաս ընկալումը ևս շարունակաբար ներմուծվում է քարտեզագրության և նպատակահարմար ռակուրսով լրատվության հաղորդման միջոցով: Այսպես, օրինակ, ԼՂՀ տարածքում տեղի ունեցած իրադարձությունները լուսաբանվում են իբրև ԱՀ ներքին լրատվություն: Դրան է ծառայում նաև «Ղաբաբաղ» անունով ֆուտբոլային թիմի մշտական առաջատարությունը:

Կրթական քաղաքականությունը ևս մեծ դեր ունի տեղեկատվական գործողություններում. աղբբեջանցի երեխաների սոցիալացումն ընթանում է պատմության կեղծարարության և հայերի միանշանակ դիվայնացման (դեմոնիզացիայի) ու ապամարդկայնացման (դեհումանիզացիայի) համատեքստում: Դրա վկայությունն է դպրոցական դասագրքերում հայերին վերագրվող «սարսափների քարոզչությունը», որն առնչվում է մեծ մասամբ Խոջալուի դեպքերի մեկնաբանությանը և հայերի անմարդկային

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Գլուխ 3:

թուրքատյացության մասին ինֆոլոգեմներին<sup>1</sup>: Արդյունքում՝ հատկապես Աղբբեջանի երիտասարդության շրջանում հայի՝ իբրև ագրեսորի և թշնամու, ընկալումը վերածվում է ազգային հոգեկերտվածքի:

Ներքաղաքական դաշտի հակահայկական քարոզչությանը անմասն չի մնում նաև երկրի կրոնական վերնախավը, որի ղեկավար Ալլահշյուքյուր Փաշազադեն հավատացյալ աղբբեջանցիներին ակտիվորեն քարոզում է հակահայկականություն: Չբավարարվելով Աղբբեջանով՝ հոգևոր առաջնորդը հակահայկական տրամադրություններ է քարոզում նաև Հյուսիսային Կովկասի իսլամադավան ժողովուրդների շրջանում, որի հեռահար նպատակների մեջ են մտնում Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում խիտ կերպով բնակեցված հայության դեմ որոշակի տրամադրությունների սերմանումը և դրանց ուղղորդումը:

Ներքին հակահայկականությունը ինքնավերարտադրվող քաղաքականություն է. մեկ անգամ նպատակային ձևով ներմուծվելով և մշտապես խրախուսվելով (նախագահի կողմից տրվող շքանշանների կամ գումարային մրցանակների տեսքով, ինչպիսին է, օրինակ, Ազգային անվտանգության նախարարության կողմից Մամիր Ասկերխանովի անվանական մրցանակաբաշխությունը<sup>2</sup>)՝ այն պարարտ հող է դառնում բազմաթիվ ինքնաբուխ նախաձեռնությունների համար:

<sup>1</sup> «Ինֆոլոգեմը» ինֆորմացիոն միֆոլոգեմի համադրությունն արտահայտող հասկացություն է և նշանակում է իրական փաստերը դուրս մղող կեղծ տեղեկատվություն: Ինֆոլոգեմները ձևավորվում են չգիտակցված մոլորությունների կամ էլ գիտակցված և նպատակաուղղված մանիպուլյացիաների ազդեցությամբ: Դրանք բնորոշ են ինքնավերարտադրումը, լայն տարածումը և ներթափանցումը համակարգում: Ինֆոլոգեմներն ազդում են անձի վրա փաստացիորեն անսահմանափակ ժամանակահատվածում, քանի որ հեշտորեն են հայտնվում տեղեկատվական ռեսուրսներում, գրքերում, արխիվային նյութերում, դառնում են դրանց տարրը և այդ կերպ մասնակցում մարդկանց գիտակցության մեջ խեղված պատկերի ձևավորմանը: Դրանք ձևավորում են անհատական և սոցիալական վարքի կայուն կարծրատիպեր և ունակ են սպակոդմորոշել ամբողջ սերունդներ (*Коран В.З.*, «Качество информации и мир инфологем (фрагменты теории). - Проблемы информационного взаимодействия», Новосибирск, 1993):

<sup>2</sup> Այս մրցանակաբաշխության հայտարարվող նպատակներից է «աղբբեջանական իրականությունը միջազգային հանրությանը ներկայացնելը», իսկ «լրագրողական աշխատանք», «գիտական հետազոտություն», «ժամանակակից տեղեկատվական քարոզչություն», «կինո և կերպարվեստ» անվանակարգերում հաղթողների աշխատանքներն ավանդաբար հակահայկական բնույթ ունեն (մանրամասն տե՛ս *Հ. Դեմոյան*, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», էջ 69, [http://www.noravank.am/file/article/76\\_am.pdf](http://www.noravank.am/file/article/76_am.pdf)):

### ***Մեդիա բաղադրիչ***

Ադրբեջանի իշխանությունների տեսանկյունն օպերատիվ կերպով կտարածելու և ադրբեջանամետ դիրքորոշումներ ձևավորելու համար Ադրբեջանը ռազմավարական նշանակություն է տալիս մեդիա դաշտին և մեծ ռեսուրսներ է ներդնում այս ոլորտում: Մեդիան այն հիմնական բաղադրիչն է, որի միջոցով ընթանում է տեղեկատվական ազդեցությունը հայկական լսարանների ուղղությամբ և ոչ միայն միջնորդավորված այլ երկրների ՁԼՄ-ով, այլև ուղղակիորեն՝ ինտերնետի օգնությամբ: Համացանցի բոլոր հնարավորությունները լայնորեն օգտագործվում են ադրբեջանական քարոզչամեթոդալի կողմից. ներկայումս գործում են Ադրբեջանում և այլ երկրներում գրանցված հակահայկական բովանդակությամբ հարյուրավոր կայքեր: Վերջին շրջանում ակտիվացած այդպիսի ձեռնարկ է «Արդարություն Խոջալուի հարցում» միջազգային քարոզարշավի շրջանակներում [www.justiceforkhojaly.org](http://www.justiceforkhojaly.org) կայքի գործարկումը և դրա շնորհանդեսի կազմակերպումն աշխարհի տարբեր խոշոր քաղաքներում: Նախաձեռնողը կրկին Լեյլա Ալիևան է, այս անգամ, սակայն, այլ կարգավիճակով՝ իբրև «Իսլամական կոնֆերանսի երիտասարդական ֆորում» կազմակերպության մշակույթների և քաղաքակրթությունների միջև երկխոսության հարցերի գլխավոր համակարգող:

Համաշխարհային ավանդական մեդիա դաշտում նպաստավոր դիրքեր գրավելու նպատակով Ադրբեջանն իրականացնում է մի շարք քայլեր՝ սկսած ճանաչում ունեցող ՁԼՄ-ում նյութեր պատվիրելուց ու նրանց հետ համագործակցություն հաստատելուց, մինչև դրանց բաժնետոմսերի փաթեթների ձեռքբերումը: Վերջերս կայացած համագործակցության օրինակ է «Trend» ադրբեջանական լրատվական գործակալության և իտալական «Adnkronos International» (AKI) լրատվական ծառայության միջև կնքված համաձայնագիրը, որը ենթադրում է լրատվական և վերլուծական նյութերի փոխանակություն, ինչպես նաև էքսկլյուզիվ նյութերի պատրաստում: AKI մեդիա գործակալությունն այն 11 կազմակերպություններից է, որոնք միավորվել են «The GMC Group» մուլտի-լրատվական հրատարակչական խմբում և համագործակցում են «Reuters International», «Scripps Howard News Service», «Los Angeles Times», «Washington Post News Service», «Deutsche Presse Agentur», «The New China



*News Agency*» և այլոց հետ<sup>1</sup>: «*Trend*»-ի նոր գործընկերների շարքում է նաև «*УКРИНФОРМ*» ուկրաինական պետական գործակալությունը:

ՌԴ մեդիա դաշտում Ադրբեջանն օգտագործում է նաև դեռևս խորհրդային ժամանակներից ռուսական լրատվականներում դիրքեր զբաղեցնող ադրբեջանցիներին: Օրինակ, հակահայկական նյութերով աչքի ընկնող «*Коммерсантъ*» օրաթերթի փոխխմբագիրն էր Ազեր Մուրսալիևը, որը 2009թ. հունվարի 13-ին դարձավ գլխավոր խմբագիր<sup>2</sup>:

Արտերկրում ադրբեջանական պարբերականները և կայքերը ծառայում են ինչպես տվյալ համայնքների համախմբման գործին, այնպես էլ հյուրընկալող երկրներում կատարվող հակահայկական քարոզչությանը: Այսպես, օրինակ, Բրյուսելում հիմնադրված Ադրբեջանական տուն կազմակերպությունը (2000թ.) հրատարակում է ադրբեջանական «Եվրոխաբար» («*Euroxeber*») թերթը, որի առաջին համարը լույս է տեսել 2004թ. հուլիսի 22-ին: Թերթը տարածվում է ԵՄ երկրների ադրբեջանական համայնքներում, առաքվում է ԵՄ, Եվրախորհրդի, ԵԱՀԿ պաշտոնյաներին և ԵՄ պետությունների օրենսդիրներին, գործում է նաև [www.euxeber.com](http://www.euxeber.com) կայքը:

ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում ադրբեջանցիների գլխավորությամբ լույս են տեսնում երկու ռուսալեզու թերթեր՝ «*Азерброс*» և «*Азербайджанский конгресс*», վերլուծական ամսագրեր՝ «*Вестник Аналитики*» և այլն, որոնք օգտագործվում են իբրև հակահայկական հարթակներ: Միաժամանակ Մոսկվայում և Բաքվում՝ Մուսա Մարջանլիի խմբագրությամբ, 3 լեզուներով հրատարակվում և տարածվում է «*IRS Наследия*» պարբերականը, որի էջերը ծառայում են հակահայկական քարոզչությանը: Օրինակ՝ 2008թ. 5-րդ համարի բոլոր հոդվածներն առնչվում էին Հայաստանին և Հայությանը: Մասնավորապես, «Նրանք չպետք է անպատիժ մնան» խորագրով հոդվածում ներկայացված են ՀՀ գործող և երկրորդ նախագահների, ՊՆ գործող նախարարի և 38 անձանց անուններ, որոնք մեղադրվում են պատերազմական գործողությունների ժամանակ «Խոջալուում խաղաղ բնակչության սպանության մեջ»:

Այլ երկրների ԶԼՄ դաշտում ադրբեջանական քաղաքականությունն առաջնորդվում է նաև հայկական կողմի հետ մրցակցության

<sup>1</sup> <http://www.day.az/news/society/152559.html>

<sup>2</sup> [http://www.gazeta.ru/news/lastnews/2009/01/13/n\\_1316901.shtml](http://www.gazeta.ru/news/lastnews/2009/01/13/n_1316901.shtml)

տրամաբանությամբ: Այսպես, օրինակ, Մոսկվայում և ՌԴ այլ քաղաքներում, ինչպես նաև հայաստանյան ռուսալեզու հանրության շրջանում հաջողություն ունեցող «*Ереван*» ամսագրի նմանությամբ 2008-ից Մոսկվայում լույս է տեսնում «*Бакы*» ժամանցային ամսագիրը, որի գլխավոր խմբագիրը և հրատարակիչը նույն Լեյլա Ալիևան է:

Ադրբեջանական իշխանությունները վարում են կոշտ տեղեկատվական քաղաքականություն ներքին դաշտում՝ մասնավորապես, 2009թ. հունվարի 1-ից երկրի տարածքում (ազգային ռադիոալիքների հաճախության վրա) կասեցնելով արևմտյան այնպիսի լրատվամիջոցների հեռարձակումը, ինչպիսիք են «*Radio Liberty*»-ն, «*Voice of America*»-ն և «*BBC*»-ն: Բարուն հայտարարեց, թե արտասահմանյան ալիքների բացը լրացնելու նպատակով պլանավորում է մոտ ապագայում (նախատեսվում էր 2009թ. մայիսին) բազմալեզու՝ անգլերեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն և հայերեն միջազգային հեռուստարձակություն գործարկել («*ATV International*»), որը ժամը մեկ լրատվություն կհաղորդի նշված բոլոր լեզուներով: Հետագայում պարզ դարձավ, որ «*ATV International*»-ը նախատեսված չէ Ադրբեջանի ներքին լսարանի համար, այլ արբանյակային հեռարձակմամբ սփռվելու է հարևան երկրների, այդ թվում՝ Իրանի և, իհարկե, ՀՀ-ի ու ԼՂՀ-ի տարածքում: Հայերեն հեռարձակումները, բնականաբար, դիտարկվում են որպես «հայկական լսարանին Ադրբեջանի մասին ճշմարտությունը հասցնելու» և «Լեռնային Ղարաբաղի հայերին ուղղակիորեն դիմելու» հնարավորություն: Հայերենի իմացությամբ մասնագետներ պատրաստելու և հայերեն հեռուստահաղորդումների պատրաստմանն աջակցելու նպատակով գործում ներգրավված է նաև Գաֆար Չախմադլիի գլխավորած Հայկական հետազոտությունների կենտրոնը<sup>1</sup>: Այս ամենը պետք է ընդունել որպես լրջագույն մարտահրավեր Հայաստանի տեղեկատվական անվտանգությանը:

Ադրբեջանական իշխանությունների կողմից ՁԼՄ ամբողջական վերահսկմանն ուղղված վերջին քայլերից է 2009թ. ապրիլի 3-ին Ադրբեջանի նախագահին կից Մամուլի կառավարական աջակցության հիմնադրամի ստեղծումը: Երկրի վարչապետին հանձնարարված է մեկ ամսվա ընթացքում հիմնադրամին տրամադրել շենք, հարմարություններ և պե-

<sup>1</sup> «ЦАИ может помочь в подготовке телепередач на армянском языке», 2009.03.06, <http://www.1news.az/society/20090306062649397.html>

տական բյուջեից հիմնադրամին միջոցներ տրամադրելը: Մամուլի խորհուրդը պատրաստել է Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի անդամների ցուցակը, որում ընդգրկվել են Ադրբեջանի առաջատար լրատվամիջոցների (*Day.az, APA, Ayna, Zerkalo, 525, Turan*) ղեկավարները<sup>1</sup>:

### ***Տեխնոլոգիական բաղադրիչ***

Ադրբեջանը, ոչ առանց թուրքական աջակցության, փորձում է Հայաստանի նկատմամբ տեխնոլոգիական, մասնավորապես՝ հաքերային կիբեռպատերազմների ոլորտում, գերազանցության հասնել: Ադրբեջանական հաքերական գործողությունները հայկական ինտերնետային ռեսուրսների նկատմամբ առաջին անգամ փորձարկվել են 2000թ.՝ պարբերաբար ստանալով ինտենսիվ բնույթ: Փորձագետների կարծիքով՝ հաքերային դաշտում ադրբեջանական վերջին հարձակումները «զինավարժությունների» տպավորություն են թողնում, ինչը վկայում է այն վարկածի օգտին, որ դրանք իրագործվում են պետական համակարգի, թերևս՝ Ազգային անվտանգության նախարարության քարոզչության և ինֆորմացիայի վարչության կողմից: Եթե նախկինում նման գործողությունները նպատակ ունեին խախտել հայկական կայքերի հասանելիությունը, հոգեբանորեն ներգործել դրանցից օգտվողների վրա, ինչպես նաև սեփական հանրությանը հոգեբանական հաղթանակի բերկրանք պարգևել, ապա այժմ դրանք առավելապես ուղղված են տեղեկատվական գաղտնիության համակարգերի խաթարմանը, դրանցում խոցելի հանգույցների բացահայտմանը և տեղեկատվական բազաների ձեռքբերմանը<sup>2</sup>:

Ադրբեջանի իշխանությունների՝ հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ ունեցած լրջության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2006թ. Ի.Ալիևի հրամանով ղեկտեմբերի 6-ը հռչակվել է Ադրբեջանի Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակիցների մասնագիտական օր: Նշված նախարարության գործունեությունն ուղղված է ինտերնետում պետական քաղաքականության մոտեցումների մշակմանը, ինտերնետ-դոմենների անուններին առնչվող հարցերի լուծմանը (հավանաբար՝ նաև դրանց

<sup>1</sup> «Օբլեկտիվ» ստերի հերթական երամը», <http://www.armtown.com/news/am/aza/20090421/7497/>, 2009.04.21

<sup>2</sup> Ավելի մանրամասն տե՛ս Գլուխ 4:

ձեռքբերմանն ու պահպանմանը) և հեռահաղորդակցության դաշտում Աղբբեջանի տարածաշրջանային գերակայության հասնելուն: Այդ նպատակով Աղբբեջանն արդեն սեփականության իրավունքով ձեռք է բերել 3 ուղեծրային դիրքեր և նախատեսում է կապի առաջին արբանյակը Բաց թողնել 2010թ., իսկ երկրորդը՝ 2011թ.՝ դառնալով տիեզերական կապի ծառայություններ մատուցող երկիր: Կարելի է համոզված լինել, որ նման հնարավորությունները կօգտագործվեն հակահայկական տեղեկատվական գործողություններն ակտիվացնելու նպատակով:

#### ***2.4 Հակահայկական ինֆորադաքականության մեթոդաբանությունը***

Աղբբեջանի տեղեկատվական քաղաքականության մեթոդաբանությունն անհրաժեշտ է վերլուծել տեղեկատվական գործողությունների մակարդակում, քանի որ ցանկացած ինֆորադաքական համակարգ առանձին տեղեկատվական գործողությունների ամբողջություն է: Իսկ այդ տեղեկատվական-հոգեբանական գործողություններն էությանբ հաղորդակցային համակարգեր են, որոնց կառուցվածքային տարրերն են.

1. սոցիալական համատեքստը,
2. տեղեկատվական աղբբությունը,
3. հաղորդակցման միջոցը,
4. հաղորդագրությունը,
5. լսարանը,
6. հիմնանպատակը կամ առաքելությունը:

Մեթոդաբանական տեսանկյունից այս տարրերից յուրաքանչյուրի առանձին բնութագրիչները, ինչպես նաև դրանց համադրությունները խիստ կարևոր են տեղեկատվական գործողության հաջողության և ազդեցության առումներով: Հետևաբար՝ տեսնենք, թե աղբբեջանական նախաձեռնություններում ինչպես են կիրառվում հաղորդակցային համակարգի տարրերը, և հակահայկական տեղեկատվական գործողությունների ինչպիսի մեխանիզմներ ու մեթոդներ են նկատվել դրանցից յուրաքանչյուրում:

### **1. Սոցիալական համատեքստ**

Սոցիալական համատեքստը լայն իմաստով այն տարածական և ժամանակագրական միջավայրն է, որտեղ կայանում է հաղորդակցումը կամ տեղեկատվական գործողությունը: Ադրբեջանական կողմը, հաշվի առնելով համատեքստի նշանակությունը հակահայկական տեղեկատվական գործողություններում, փորձում է հոգուտ իրեն օգտագործել բարենպաստ իրավիճակները, իսկ անբարենպաստ գործոնները ձգտում է հավասարակշռել կամ չեզոքացնել օպերատիվ-մարտավարական և ռազմավարական մակարդակներում: Այսպես, օրինակ, սոցիալական համատեքստի *անբարենպաստ գործոնների հավասարակշռման կամ չեզոքացման մարտավարական-ռազմավարական* նպատակով էր պայմանավորված 2004թ. օգոստոսին Հունգարիայում Ադրբեջանի դեսպանատան բացումը: Դրա նպատակն էր համակարգել ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի դատավարության հետ կապված տեղեկատվական և այլ բնույթի գործողությունները<sup>1</sup>:

Հատկանշական է, որ Հունգարիայում Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանն ուղղված տեղեկատվական գործողությունները շարունակվում են մինչ օրս. 2008թ. նոյեմբերին Բուդապեշտում կայացավ արդեն ավանդական դարձած «Հունգարիա-Ադրբեջան. մշակութային երկխոսություն» III միջազգային գիտական կոնֆերանսը, որի քննարկումները նվիրված էին նաև ժամանակակից հունգարական պատմագրության մեջ Ադրբեջանի պատմության հարցերին<sup>2</sup>:

Անբարենպաստ գործոնները հավասարակշռվում են նաև *օպերատիվ* տեղեկատվական գործողությունների միջոցով: Այսպես, օրինակ, էթե Հայաստանում հարևան Վրաստանի նախագահ Մ.Մահակազվիլին այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր, ապա ադրբեջանա-

<sup>1</sup> Ադրբեջանի ՋՈւ սպա Ռամիլ Սաֆարովը 2004թ. ձմռանը, երբ մասնակցում էր Բուդապեշտում ՆԱՏՕ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին, քննած ժամանակ կացնահարել էր նույն ծրագրի մասնակից, ՀՀ ՋՈւ սպա Գուրգեն Մարգարյանին: Հետաքննության ժամանակ Ռ.Սաֆարովն իր արարքը էթնիկ ատելության պատճառաբանություններով էր պայմանավորել, որից դատական լուսմների ժամանակ հրաժարվել էր:

[http://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D1%84%D0%B0%D1%80%D0%BE%D0%B2\\_%D0%A0%D0%B0%D0%BC%D0%B8%D0%BB%D1%8C\\_%D0%A1%D0%B0%D0%B3%D0%B8%D0%B1\\_%D0%BE%D0%B3%D0%BB%D1%8B](http://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D1%84%D0%B0%D1%80%D0%BE%D0%B2_%D0%A0%D0%B0%D0%BC%D0%B8%D0%BB%D1%8C_%D0%A1%D0%B0%D0%B3%D0%B8%D0%B1_%D0%BE%D0%B3%D0%BB%D1%8B)

<sup>2</sup> «Венгерским ученым предложено организовать научные экспедиции в Азербайджан», 2008.11.21, <http://www.media-v.hu/index.php?page=news&set=month&id=4142>

կան տեղեկատվական դաշտում անպայման հայտնվում են 1-2 վրացի պատմաբանների հետ հարցազրույցներ, ովքեր իրենց խոսքում ժխտում են Հայոց ցեղասպանությունը, արժեզրկում հայ-վրացական հարաբերությունները, պիտակավորում և մեղադրանքներ ներկայացնում Հայությունը<sup>1</sup>:

Ադրբեջանի կողմից սոցիալական համատեքստի *նպաստավոր գործոնների օգտագործման* առումով հատկանշական է 2008թ. մարտի 1-ից հետո ՀՀ-ում ստեղծված քաղաքական դրության օգտագործումն իրավական, արտաքին քաղաքական, ներքաղաքական և այլ հարթություններում: Այդ համատեքստում էր, որ 2008թ. մարտի 14-ին Ադրբեջանին հաջողվեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանի օրակարգ մտցնել իր պատրաստած «Իրադրությունն Ադրբեջանի գրավյալ տարածքներում» բանաձևը և հասնել դրա ընդունմանը ՄԱԿ անդամ 192 երկրներից ընդամենը 39-ի «կողմ» քվեարկությամբ:

Այսպիսով, և՛ միջազգային, և՛ հայաստանյան մասշտաբներով *սոցիալական համատեքստի մոնիթորինգը* և դրանում ցանկացած *նոր գործոնների հաշվարկումը* նպաստում են ադրբեջանական տեղեկատվական գործողությունների նպատակադրմանը և արդյունավետ կիրառմանը:

Ադրբեջանական կողմը, սակայն, չի բավարարվում սոցիալական համատեքստի օբյեկտիվորեն տրված իրավիճակներով և *նախահարձակ գործողություններով ներմուծելով արհեստական գործոններ* (օրինակ, հայերին ադրբեջանցիների կոտորածներում մեղադրող օրացուցային սզո օրերի հռչակումը)<sup>2</sup>՝ փորձում է իրականացնել *սոցիալական համատեքստի սուբյեկտիվ ձևավորում*: Դա թույլ է տալիս փոխակերպել հաղորդակցության տրամաբանությունը և հայկական կողմին թողնել պաշտպանության դիրքերը: Նման մեթոդներով ստեղծված սոցիալական համատեքստը դառնում է նաև որոշակիորեն կայուն միջավայր, որտեղ ադրբեջանական քարոզչությունն իրականացվում է *նախապես պատրաստված շարժումների կիրառմամբ*: Վերջիններս օգտագործվում են նաև սպասվող օրացուցային իրադարձությունների (ինչպես, օրինակ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է՝ ապրիլի 24-ը) և այլ կանխատեսելի իրավիճակների դեպքերում:

---

<sup>1</sup> Грузинский историк: «У армян так заведено: где бы они не жили, эту местность считают армянской территорией», 2009.06.27, <http://1news.az/analytics/20090627044431735.html>

## **2. Տեղեկատվության աղբյուր**

Տեղեկատվության աղբյուրի գլխավոր բնութագրիչներն են դրա նկատմամբ վստահությունը, հեղինակությունը, աղբյուրների բազմազանությունը և աղբյուրի «լեգիտիմությունը»: Այդ իսկ պատճառով հակահայկական տեղեկատվություն տարածող աղբյուրի ընտրության հարցում ադրբեջանական կողմը նախապատրաստված մոտեցումներ է ցուցաբերում: Այն նախ փորձում է ադրբեջանական քարոզչական աղբյուրներին հեղինակություն հաղորդել և դրանց նկատմամբ բարձր վստահություն ձևավորել՝ դրանք բնութագրելով դրական իմիջավորման պիտակներով: Այսպես, օրինակ, ադրբեջանական «Ազերթաջ» պաշտոնական լրատվական գործակալության վերլուծաբան Վուգար Մեիդովը ներկայացվում է իբրև «հայտնի քաղաքագետ», որն իր նյութերը ստորագրում է մեկ Բուդապեշտից, մեկ Բեռլինից՝ թողնելով միջազգային փորձագետի տպավորություն: Համանման սկզբունքով բոլոր հակահայ քարոզչական գործիչները «հայտնի գիտնականներ» և «ճանաչված գործիչներ» են հռչակվում:

Երկրորդ մեթոդաբանական մարտավարությունն *աղբյուրների դիվերսիֆիկացման պատրանք ձևավորելն է՝* հակահայկական գործողություններում ոչ միայն տեղական, այլև օտարերկրյա հետազոտող գիտնականների ու լրագրողների ներգրավման միջոցով: Ընդ որում՝ կեղծչեզոք օտարերկրացիների (ինչպիսիք են, օրինակ, Էրիկ Ֆայզը և Յուրի Պոմպեևը) ընդգրկումն օգտագործվում է նաև իբրև հակահայկական տեղեկատվական գործողությունների *լեգիտիմացման* միջոց: Խիստ կարևորվում են նաև օտարերկրյա դիվանագետների և քաղաքական գործիչների ադրբեջանամետ հայտարարությունները՝ դրանք ներկայացնելով իբրև միջազգային հանրության օբյեկտիվ կարծիք:

Ադրբեջանական կողմը սեփական ապատեղեկատվության *լեգիտիմացման* համար մշտապես փորձում է *հղում կատարել հայկական կամ հայկական թվացող աղբյուրներին*: Այս նպատակով երբեմն քարոզչական տեքստերի տակ *հայկական ազգանուններով՝ գոյություն չունեցող անձինք* են ստորագրում, հայտնի *հայ գործիչներին հորինված նախադասություններ են վերագրվում*, կամ էլ *նրանց մտքերը ներկայացվում են համատեքստից դուրս՝ իմաստափոխված ձևով*: Հայ գործիչներ-

րին հորինված մտքեր վերագրելու առումով տիպիկ օրինակ է հետևյալը: «*Банк-информация*» կենտրոնի տնօրեն Ռովշան Նովրուզովին 2006թ. հունիսի 2-ին «*Зеркало*» թերթում «մեջբերումներ» է կատարում «հայերի կողմից աղբբեջանցիների նկատմամբ իրականացված գազանությունների» մասին Ջորի Բալայանի «Հարություն» գրքից: Նշվում է անգամ, որ գիրքը լույս է տեսել 1996թ. Վանաձորում, մինչդեռ ո՛չ Ջ.Բալայանի, ո՛չ էլ որևէ այլ հեղինակի կողմից երբևէ համանման գիրք չի հրատարակվել<sup>1</sup>: Հատկանշական է, որ Եվրախորհրդի 2009թ. ամառային նստաշրջանում Աղբբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Գանիրա Փաշանան (Մեհրիբան Ալիևայի քույրը) իր ելույթում կրկին «մեջբերումներ» է կատարել միջակայս գրքից (այս անգամ այն կոչվել է «Մեր ոգու վերակենդանացումը»)՝ թարմացնելով հակահայկական ապատեղեկատվությունը միջազգային հանրության առջև<sup>2</sup>:

Համանման նախաձեռնություններից էր 2009թ. մարտի 11-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ իրականում տեղի չունեցած «Էքսկյուզիվ հարցազրույցը» *www.Inews.az* կայքում, որում աղբբեջանական լսարանի առջև Արմեն Հարությունյանը մեկնաբանում է Հայաստանում մարդու իրավունքների «ճգնաժամային իրավիճակը»<sup>3</sup>:

Լեզիտիմացման նպատակին էին ծառայում նաև «*am*» դոմենային տարածության մեջ գրանցված (*xronika.am, versiya.am*) և իբրև հայկական ներկայացող աղբբեջանական քարոզչական կայքերը: Դրանցից *versiya.am*-ը համեմատաբար կարճատև կյանք ունեցավ և առաջին իսկ կեղծ-հայամետ տեղեկատվությունից բացահայտվեց՝ արժանանալով հայկական ինտերնետային հանրության մանրագնին դիտարկմանը<sup>4</sup>, և արգելափակվեց ՀՀ նախագահի աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության կենտրոնի ջանքերով<sup>5</sup>: Առավել երկարակ-

<sup>1</sup> «Армянский тележурналист: в Азербайджане дезинформация превращается в индустрию», 2008.06.17, <http://www.regnum.ru/news/1015850.html>

<sup>2</sup> 2009.06.27, [http://www.golos.am/index.php?option=com\\_content&task=view&id=47435](http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=47435)

<sup>3</sup> Армен Арутюнян: «Защита прав человека в Армении находится в кризисном состоянии», <http://www.Inews.az/interview/20090311021520995.html>

<sup>4</sup> «Как стряпаются "дезы". Или - о бедном Вусале замолвите слово...», 2009.02.19, [http://karabah88.ru/press2009/02/0219\\_striapnya.html](http://karabah88.ru/press2009/02/0219_striapnya.html)

<sup>5</sup> [www.nv.am/2008/5mart/tema.htm](http://www.nv.am/2008/5mart/tema.htm)



յաց *xronika.am*-ը փորձեց ներագդել հայ-վրացական հարաբերությունների վրա՝ 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի շուրջ հակամարտության ընթացքում հակավրացական ապատեղեկատվություն տարածելով «Ջավախքի հայրենասերների» անունից<sup>1</sup>: Այս դոմենի գործունեության պայմանագիրը հետագայում հասկանալի պատճառներով չթարմացվեց:

Հատկանշական է, որ աղբբեջանական հակահայկական տեղեկատվական գործողությունները միտված են ոչ միայն սեփական աղբբյուրների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն, դիվերսիֆիկացնելուն և լեգիտիմացնելուն, այլև նպատակաուղղված են *հայամետ կամ հայկական աղբբյուրների վարկաբեկմանը* և *ապալեգիտիմացմանը*: Այս նպատակով հեղինակագրկվում են ոչ միայն հայկական աղբբյուրները՝ *պիտակավորվելով* իբրև *քարոզչական, ապատեղեկատվական, հանցավոր, երբեմն էլ ահաբեկչական*, այլև բոլոր այն օտարերկրյա աղբբյուրները, ում տեսակետները բախվում են հակահայկական քարոզչական նպատակներին: Այս հարցում աղբբեջանցիները կիրառում են թուրքական մեթոդաբանությունը, որի ամենավառ օրինակն է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի պատմական վեպի արժեգրկումը: Այդ նպատակով թուրքերը դեռևս 1989թ.՝ Հայոց ցեղասպանության 75-ամյակի նախաշեմին, ստեղծել են *ինֆոլոգեմ*, համաձայն որի՝ Վերֆելը կյանքի վերջին տարիներին «բացահայտել է, որ իր ստեղծագործությունը պատմական հիմքեր չունի»: Ընդ որում՝ թուրքական կողմը, հաշվի առնելով Վերֆելի հրեական ծագումը և, ուրեմն, նրա ստեղծագործության նշանակությունը հրեաների շրջանում, *աղբբյուրի հավաստիության հավասարակշռման* նպատակով այս ինֆոլոգեմի տարածման աղբբյուր է ընտրել կրկին հրեական ծագումով ամերիկացի բաբբբի Ալբերտ Ամաթեուին (այս առասպելաբանական անձը ներկայացվում է նաև Աբրահամ Սաբար, Աբրահամ Մոն Սևեր անուններով): Ինչևէ, Ամաթեուն, որը երիտասարդ տարիքում Թուրքիայից գաղթել էր ԱՄՆ, այդ բացահայտումը կատարել է 101 տարեկանում և Ֆրանց Վերֆելի մահից շատ ավելի ուշ<sup>2</sup>: Այս աղբբյուրի խոսքերին են հետագայում հղումներ կատարում դասական հակահայ էրիխ Ֆայզլը և այլ հակահայ քարոզիչներ:

<sup>1</sup> *Самвел Мартиросян*, «Выводы из последней атаки на армянские сайты со стороны азербайджанских хакеров», «Գլորու. Տեղեկատվական անվտանգություն» # 3, սեպտեմբեր, 2008:

<sup>2</sup> «Взгляд с вершины Муса-дага», 2009.02.26, [http://www.golos.am/index.php?option=com\\_content&task=view&id=43129&Itemid=41](http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=43129&Itemid=41)

### **3. Հաղորդակցության միջոցներ**

Այս հարցում կարևոր բնութագրիչ են միջոցների *բազմազանությունը* և *բազմաքանակությունը*, որոնց շնորհիվ ապահովվում են *տեղեկատվության սփռվածությունը* և *հավաստիության պատրանքի ձևավորումը*: Ադրբեջանը հաղորդակցական միջոցների բազմազանությանը հասնում է բոլոր հնարավոր ֆորմալ (պետական մարմիններ, ՁԼՄ, դիվանագիտական միջոցներ, ՀԿ-ներ) և ոչ ֆորմալ (շրջիկ ինֆորմատորներ, ինտերնետային ռեսուրսներ, սոցիալական ցանցեր) ուղիների ու հաղորդակցային ցանցերի կիրառմամբ՝ թիրախային լսարաններին ուղղված տեղեկատվությունը հնարավորինս լայն սփռելու և այդպիսով *առավելագույն հասանելի* դարձնելու նպատակով: Ադրբեջանական կողմը լայնորեն կիրառում է *ֆոխհղումների*<sup>1</sup> մեխանիզմը, երբ միևնույն տեղեկությունը, միմյանց հղումներ կատարելով, տարածվում է բազմաթիվ աղբյուրների կողմից: Այս մեխանիզմը ոչ միայն բազմապատկում է հաղորդակցային միջոցները և այդպիսով տարբեր լսարանների համար առավելագույն հասանելիություն է ապահովում, այլև նպաստում է *բազմաքանակության էֆեկտի ստեղծմանը*: Երբ տարբեր հաղորդակցային միջոցներով՝ անձնական կապեր, ՁԼՄ, գրքեր, տեսաֆիլմեր, միևնույն տեղեկատվությունն է հաղորդվում, ընկալման մակարդակում հաղորդակցային միջոցների *քանակական բազմապատկման տպավորություն* է ստեղծվում, ինչն էլ հավաստիության պատրանք է ձևավորում:

Փոխհղումային եղանակով միևնույն հաղորդագրության արտատպումը նաև լրացուցիչ հնարք է ինտերնետային կայքերի համար՝ ռեյթինգի բարձրացման և որոնման համակարգերում դրանք առաջնահերթ հասանելի դարձնելու առումով:

### **4. Հաղորդագրություն**

Բուն հաղորդագրությունը հաղորդակցման ամենաբազմաշերտ բաղադրիչն է, որի բնութագրիչներն են հաղորդագրության բովանդակությունը՝ թեման, օբյեկտը, դիսկուրսը, տեքստային ազդեցության հնարքները, փաստարկումը, հուզական ծանրաբեռնվածությունը, պատկերավորումը՝ սիմվոլիկան, հաղորդագրության կրկնման հաճախությունը, բազմաժանրությունը:

---

<sup>1</sup> *Սուրեն Մովսիսյան*, «Ադրբեջանական ՁԼՄ ազդեցության գործոնները տեղեկատվական պատերազմի համատեքստում», «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն», # 2, հունիս, 2008:

Հաղորդագրության *հաճախակի կրկնությունը* առաջին հերթին այն լսարանին *հասանելի դարձնելու* և դրա նկատմամբ *ուշադրություն բնեռելու* նպատակ է հետապնդում: Բացի այդ, այն առավել խորքային հետևանք է ունենում. ընկալման և հիշողության մեխանիզմների օրինաչափության շնորհիվ հաճախակի կրկնվող հաղորդագրությունը *արդյունավետ ամրագրվում է* հանրային գիտակցության մեջ: Եթե նույնիսկ հաղորդագրության բովանդակությունն ընդունելի չի դառնում, ապա առնվազն առօրեական բնույթ է ստանում և սոցիալական իրականության մաս դառնում: Այս մեխանիզմն աղբբեջանական քարոզչությունը նաև *հիմնավորված դարձնելու* ձև է. նույնիսկ չփաստարկված հաղորդագրությունը հիմնավորված է դառնում նախկին նույնական հաղորդագրություններով: Աղբբեջանական քարոզչությունը դիմում է նաև միննույն հաղորդագրության *բազմաժանր փաթեթավորմանը* (ցանկալի տեղեկատվությունն արտահայտվում է ոչ միայն քաղաքական, այլև մշակութային, սպորտային և այլ բնույթի տեքստերի միջոցով), *տեսողական արտահայտչականությանը* կամ *վիզուալացմանը* (տարածում են գտել խիստ յուրովի մոնտաժված «վավերագրական» ֆիլմերը, կեղծված լուսանկարները, քարտեզները, անիմացիաները և այլն): Ուշադրություն է դարձվում *տեքստային վերնագրերի գրավչությանը*, ինչպես նաև *սիմվոլիկ և հուզական (էմոցիոնալ) հագեցվածությանը*:

Աղբբեջանական տեղեկատվական տեքստերում քննարկման, իսկ առավել հաճախ՝ *հարձակման օբյեկտ* է հանդիսանում Հայության համար *արժեքային և սիմվոլիկ ծանրաբեռնվածությունն ունեցող ցանկացած սուբյեկտ*՝ սկսած հայ մարդուց, մինչև պատմական հերոսներ, հայոց քաղաքական պատմությունից մինչև պետական, հասարակական, կրոնական գործիչներ: Հակահայկական տեղեկատվական առավել հաճախակի հարձակումների շարքում առանձնանում են հետևյալ *թեժ թեմաները*:

***Թեմա 1. Հայկական պետականության ու հայ ժողովրդի պատմությունը, հատկապես Արցախի քաղաքական պատմությունը, հայերի ծագման ու բնիկության հարցերը***

Այս թեմայի շրջանակներում աղավաղվում է Հայաստանի քաղաքական պատմությունը, տարածվում են արցախահայության ծագման կամ բնիկության վերաբերյալ կասկածներ: Ընդհանուր առմամբ շրջա-

նառվում է հայերի եկվորության գաղափարը: Որոշ քարոզչական հաղորդագրություններում հայերն առանձնացվում են «արմեն»-ներից, որոնք բնիկ թյուրքալեզու ցեղեր են ներկայացվում, իսկ «եկվորները» նրանց ինքնանվանումը գողացած «խայ»-եր (նկատի ունեն հայեր): Այս թեմայի շրջանակներում է ընթանում նաև հայկական պատմամշակութային շերտերի օտարումը և դրանց ապահայկականացումը:

***Թեմա 2. Աղբբեջանական պետության կազմավորման, ժողովրդի ծագման և ձևավորման հարցերի նպատակահարմար մեկնությունը և նրանց բնիկության ամրապնդումը***

Հայոց պատմության աղավաղման թեման մշտապես զուգահեռվում է աղբբեջանցիների՝ իբրև բնիկների ներկայացմամբ: Աղբբեջանական քաղաքական շրջանակները և պատմաբանները տասնյակ տարիներ է, ինչ զբաղված են «նախնիների որոնմամբ»<sup>1</sup>: Թեև ներկայիս աղբբեջանցիների ծագումնաբանական ինքնընկալման մեջ գերակա է թյուրքական սկիզբը («մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքով), համաձայն բունիաթովյան ավանդույթների, նրանց ինքնության մեջ Կովկասյան Աղվանքի հետ նույնականացման բաղադրիչներ են ներմուծվում: Այդպիսով հայոց պատմությունը և մշակութային ժառանգությունը ոչ միայն ապահայկականացվում են, այլև աղվանացվում<sup>2</sup>՝ հետագա աղբբեջանականացման հեռանկարով: Աղբբեջանական պրոպագանդիստները Արցախը տեղափոխում են Աղվանք՝ այն պատմականորեն Աղվանքի գավառ համարելով, որտեղ, իբր, ի սկզբանե բնակեցված աղվաններն ապրում էին դեռևս մինչև 19-րդ դարը՝ «հայերի ժամանումից» շատ առաջ: Իսկ քանի որ աղվանցիների և աղբբեջանցիների միջև դրվում է հավասարության նշան, ուրեմն վերջիններս դառնում են Արցախի նախաբնիկները: Այս թեմայի շրջանակներում երբեմն արցախցիներին ևս հնարավորություն է տրվում բնիկ լինել,

<sup>1</sup> Կարեն Վրթանեսյան, «Հայ-աղբբեջանական հակամարտության քարոզչական թեգերը», «Գլբբու. Ազգային անվտանգություն», # 2(6), ապրիլ, 2009:

<sup>2</sup> Օրինակ՝ Գանձասարը Աղվանքի կաթողիկոսի նստավայրն է հռչակվում, որի լուծարումը 19-րդ դարում պատճառաբանվում է հայոց կաթողիկոսի խարդավանքներով: Բայցևայնպես, աղբբեջանական մշակութային հարստություն են համարվում ոչ միայն ժամանակակից Աղբբեջանի և ԼՂՀ-ի, այլև ժամանակակից Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող հայկական եկեղեցիները և այլ պատմամշակութային կոթողներ: Այս մասին մերկապարանոց հայտարարում են բազմաթիվ աղբբեջանական պրոպագանդիստական կայքեր, օրինակ՝ <http://amor.az/index.frc?mod=2&lang=ru&id=434&cat=90>

պարզապես այդ դեպքում նրանք ներկայացվում են ոչ թե որպես հայ, այլ «հայացած աղվաններ»: Նույն սկզբունքով աղվանների հետնորդների շարքին են դասվում նաև Սյունիքի բնակիչները:

***Թեմա 3. 1915թ. Հայոց ցեղասպանության հերքում  
և հանցանքի պրոյեկտում***

Հենվելով թուրքական ավանդույթների վրա՝ ադրբեջանական տեղեկատվական գործողություններում հերքվում է Հայոց ցեղասպանությունը և շրջանառության մեջ դրվում «համաշխարհային պատերազմի տարիներին հայ հրոսակախմբերի կողմից 2 մլն անմեղ թուրքերի սպանության» հորինված տեսակետը: Ցեղասպանության փաստը հերքելիս հաճախ վկայակոչվում են թուրքական քարոզչության առաջատարներ Ջաթին Մաքկարտին, Ավի Ռուբինը, Հյունթեր Լևին, Սենֆորդ Շոուն, Էնդրյու Մանգոն, որոնց «աշխատությունները» հիմնականում նվիրված են Օսմանյան Թուրքիայում հայերի կոտորածները կամ «հայկական ողբերգությունը» «ցեղասպանություն» հասկացությանը չհամապատասխանելու ապացուցմանը:

Ադրբեջանցիների կողմից այս թեմայի շրջանառումը հետապնդում է թուրքական մերժողական քարոզչության աջակցության և հայկական կողմից տրամադրվող տեղեկությունների արժանահավատության նկատմամբ կասկածների տարածման նպատակներ:

***Թեմա 4. 20-րդ դարի ընթացքում «ադրբեջանցիների  
ցեղասպանություն» իրականացնելու մեջ հայկական կողմին  
ուղղված մեղադրանքներ***

Ցեղասպանության մերժման տրամաբանությունն իմաստային շարունակություն է գտնում հայերին «ադրբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու մեջ մեղադրանքում: Այս տեսակետը զարգանում է հիմնականում հետևյալ 3 պատմական իրադարձությունների խեղաթուրման հիմքի վրա:

- *1918թ. Բաքվի կոմունայի և մահմեդականների միջև տեղի ունեցած բախումները ներկայացվում են իբրև հայերի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանության» «հանցագործ պլանի» իրագործում:*

Համաձայն այս ինֆորմացիայի՝ 1918թ. մարտ-ապրիլ ամիսներին Բաքվում, Շամախիում, Ղուբայում «հայկական հրոսակախմբերը» սպանել են ավելի քան 50 հազ. ադրբեջանցիների, ինչպես նաև այլ ժողովուրդների (մասնավորապես՝ հրեաների), ավերել տները, ոչնչացրել պատմական հուշարձանները: Այս թեման Ադրբեջանում ստացել է նաև իրավական ամրագրում՝ վերածվելով ադրբեջանցիների «ցեղասպանության» օրվա հռչակման (մանրամասն տե՛ս *Գլուխ 2*):

- *1990թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների արդյունքում զոհված ադրբեջանցիներին իբրև հայկական սադրանքների զոհեր ներկայացնելը:*

Այս թեման առավել լատենտ (ոչ բացահայտ) հակահայկական քարոզաթեմաներից է: Իրադարձությունները հաճախ ներկայացվում են համատեքստից կտրված՝ դեպքերի մասին հիշատակումը սկսելով միայն հունվարի 20-ից, շրջանցելով հայերի նկատմամբ հունվարի 13-ից սկսած ջարդերը և արտաքսումը, որի պատճառով էլ խորհրդային բանակը, թեև ուշացած, հայտնվել էր Բաքվում: Հունվարի 20-ի իրադարձությունները ներկայացվում են իբրև հայկական անջատողական շարժման դեմ բողոքի ձայն բարձրացրած ադրբեջանցիների ճնշում խորհրդային իշխանությունների կողմից՝ այդպիսով դրանցում հայերին անուղղակիորեն մեղքի բաժին վերագրելով: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հիշատակվում են հայկական ջարդերի որոշ իրողություններ, ապա դրանք մեկնաբանվում են իբրև հայերի կողմից կազմակերպված սադրանք, որոնց միամտաբար կուլ գնացին ադրբեջանցիները: Վերջին հիմնավորումը վերաբերում է հատկապես 1988թ. Մուսգայիթի և Կիրովաբադի ջարդերին:

- *1992թ. Խոջալուի դեպքերն իբրև հայկական զինվորականության կողմից միտումնավոր սպանություն և ուրեմն՝ «ցեղասպանություն» ներկայացնելը:*

Խոջալուի դեպքերի խեղաթյուրված պատկերումն ադրբեջանական ինֆորմացիոնային առանցքային թեմաներից է: Ադրբեջանական գրեթե բոլոր կայքերը, այդ թվում՝ պետական մարմինների պաշտոնական կայքերը, առանձին բաժիններ ունեն, որտեղ իրադարձությունների վերաբերյալ ադրբեջանական կողմին նպատակահարմար տեղեկատվություն է տրվում: Մասնավորապես, Ադրբեջանի նախագահի պաշտոն-

նական կայքում, «Արյունալի հիշողություն» խորագրի ներքո, Խոջալուի դեպքերը որակվում են որպես «խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանություն», այնուհետև մանրամասն նշվում է զոհերի, վիրավորների «պաշտոնական» թվաքանակը, ինչպես նաև պատճառված նյութական վնասի չափը: Այս թեմայի շուրջ իրականացվում են աշխարհին «իրականությունը» ներկայացնելուն ուղղված հետևողական քայլեր, հրատարակվում են բազմաթիվ հոդվածներ, գրքեր, որոնց շնորհանդեսները կազմակերպվում են տարբեր երկրներում և տարածվում են ծանրակշիռ միջազգային կառույցներում, աշխարհի գրադարաններում և երկրների ղեկավարների շրջանում (տե՛ս վերը): Դրանց շարքը 2009թ. համալրվել է ևս մեկով՝ անգլերենով հրատարակված «Խոջալուի ցեղասպանությունը» գրքով (հեղինակել են Միլի մեջլիսի պատգամավորներ Հավա Մամեդովան և Գանիրա Փաշանան), որն իբր հիմնված է «իրական փաստերի» և ականատեսների «վկայությունների» վրա<sup>1</sup>: Աղբբեջանն այս գործում ջանում է ընդգրկել նաև օտարազգի հեղինակներին: Օրինակ, Յուրի Պոմպեևը «Ղարաբաղի արյունալի հորձանուտը» գրքում հավաքագրել և ամփոփել է հայ-աղբբեջանական հակամարտության մասին «օբյեկտիվ» աղբբեջանական տեղեկատվությունը: Այդ անձնավորությունն ավանդաբար հանդես է գալիս նաև Խոջալուի դեպքերին նվիրված՝ Հեյդար Ալիևի հիմնադրամի կողմից կազմակերպվող ամենամյա միջոցառումներին:

Այս բոլոր թեմատիկ ուղղությունները ծառայում են ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվական հոսքերին հակակշիռ ստեղծելուն, այլև աղբբեջանցիների՝ որպես «զոհի կերպարի» ամրագրմանը և հայերից «թշնամու կերպարի» կերտմանը<sup>2</sup>:

***Թեմա 5. Այլ ժողովուրդների դեմ «կատարած հանցանքներում» Հայությանն ուղղված մեղադրանքներ, համատարած թուրքատյացության և հակասեմիթիզմի վերագրում, «միջազգային հայկական սպառնալիքի» ինֆլուոզեմ***

Այս թեմատիկայի շրջանակներում հայերին վերագրվում են տարածաշրջանի ժողովուրդների, այդ թվում՝ հրեաների ու ռուսների նկատմամբ իրականացված հանցանքներ կամ կոտորածներ: Հատկապես

<sup>1</sup> <http://news-ru.trend.az/karabakh/1426397.html>

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Գլուխ 3:

առանձնանում են Հայությանը հակասեմիթականության մեջ մեղադրելը և Հայաստանից ու Հայ Առաքելական եկեղեցուց պատմականորեն «միջազգային ահաբեկչական էթնոկորպորացիա» կերտելու ջանքերը: Իսկ արդեն ներկայիս իրողություններում ՀՀ-ին և ԼՂՀ-ին են վերագրվում ահաբեկչության, թմրաբիզնեսի, թրաֆիքինգի և այլ միջազգային հանցավոր ցանցերի հետ կապող «տեղեկություններ»: Այս ամենի նպատակն է ՀՀ-ն, ԼՂՀ-ն և Հայությանը որպես միջազգային սպառնալիք ներկայացնելը:

Բացի այդ, աղբբեջանական կողմը, Թուրքիայի հետ համատեղ, հաճախ առասպելականացնում է հակաթուրքականությունը հայերի շրջանում: Այդ առումով բնորոշ է, օրինակ, 2002թ. Բաքվում լույս տեսած 11-րդ դասարանի պատմության դասագրքում տեղ գտած հետևյալ ձևակերպումը. «Դժվար է պատկերացնել, թե որքան են հայերն ատում թուրքերին: Հայերը «Սթինգեր» հրթիռով խփել են Հայաստանում 1988թ. երկրաշարժից տուժածներին օգնության շտապող «Իլ-76»-ը, ինչպես նաև սխալմամբ թուրքական համարված հարավսլավական ինքնաթիռը»<sup>1</sup>: Մինչդեռ հայտնի է, որ 88-ի երկրաշարժից տուժածներին օգնություն բերող հարավսլավական օդանավը վթարի հետևանքով է կործանվել, ինչի առիթով կանգնեցվել է հուշարձան, իսկ թուրքական ինքնաթիռի մասին պատումն ամբողջովին հորինվածք է: Նման պատումներն առնվազն տարօրինակ են հատկապես երկրաշարժից հետո Աղբբեջանից Հայաստան ժամանող գնացքին ամրացված «*Поздравляем!*» ուղերձի և այն «շնորհավորական» բացիկների համատեքստում, որ Բաքվից ստանում էին աղբբեջանցի ծանոթներ ունեցող հայ ընտանիքները:

Աղբբեջանցիների հանդեպ գործած «վայրագությունների» մասին առասպելները շարունակում են հյուսվել, տեղեկատվական դաշտը լի է հայերին վերագրվող ավերածությունների, թալանի, հրկիզումների, բռնությունների (հատկապես երեխաների և կանանց նկատմամբ) նկարագրություններով: Սրանց շարքին է պատկանում, օրինակ, «Կապանի խողովակի» մասին առասպելը, որի համաձայն՝ «հայերը Կապանում խողովակի մեջ փակել են աղբբեջանցի երեխաներին և այն գողել 2 կողմից»: Ծանր հուզականությամբ հագեցած այս նկարագրություններն

---

<sup>1</sup> *Հ. Դեմոյան*, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», էջ 71, [http://www.noravank.am/file/article/76\\_am.pdf](http://www.noravank.am/file/article/76_am.pdf)



ուղեկցվում են հայերին տրվող պիտակավորումներով, ինչպիսիք են, օրինակ, «ագրեսորներ», «շովինիստներ» և այլն: Այս ամենը միտված է հատկապես երիտասարդ սերնդին ռազմատենչության, ռևանշի և հայա-տյացության ոգով դաստիարակելուն<sup>1</sup>:

***Թեմա 6. Հայ ժողովրդի բարոյահոգեբանական նկարագրի և արժեհամակարգի խեղաթյուրումը***

Այս թեման, շարունակելով նախորդների տրամաբանությունը, նաև ատանձին ճյուղավորում ունի: Հայ ժողովրդի բարոյահոգեբանական, սոցիալ-արժեքային նկարագրի խեղաթյուրման նպատակով աշխարհի ցանկացած ծայրում հայկական ծագումով որևէ մեկի կատարած մանր դրամաշորթությունն անգամ լուսաբանվում է ընդգծված էթնիկական տեսանկյունից: Մինևույն տեղեկատվական գործողությունն իրականացվում է նաև պատմական դիսկուրսում՝ հայ գործիչներին վարկաբեկելով, իսկ ռազմական հերոսներին պարտվածի բնութագիր հաղորդելով<sup>2</sup>:

***Թեմա 7. ՀՀ-ում և ԼՂՀ-ում առկա ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների շահարկում և մտացածին խնդիրների վերագրում***

ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը մշտապես գտնվում է ադրբեջանցի պրոպագանդիստների ուշադրության կենտրոնում, և նրանք շատ օպերատիվ են արձագանքում մեր ներքին զարգացումներին և հատկապես իշխանությանն ուղղված քննադատություններին: ՀՀ-ն ներկայացվում է որպես քայքայված տնտեսություն ունեցող, ինքնամեկուսացման քաղաքականություն վարող երկիր, որի ապագան շատ մշուշոտ է: Ադրբեջանական «վերլուծաբանները» հանգում են այն եզրակացության, որ ՀՀ և ԼՂՀ տնտեսական իրավիճակն ավելի է ծանրանալու և դառնալու է բնակչության տոտալ արտագաղթի պատճառ<sup>3</sup>: Փոխարենն Ադրբեջանը ներկայացվում է որպես բարգավաճ, օրեցօր հզորացող երկիր:

<sup>1</sup> *Գագիկ Տեր-Հարությունյան*, «Տեղեկատվական պատերազմները և ԼՂՀ-ն», <http://www.noravank.am/am/?page=analitics&nid=1243>

<sup>2</sup> *Կարեն Վրթանեսյան*, «Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը», «Գլոբուս. Ազգային անվտանգություն», #2 (6) (Inf), Երևան, 2009:

<sup>3</sup> «Армяне бегут из Карабаха», 2009.07.08, <http://vesti.az/news.php?id=10385>

**Թեմա 8. Հայկական բանակի խնդիրների շահարկում,  
վարկաբեկող ինֆորմացիաների տարածում**

Աղբբեջանական տեղեկատվական տիրույթում առանձին տեղ են գրավում հայկական զինված ուժերը վարկաբեկող, դրանք բարոյալքված և անմարտունակ ներկայացնող լուրերը: Այս թեմայի շրջանակներում աղբբեջանական տեղեկատվական դաշտում պարբերաբար շրջանառվում է ապատեղեկատվություն «հայ զինծառայողների կամավոր հանձնվելու» վերաբերյալ, որոնք «պատմում են տեղում տիրող ծանր իրավիճակի մասին, չեն ցանկանում վերադառնալ հայրենիք և պահանջում են իրենց հանձնել որևէ երրորդ երկրի»: Հայ զինվորների «կամավոր հանձնվելու» առասպելը վերջին ժամանակներում աղբբեջանցիները մատուցում են ոչ միայն որպես «ղեղովչինայի» կամ «հայաստանցիների և դարաբաղցիների» միջև «հակասությունների» հետևանք: Այսօր բավական ակտիվ տարածվում է այն գաղափարը, որ Հայաստանի ծանր տնտեսական իրավիճակը հանգեցնում է նրան, որ հայկական բանակում տիրում են սովը և ավերածությունը, ինչը ստիպում է զինվորներին փնտրել փրկություն բարեկեցիկ Աղբբեջանի տարածքում: Այս ամենն ուղեկցվում է աղբբեջանական բանակի հզորացման մասին վկայող տեղեկություններով:

Բանակային թեմայի արծարծումը մի կողմից ուղղված է ներքին դաշտում սեփական բանակի նկատմամբ վստահություն ներշնչելուն, մյուս կողմից՝ հայկական ՁՈՒ-ի վարկաբեկմանը և պարտավորական տրամադրությունների տարածմանը:

\*\*\*

Դիտարկելով վերոնշյալ թեմատիկ հաղորդագրություններում առկա ընդհանրությունները՝ նկատում ենք, որ աղբբեջանական քարոզչամեքենան հակահայկական տեքստերում կիրառում է հիմնականում 4 մեխանիզմ.

- *հայ-թուրքական տեղեկատվական հարաբերություններում հայկական կողմի ձեռնարկած և հաջողված տեղեկատվական գործողությունների հայելային արտատպման,*
- *թուրք-աղբբեջանական կողմին առնչվող խոցելի կետերի և բացասական տեղեկատվության ուղղակի պրոյեկտման,*
- *հակասեմիթականության սխեմաների հակահայկական ուղղվածությամբ կիրառման,*
- *«հակառասիստական ռասիզմի» սկզբունքի կիրառման:*

Հայելային արտատպման ամենավառ օրինակ է ներկայումս լայն շրջանառության մեջ դրված «Արևմտյան Աղբբեջան» նմանակված հասկացությունը (հիշենք Արևմտյան Հայաստանը), որի տակ ենթադրվում են ոչ միայն ԼՂՀ, այլև արդի ՀՀ և որոշ չափով Վրաստանի տարածքները: *Ուղղակի պրոյեկտման* արդյունք է ոչ միայն ցեղասպանության վերագրումը հայկական կողմին, այլև Հայ Առաքելական եկեղեցուն իսլամական աշխարհում առկա ծայրահեղական ահաբեկչական հոսանքների նպատակների և գործունեության մեջ մեղադրելը:

Հայելային արտատպման մեխանիզմով թուրք-աղբբեջանական համատեղ քարոզչությունը սիմետրիկ պատասխան է տալիս Հայոց ցեղասպանության թեմայով բոլոր հայկական տեղեկատվական հոսքերին՝ միաժամանակ ուղղակիորեն պրոյեկտելով թուրք-աղբբեջանական հայտնի խնդիրները և կնճռոտ իրադարձությունները հայկական կողմի վրա:

*Հակասեմիթականության սխեմաները* կիրառվում են կրկին հիմնականում Ցեղասպանությանն առնչվող թեմաներում, ինչպես նաև Հայության արժեհամակարգի, հայ մարդու բարոյական կերպարի վարկաբեկման հարցերում: Նույն սկզբունքով, ինչով որ հակասեմիթները մեղադրում են հրեա ժողովրդին սեփական նպատակներին հասնելու համար Հոլոքոստի «առասպելի» հորինման, դրա հրահրման կամ կազմակերպման մեջ, այնպես էլ աղբբեջանա-թուրքական քարոզիչները հայերին մեղադրում են իրենց նկատմամբ կոտորածների «առասպելների» ստեղծման, հրահրման կամ էլ կազմակերպման մեջ: Լայնորեն կիրառվում են նաև հակասեմիթական պիտակավորման ձևերը («նենգ», «դավաճան», «ագահ», «խաբեբա») հայերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է *«հակառասիստական ռասիզմի» սկզբունքի* կիրառմանը, ապա այն դրսևորվում է Հայությանը հակաթուրքականության և հակասեմիթականության մեջ մեղադրանքների հիման վրա հակահայկականության տարածման ձևով: Այնպես, ինչպես սպիտակամորթների նկատմամբ ռասիզմը հիմնավորվում է վերջիններիս ռասիզմով սևամորթների նկատմամբ, որը, ըստ էության, նույն ռասիզմն է, այդպես էլ աղբբեջանա-թուրքական հակահայկականությունը փորձում է հիմնավորել սեփական հայատյացությունը Հայությանը համատարած թուրքատյացություն և հակասեմիթականություն վերագրելով:

Բոլոր վերոնշյալ թեմատիկ հաղորդագրություններում ծանրակշիռ

մաս են կազմում **պատմական, իրավական, կրոնական-մշակութային ու առօրեականության դիսկուրսի ձևերը**: Դրանք բոլորը միավորվում են իրենց առանցքային՝ հակահայկականության տարածման նպատակի շուրջ: Ընդհանուր առմամբ դրանցում առավել հաճախ հանդիպում են **տրամաբանական սխալների** և **սեմանտիկ մանիպուլյացիաների մեթոդների** վրա հիմնված տեքստային ազդեցության այնպիսի հնարքներ, ինչպիսիք են՝

- *պարզ ապատեղեկատվության, կեղծիքի, ինֆորմացիոն պնդումը,*
- *ճշմարտանման ստերի կիրառումը,*
- *չափազանցությունը կամ ծայրահեղացումը,*
- *կես-ճշմարտությունների կամ ընտրովի ինֆորմացիայի մատուցումը,*
- *հակագիտական ինդուկցիան՝ անհիմն կերպով մասնավորից ընդհանրացումը,*
- *ասիմետրիկ համեմատությունների անցկացումը,*
- *արքետիպային ու կարծրատիպային պիտակների ամրակցումը, ծաղրը, հեզնանքը, բացասական հատկանիշների վերագրումը,*
- *«մութ էջերի բացահայտումը»<sup>1</sup>:*

## **5. Լսարան**

Տեղեկատվական գործողության արդյունավետությունը կապված է լսարանի քաղաքակրթական, կրոնական և մշակութային առանձնահատկությունների հետ: Այս իմաստով աղբբեջանական տեղեկատվական-քարոզչական նախաձեռնությունները հստակ *տարանջատում են թիրախային լսարանները* և դրանց ուղղված *հաղորդագրությունների դիսկուրսը*: Այսպիսով, իրագործվում է առանձին *լսարաններին համապատասխան դիֆերենցիված մոտեցում*:

- իսլամական հանրություններում Հայաստանը ներկայացվում է իբրև ահաբեկչական քրիստոնեական պետություն կամ համաշխարհային սիոնիզմի ու քրիստոնեական պետությունների կամակատար,
- հրեաների շրջաններում՝ իբրև հակասեմիթական երկիր,
- արևմտյան երկրներում՝ իբրև հակաժողովրդավարական տարր և տարածաշրջանային զարգացման արգելակ,

<sup>1</sup> Նշված հնարքների կոնկրետ կիրառումը աղբբեջանական ՁԼՄ-ում դիտարկվում է հաջորդ գլխում:

- միջազգային կառույցներում Աղբբեջանը սեփական պահանջները բխեցնում է իբր միջազգային իրավական նորմերին դրանց լիարժեք համապատասխանությունից,
- իսկ սեփական հանրության ներսում՝ նաև պատմամշակութային կեղծ հիմնավորումներից և ձևավորվող «թշնամի հայի» կերպարի նկատմամբ ունանալիստական նկրտումներից:

### **6. Հիմնանպատակ**

Աղբբեջանական տեղեկատվական գործողությունների հիմնանպատակներն են.

1. *Հայաստանին և Հայությանն առնչվող հոգևոր, մշակութային և նյութական արժեքների նսեմացումը, «ոչնչացումը»՝ ի հակադրություն աղբբեջանականի բարձրացման, արժևորման և համաշխարհայնացման,*
2. *Հայության բարոյալքումը, պարտվողականության զգացման ձևավորումը, թուլացումը՝ ի հակադրություն ընդհանուր թշնամու (հայերի) նկատմամբ աղբբեջանցիների միասնականության և ունանշիզմի ձգտման ձևավորման:*

Առաջինն ավելի լայն ուղղորդում ունի և միտված է բոլոր թիրախային լսարանների, այդ թվում Հայության շրջանում *վարկաբեկման ու անմարդկային հանցանքների մեջ մեղադրանքի* մեխանիզմների կիրառմամբ համապատասխան դիրքորոշումների ձևավորմանը: Թեև հայկական լսարանի վրա դրա ազդեցության արդյունավետությունն ավելի քան վիճելի է, այն միտված է Հայության մեջ *թերարժեքություն ձևավորելուն*, ինչը նաև հիմք է երկրորդ հիմնանպատակի համար: Երկրորդի ուղղվածությունը կոնկրետ դեպի հայկական և աղբբեջանական լսարաններն են: Այս դեպքում կիրառվում են ոչ միայն Հայության *նսեմացման ու մեղադրանքի*, այլև *պատերազմի վերսկսման և շրջափակման միջոցով ՀՀ-ն և ԼՂՀ-ն տնտեսապես «ջնջահեղձ» անելու սպառնալիքի*, ինչպես նաև *Հայության մեջ ծագումնաբանական կամ այլ տարբերակումների ներուժմամբ՝ ջլատման-պառակտման* մեխանիզմները: Այն, ինչ հայկական լսարաններում աշխատում է իբրև պարտվողականության ձևավորման և բարոյալքման գործոն, աղբբեջանական հանրությունում առաջացնում է հպարտության զգացում և հավատ «Հայության դեմ» հաղթանակի նկատմամբ:

Հայերի հանցավոր գործունեության հետևանք է  
8 մլն մարդու բնաջնջումը Եգիպտոսում...  
*«Право выбора», 6 հունիսի 2006թ., Բարու*

### ԳԼՈՒԽ 3

#### «ԹՇՆԱՄԻ ՀԱՅԻ» ԿԵՐՊԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԴԻԱՏԱՐԱԾՔՈՒՄ

Մարդու գիտակցությունը շրջակա աշխարհին ընկալում է պատկերների միջոցով, որոնք միշտ չէ, որ համարժեք են արտացոլում օբյեկտիվ իրականությունը, բայց հիմնականում բնորոշում են նրա վարքագիծը: Ուստի, մարդու գիտակցության մեջ կերպարներ ձևավորելով, կարելի է նպատակաուղղված ներգործել նրա հետագա վարքագծի վրա:

Միջխմբային կամ միջպետական հարաբերություններում լարվածության առաջացման գործընթացում, հատկապես զինված հակամարտության նախապատրաստական շրջանում և դրա ընթացքում, պետության ու հասարակության կողմից սեփական բնակչությանն ուղղված քարոզչական և գաղափարաբանական մշակման առանցքային գործընթացներից է հանդիսանում թշնամու հեշտ ճանաչվող կերպարի ստեղծումը: Հանրությունում այդ կերպարի ձևավորման, տարածման և կայուն պահպանման դինամիկան զգալի չափով կախված է՝

- հակառակորդի (ընկալման օբյեկտի) տեսակից ու բնութագրիչներից,
- այն միջավայրի (հանրության) իրավիճակից ու բնութագրիչներից, որում տարածվում է կերպարը (թշնամու կերպարի ընկալման սուբյեկտ),
- հակամարտող կողմերի փոխհարաբերությունների առանձնահատկությունից:

Թշնամու կերպարի ձևավորումը, որպես կանոն, կատարվում է հետևողականորեն և ինտենսիվորեն, երկարատև ժամանակաշրջանում, տեղեկատվական ներգործության կենտրոնացմամբ՝ քաղաքական և գաղափարաբանական մանիպուլացման մեթոդների լայն կիրառմամբ:

Այս բաժնում կոնկրետ օրինակների հիման վրա կներկայացվեն ադրբեջանական ՁԼՄ-ում թշնամի հայի կերպարի ստեղծման հիմնական ուղղությունները և տեխնոլոգիաները, այդ գործընթացի գաղափարախոսական և հոգեբանական ներգործության միջոցներն ու եղանակները:

Ադրբեջանական հանրությունում «թշնամի հայի» կերպարի ձևավորման գործում հիմնական խնդիրը հակառակորդի վերացական ընկալումից անցումն է բարոյահոգեբանական պատրաստության վիճակի նրան ոչնչացնելուն կամ, առնվազն, բացասական ներգործությունը (իրական կամ կարծեցյալ) շարունակելու մեջ, նրա վնասազերծելուն ուղղված գործողությունների իրականացման համար:

«Թշնամի հայի» կերպարի ստեղծումը զգալիորեն պարզեցվում է, քանի որ մինչև ադրբեջանական հասարակության մեջ նրա ակտիվ ձևավորման սկիզբը՝ հայերի վերաբերյալ արդեն կային լայնորեն տարածված բացասական կարծրատիպեր: Դրանք իրենց էությամբ չափազանցված կամ, ընդհակառակը, պարզունակացված ընդհանրացումներ են, համոզմունքներ՝ կապված հայերի վերաբերյալ սոցիալ-հոգեբանական և բարոյաէթիկական բնութագրերի բացասական պատկերացումների հետ:

Կարծրատիպերը, լինելով նախապես ընդունված համոզմունքների և նպատակադրումների համակարգ, չեն ձևավորվում սոցիալական փորձի միջոցով, այլ փոխանցվում են տեղեկատվության միջոցով: Ուստի, թշնամի հայի կերպարի ձևավորումը ադրբեջանական հասարակության մեջ տիրող բացասական կարծրատիպերի առկայության պարագայում հեշտացվում է, քանի որ դրանք ձևավորվում և պահպանվում են առաջին հերթին ՁԼՄ-ի կողմից: Այս գործընթացին նպաստում է նաև այն իրողությունը, որ հայ և ադրբեջանական հասարակությունները երկար ժամանակ զրկված են (կամ էապես սահմանափակված են) անմիջական միջանձնային շփումից:

Վերոնշյալ խնդիրները գործնական հարթությունում դիտարկելու նպատակով ուսումնասիրվել են ադրբեջանական երեք ինտերնետ-հրատարակությունների հրապարակումները՝ «Зеркало» թերթը, «Право выбора» ինտերնետ-թերթը, և «Region plus» ամսագիրը 2006թ. սեպտեմբերի 1-

ից մինչև 2007թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաընթացքում: Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այս շրջանում նախագահական ընտրություններին, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Ադրբեջանում, դեռ բավական երկար ժամանակ կար, իսկ ԼՂՀ շուրջ բանակցային գործընթացն ընթանում էր աշխատանքային հունով՝ չընդհատվելով աղակալի նախընտրական քարոզարշավներով, որոնք, որպես կանոն, Ադրբեջանում ուղեկցվում են ՀՀ և ԼՂՀ հայերի հասցեին կոշտ հայտարարություններով, որոնք ուղղված են հիմնականում ներքին լսարանին: Այսինքն՝ ընտրված ժամանակահատվածը ադրբեջանական ԶԼՄ-ի աշխատանքի տեսանկյունից սովորական և բնականոն կարելի է համարել:

### **3.1 Վիճակագրական տվյալներ**

«Зеркало» թերթը լույս է տեսնում շաբաթը հինգ անգամ, 8000 տպաքանակով, ունի ընդլայնված շաբաթօրյա համար: Գլխավոր խմբագիրն է Էլչին Շիխլինսկին<sup>1</sup>: Ինտերնետ-հասցեն է՝ <http://www.zerkalo.az>:

«Право выбора» ինտերնետ-թերթը նույնանուն ՀԿ-ի ինտերնետ հրատարակությունն է: ՀԿ-ի ղեկավարը և թերթի գլխավոր խմբագիրն է Իսկենդեր Գուլիևը: «Право выбора» ՀԿ-ն հետևում է հասարակական-քաղաքական և սոցիալ-մշակութային իրադարձություններին, ընտրական գործընթացներին ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հարավային Կովկասում: Նյութերը և հոդվածները գետեղվում են ամենամայա 16 էջանոց համանուն «Право выбора» թերթում և կազմակերպության կայքէջում ([www.dem.az](http://www.dem.az)):

“Region plus” ամսագրի գլխավոր խմբագիրը Գ.Նազարովան է: Ամսագիրը հրատարակվում է ռուսերեն, ադրբեջաներեն և անգլերեն, ամիսը երկու անգամ, տարածվում է ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Ռուսաստանի, Վրաստանի և տարածաշրջանի այլ երկրներում, ինչպես նաև միջազգային օդուղիներում: Ամսագրի բաժանորդներ են նախարարություններ և գերատեսչություններ, տեղական և օտարերկրյա ընկերություններ, դիվանագիտական ներկայացուցչություններ, ֆինանսական ինստիտուտներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն<sup>2</sup>:

Հետազոտության ընթացքում մշակված հոդվածների վիճակագրությունը ներկայացված է *Աղյուսակ 1-ում*:

<sup>1</sup> Տեղեկատվությունը՝ [www.media.aznet.org](http://www.media.aznet.org) կայքից:

<sup>2</sup> <http://www.regionplus.az>



Աղյուսակ 1

	Հոդվածների ընդհանուր թիվը	Վերաբերել են ՀՀ-ին և ԼՂՀ-ին		
		Ընդամենը (ընդհանուր թվի %)	որոնցից	
			ՀՀ-ի մասին	ԼՂՀ-ի մասին
«Зеркало»	7 300	1 075 (14,7%)	416 (38,7%)	659 (61,3%)
«Право выбора»	1 520	342 (22,5%)	99 (28,9%)	243 (71,1%)
“Region plus”	431	114 (26,5%)	65 (57,0%)	49 (43,0%)

Պատկերը փոքր-ինչ կփոխվի, եթե նշված ուղղվածության նյութերի քանակությունը համադրենք հոդվածների այն քանակության հետ, որոնք զետեղված են հասարակական-քաղաքական, ռազմական և սոցիալական հարցերին նվիրված մշտական խորագրերի ներքո, որոնք են.

- «Зеркало» թերթում՝ «Հիմնական թեմա», «Նորություններ», «Քաղաքականություն», «Աշխարհում», «Բանակային հայելի»;
- «Право выбора» թերթում՝ գրեթե բոլոր հոդվածները, ներկայացված «Աշխարհաքաղաքականություն», «Հարցազրույց», «Աշխարհ», «Կրոն», «Երկիր» և «Ղարաբաղ» խորագրերի ներքո;
- “Region plus” ամսագրում՝ «Քաղաքականություն», «Հասարակություն», «Հարցազրույց» (այդ մոտեցմամբ կատարված վիճակագրությունը ներկայացված է *Աղյուսակ 2-ում*):

Աղյուսակ 2

	Ընդհանուր հոդվածների թիվը խորագրերում	Վերաբերել են ՀՀ-ին և ԼՂՀ-ին	%
«Зеркало»	4 165	915	22,0
«Право выбора»	1520	342	22,5
“Region plus”	245	87	35,5

Դիտարկվող ժամանակահատվածում հոդվածների թիվը «Зеркало» թերթում համարից համար տատանվել է 261-ից (2007թ. մարտ) մինչև 446-ի (2007թ. օգոստոս) սահմաններում: Սակայն ՀՀ-ին և ԼՂՀ-ին առնչվող հոդվածների բաժինը, թեև կախված է եղել հիշարժան օրերից, իրադարձություններից, հասարակական-քաղաքական միջոցառումներից և ԼՂՀ խնդրի կարգավորման շուրջ բանակցությունների ինտենսիվությունից, այնուամենայնիվ, համեմատաբար կայուն է եղել՝ 17,8%-ից (2007թ. մայիս) մինչև 29,5%-ի (2007թ. փետրվար) սահմաններում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում «Зеркало» թերթի 240 համարներում հրապարակվել է ՀՀ-ին, ԼՂՀ-ին և հայկական Սփյուռքին վերաբերող 915 հոդված, որոնցից 615-ն ուղղակիորեն նվիրված էին այդ թեմաներին: Այսինքն՝ յուրաքանչյուր համարում միջինը 3,8 հոդվածում նրանք հիշատակվել են այս կամ այն համատեքստում և այս կամ այն ծավալով, ընդ որում՝ ուղղակիորեն դրանց նվիրված է եղել միջինը 2,6 հոդված:

“Region plus” ամսագրում 87 հոդվածից 48-ը նվիրված է եղել ՀՀ-ին, ԼՂՀ-ին, հայկական Սփյուռքին, յուրաքանչյուր համարում դրանք հիշատակվել են միջինը 3,8 հոդվածում, իսկ 2,1-ն ուղղակիորեն նվիրված է եղել դրանց:

### **3.2 ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ**

«Зеркало»-ում և “Region plus”-ում գետեղված նյութերի մոտ 70-80%-ը և «Право выбора»-ի հոդվածների մոտ 50%-ը, որոնք վերաբերում են ՀՀ-ին և ԼՂՀ-ին, նվիրված են եղել ԼՂՀ հակամարտության լուծման բանակցային գործընթացին: Դրանց հիմնական գաղափարախոսական նպատակն էր ընթերցողին հասցնել այն դրույթը, թե «Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է», թե «միջազգային հանրությունը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը», իսկ մանիպուլյատիվ միջոցն էր այդ հայտարարությունները մշտապես կրկնելը՝ մինևս այն շաբլոնները, բառերն ու նախադասությունները կիրառելով. դա ընթերցողի մոտ պահանջվող նախադրյալները ձևավորելու և ամրապնդելու արդյունավետ տեխնոլոգիաներից մեկն է:

Համառ կրկնություններին զուգահեռ՝ Ադրբեջանի ԶԼՄ-ն լայնորեն կիրառել են նաև մանիպուլյատիվ տեխնոլոգիաների այլ հնարքներ.

**«Մանիպուլյատիվ իմաստաբանություն (սեմանտիկա)».** Ընթերցողի մոտ բացասական զգացողություններ առաջացնող բառերը փոխարինվում էին ավելի բարեհունչ կամ չեզոք հոմանիշներով: Օրինակ, «Ղարաբաղում պատերազմի վերսկսման» փոխարեն հաճախ օգտագործվում է «այլ եղանակներով տարածքային ամբողջականության վերականգնում»-ը, ինչը թեև պատերազմ ենթադրում է, այսինքն՝ զոհեր և զրկանքներ, բայց ուղղակիորեն դրանց հետ չի ասոցիացվում:

Միևնույն ժամանակ, «պատերազմ» բառն ադրբեջանական ԶԼՄ-ում օգտագործվում է հասարակությունում հայերի պերմանենտ զոհը լինելու մտքի ձևավորման համար. պարբերաբար հայտարարություններ են շրջանառվում այն մասին, թե «հայերը մեզ պատերազմ են հայտարարել...» այս կամ այն ոլորտում. «Էկոլոգիական» («Հրդեհների հետևանքները», *«Зеркало»*, 28 սեպտեմբերի 2006թ.), «տեղեկատվական» («Ռուսաստանը վերացրել է հունվարի 20-ի դեպքերին առնչվող արխիվները», *«Зеркало»*, 20 հունվարի 2007թ.), «Հայաստանի կեղտոտ տեղեկատվական պայքարը», *«Право выбора»*, 7 փետրվարի 2007թ.), իսկ *«Зеркало»*-ի 2007թ. հունվարի 23-ի համարում զետեղվել են հոդվածներ նման վերնագրերով, որոնք ազդարարում էին միանգամից երկու «պատերազմների» սկսման մասին. «Ինչպես երևում է, Հայաստանը մեզ լայնածավալ հաքերային պատերազմ է հայտարարում» և «Հայաստանը պատերազմ է հայտարարել Ադրբեջանի գենոֆոնդին»:

**«Անվիճելի պնդում».** Այս հնարքը սոցիալական պատկերացումների տեսության հեղինակներից մեկի՝ ֆրանսիացի հոգեբան և սոցիոլոգ Մերժ Մոսկովիչի կարծիքով, «ցանկացած խոսքում նշանակում է հրաժարում քննարկումից... Մա նշանակում է նաև խնդրանք լսարանին, ամբողջին՝ առանց քննարկման ընդունելու գաղափարն այնպես, ինչպես կա, առանց կշռադատելու «թեր» և «դեմ» կողմերը, և պատասխանել «այո»՝ առանց խորհելու»<sup>1</sup>:

Օրինակ, Խոջալու բնակավայրի իրադարձությունները ԼՂՀ 1992թ. մարտական ակտիվ գործողությունների ժամանակ ԶԼՄ-ում վիճարկում չընդունող մոտեցումով անվանվում են ադրբեջանական ժողովրդի ցեղասպանություն, թեև դրանց թեժ հետքերով անգամ ադրբեջանական մի

<sup>1</sup> С. Москвичи, Век толп, М., 1996г.

շարք աղբյուրներ, ներառյալ նաև այդ շրջանում Ադրբեջանի գործող նախագահ Այազ Մութալիբովը, հայտարարել էին, որ տեղի ունեցածը իշխանության ձգտող Ադրբեջանի Ժողովրդական ճակատի սադրանքն էր: Միննույն ժամանակ, Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում 1884-1923թթ. անվանվում է ոչ այլ կերպ, քան «այսպես կոչված ցեղասպանություն», «հորինված ցեղասպանություն», թեև այն պաշտոնապես ճանաչված է և դատապարտվում է, մասնավորապես, Եվրախորհրդի, Եվրախորհրդարանի, ՄԱԿ խորականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի, պատերազմի հանցագործությունների ՄԱԿ հանձնաժողովի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, երկու տասնյակ պետությունների (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Բելգիա, Շվեդիա, Նիդերլանդներ, Շվեյցարիա, Ռուսաստան, Լեհաստան, Լիտվա, Հունաստան, Սլովակիա, Կիպրոս, Լիբանան, Ուրուգվայ, Արգենտինա, Վենեսուելա, Չիլի, Կանադա, Վատիկան), ԱՄՆ 42 նահանգների կողմից:

**«Մեկուսացում».** Այս տեխնոլոգիան «մեկուսացնում» է ընթերցողին այլընտրանքային կարծիքից: Ադրբեջանի բոլոր լրատվամիջոցները գտնվում են պետության տոտալ վերահսկողության ներքո, և անհնար է գտնել մի նյութ, որը դրականորեն արձագանքի հայերի մասին և որևէ գրավիչ գիծ ենթադրի նրանց մեջ: Այսպես, ուսումնասիրվող երեք հրատարակություններն էլ ԼՂՀ-ում 2006թ. դիմակայության գծի երկայնքով ծագած հրդեհներն ակնթարթորեն վերագրեցին «նենգ հայերին»: Դատենք բերված մեջբերումներից.

**«Зеркало», 7 սեպտեմբերի 2006թ.**

*Ադրբեջանի գրայիյալ հոդերը մկրտվեցին կրակով*

«Դատելով ըստ ամենայնի, հայ ազրետորները մտադրվել են ոչնչացնել մեր երկրի բոլոր բնական հարստությունները...»:

**«Зеркало», 22 սեպտեմբերի 2006թ.**

*Հայերը ոչնչացնում են գրայիյալ տարածքների բուսական և կենդանական աշխարհը*

«Հայերը թանկ են գնահատում յուրաքանչյուր բույեն՝ ժամանակն օգտագործելով հօգուտ իրենց նպատակների և նորանոր պահանջ-

ներ առաջադրելով: Հրդեհներ սարքելով՝ նրանք փորձում են ազդել սահմանամերձ շրջանների բնակչության հոգեբանական վիճակի վրա: Շատ ափսոս, որ միջազգային մի շարք կազմակերպություններ անտարբերություն են ցուցաբերում: Պարզապես ծիծաղելի է հրդեհները շոգով բացատրելը»:

**«Право выбора», 7 սեպտեմբերի 2006թ.**

*Արբեջանը հույս ունի, որ ՄԱԿ-ը օբյեկտիվ կգտնվի*

«Միջազգային կառույցները հակված են դեպի մեր դիրքորոշումը հրկիզումների հարցում...»:

**«Право выбора», 22 սեպտեմբերի 2006թ.**

*Հայերը ոչնչացնում են գրավյալ տարածքների բուսական և կենդանական աշխարհը*

«Զավթիչները ջանում են հետ պահել հակամարտության լուծումը»:

**“Region plus”, №13, 1 սեպտեմբերի 2006թ.**

*Լավագույն պաշտպանությունը հարձակումն է*

«Թող հայերը բացատրեն միջազգային հանրությանը, թե ինչու են օկուպացված տարածքները վերածում խանձահողի՝ այդ բառի բուն իմաստով...»:

**“Region plus”, №24, 15 փետրվարի 2007թ.**

*Ամփոփելով արդյունքները*

«...Բաքվին, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի մակարդակով, հաջողվեց ուշադրություն գրավել հրկիզումների հանդեպ, որոնք իրականացրել է հայկական կողմը գրավյալ տարածքներում»:

Որպես կանոն, միաժամանակ օգտագործվում են մի քանի մանիպուլյատիվ հնարքներ: Օրինակ, դիմակայության գծի երկայնքով հրդեհների օրինակում, այլընտրանքային կարծիքի մեկուսացմանը զուգահեռ, կիրառվել են նաև «անհրաժեշտ ռակուրս», «մանիպուլյատիվ իմաստաբանություն», «շեշտադրման փոփոխություն», «մեկնաբանություններ հավելումներով» հնարքները:

**«Անհրաժեշտ ոսկուրս».** Այս տեխնոլոգիան ենթադրում է ընտրովի տեղեկատվությունը մատուցել անհրաժեշտ տեսանկյունից: Օրինակ, «*Право выбора*» թերթի՝ 2006թ. հրդեհների իրավիճակի լուսաբանմանը նվիրված տասը հոդվածներից հինգը վերաբերել են ՄԱԿ առաքելության այցին: Այցին նախորդող հոդվածներում (մասնավորապես, «Աղբբեջանը հույս ունի, որ ՄԱԿ-ը օբյեկտիվ կգտնվի», «*Право выбора*», 7 սեպտեմբերի 2006թ.) կարծիք էր հայտնվում այն մասին, որ «միջազգային կառույցները հակված են դեպի մեր դիրքորոշումը հրկիզումների հարցում»: Սակայն կապված այն բանի հետ, որ փորձագետների եզրակացությունում չկար Բաքվի համար նպաստավոր՝ միտումնավոր հրկիզումների մասին եզրահանգումը, այդ թեման միանգամից անհետացավ էլեկտրոնային ամսագրի էջերից և կրկին շրջանառության մեջ դրվեց հաջորդ «հրդեհավտանգ» սեզոնին՝ 2007թ. մայիսին:

**«Մանիպուլյատիվ իմաստաբանություն».** Այս հնարքի միջոցով իրականացվում է հասկացությունների նենգափոխում: Այսպես, «հրկիզում» բառը նշանակությամբ մոտ է «հրդեհ» բառին, սակայն դրանով նենգափոխելով բնական հրդեհները՝ աղբբեջանական ՁԼՄ-ը փաստորեն հայտարարում են միտումնավոր հանցավոր մտահղացման մասին:

**«Շեշտադրումների փոփոխություն».** Երբ հասկանալի դարձավ, որ Բաքուն չի ստանալու փորձագետների՝ իրեն անհրաժեշտ եզրակացությունը, «Հավանաբար, հայերը կրկին անազնիվ կվարվեն» («*Право выбора*», 9 հոկտեմբերի 2006թ.) հոդվածում հնչեց այն միտքը, թե նրանց եզրակացություններն այնքան էլ կարևոր չեն: «Չնայած այն բանին, որ դեռևս անհայտ է տարածաշրջանում աշխատող փորձագետների խմբի հանձնարարականների բովանդակությունը, չարժե դրանց իրականացման հետ կապված խնդիրներ ստեղծել: Հավանաբար, հայերն այստեղ էլ առիթը բաց չեն թողնի անազնիվ վարվելու: Հայերի նման վերաբերմունքը այս խնդրին պետք է գնահատվի որպես օկուպացված աղբբեջանական տարածքներում կատարվածին նրանց մասնակցության հաստատում»:

Այստեղ կիրառվել է նաև **պրեսուպոզիցիայի մեթոդը**. տեքստում ծածուկ կերպով դրվում է նախնական պնդում, թե իբր հայերը միշտ անազնիվ են վարվում», «և այստեղ ևս առիթը բաց չեն թողնի»:

Հրդեհներին նվիրված հոդվածների (9 հոդված «Зеркало»-ում, 14՝ «Право выбора»-ում, 2՝ “Region plus”-ում) ողջ իմաստը ոչ այնքան իրավիճակը հասկանալն է և էկոլոգիական աղետի նկատմամբ ուշադրություն գրավելը, որքան հայերին մերկապարանոց մեղադրելը:

**«Բոլորը մեկի նման».** ՀՀ-ին և ԼՂՀ-ին վերաբերող հարցերի շուրջ արբեջանական հասարակությունում այլընտրանքային կարծիք եթե երբեմն հնչում էլ է, ապա միայն նրա համար, որ այն համաժողովրդական դատապարտման ենթարկվի, հեղինակավոր ձևով ապացուցվի դրա չկայացածությունը և վնասակարությունը պետության ու հասարակության համար: Դա վառ կերպով ցուցադրեց 2006թ. հունիսին արբեջանցի մտավորականների ներկայացուցիչների խմբի՝ Ղարաբաղ և Հայաստան կատարած այցելության քննարկումը («Շոկ. Փոլադ Բյուլբյուլյուլին այցելել է Խանքենդի և Երևան»<sup>1</sup>; «Հասարակությունը դատապարտում է արբեջանական պատվիրակության այցը Ղարաբաղ»<sup>2</sup>): Հասարակության ներկայացուցչի մեկ դրական արձագանքին, թե նման հանդիպումների անցկացումն անհրաժեշտ է նաև հետագայում, հետևեցին բացասական և խիստ մերժողական, «հայրենասիրական» ոգով համակված տասնյակ հայտարարություններ և «մեղավորներին պատժելու և այսուհետ նման բան թույլ չտալու կոչեր: Այցելության արձագանքն այնքան կտրական էր, որ Փ.Բյուլբյուլյուլին ստիպված էր հրապարակավ արդարանալ («Ես ուրիշներից պակաս չեմ սիրում իմ հայրենիքը...»<sup>3</sup>):

Թեմայի նման մատուցումը պետք է ընթերցողին ներշնչի այն միտքը, որ բոլոր ազնիվ արբեջանցիները դեմ են նման այցերին, և նրանց նույնպես անհրաժեշտ է միանալ արդարացի մեծամասնության կարծիքին:

ԼՂՀ և ՀՀ ներկայացուցիչների հետ կապեր հաստատելու հարցում Բաքվի անպատրաստությունը և ցանկության բացակայությունը, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա ընկերությունների՝ Արբեջանում աշխատող ներկայացուցիչների մեջ հայկական արմատների մշտական փնտրտուքը ծառայում են Հայության կերպարի ապամարդկայնացմանը և դիվայնացմանը:

<sup>1</sup> «Зеркало», 29 июня 2007г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=19790&dd=29&mo=6&yr=2007>

<sup>2</sup> «Зеркало», 3 июля 2007г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=19964&dd=3&mo=7&yr=2007>

<sup>3</sup> «Зеркало», 4 июля, 2007г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=20037&dd=4&mo=7&yr=2007>

Հենց այս պատճառով էլ հայկական մարզական պատվիրակության ժամանումը Բաքու 2007թ., որին Ադրբեջանի իշխանությունները հարկադրված էին համաձայնել Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի պատժամիջոցների սպառնալիքի տակ, ընկալվեց որպես մի ինչ-որ արտառոց բան, և խիստ բացասական վերաբերմունքը նման երևույթների հանդեպ նախապես սկսեց սերմանվել տեղի ԶԼՄ-ի կողմից: Դիտարկենք հետևյալ հոդվածը:

***“Region plus”, №16, 15 հոկտեմբերի 2006թ.***

*Հայ ըմբշամարտիկները հանդես կգան Ադրբեջանում<sup>1</sup>  
(Հենց սրան ստիպված եղան դիմել մեր երկրի մարզական բուները,  
որպեսզի չկորցնեն 2007թ. ըմբշամարտի աշխարհի արտոնված  
առաջնության անցկացման իրավունքը)*

Երիտասարդության և սպորտի հարցերով նախարար Ազադ Ռահիմովը չի բացառում, որ հայերը կարող են և չգալ Բաքու: Բայց նա նշել է, որ եթե հայ մարզիկներից գոնե մեկը հաղթանակ տանի Բաքվի աշխարհի առաջնությունում, ապա բարձրացվելու է հայկական դրոշը և հնչելու է Հայաստանի օրհներգը: «Ես չեմ կարող հավատալ դրան: Մակայն եթե հայ մարզիկն այստեղ ոսկե մեդալ նվաճի, անշուշտ, կբարձրացվի հայկական դրոշն ու կհնչի հայկական օրհներգը: Այդպիսին են միջազգային մրցումների անցկացման կանոնները: Չարժե հույս փայփայել, թե հայ մարզիկները կհրաժարվեն Բաքվում անցկացվող աշխարհի առաջնությանը մասնակցելուց, թեկուզ և հանուն այն բանի, որ ադրբեջանցիներին սադրանքների հրահրեն և վարկաբեկեն Ադրբեջանը համաշխարհային հանրության աչքում: Այս առնչությամբ արժե խորհուրդ տալ հայրենական մարզասերներին ողջախոհություն հանդես բերել այն դեպքում, եթե հայ ըմբշամարտիկները գան մեր երկիր, և ձեռնպահ մնալ հայերի հետ հնարավոր հաշիվներ մաքրելուց, իսկ ադրբեջանցի ըմբշամարտիկներին թույլ չտալ, որ հայկական դրոշը բարձրացվի Հեյդար Ալիևի անվան մարզահամերգային համալիրում՝ հայկական օրհներգի ուղեկցությամբ: Իսկ դա նշանակում է, որ մեր մարզիկներն ամեն գնով պետք է հաղթանակ տանեն հայերի նկատմամբ, անգամ եթե պայքարն անզիջում լինի»:

---

<sup>1</sup> <http://www.regionplus.az/artic/16/sport/s1.php>



Այս առիթով նկատենք, որ ադրբեջանցիների այցելությունները Հայաստան, մասնավորապես՝ միջազգային գիտաժողովներին և կոնֆերանսներին մասնակցելու համար, վաղուց արդեն սովորական են դարձել:

**«Պիտակավորում».** Այս հնարքի ամենատարածված օրինակը ԼՂՀ հայերին անջատողական անվանելն է, ինչն արդեն սկզբնապես բացասական երանգ է պարունակում: «Մանիպուլյատիվ սեմանտիկայի» և «պիտակավորման» օրինակներից է նաև Ադրբեջանի ՋԼՄ-ի կողմից այսպես կոչված «*ХАЙИЗМ*» նորաբանության հայտնագործությունը: Այն պետք է խորհրդանշի «համահայկական գաղափարախոսությունն ու հոգեբանությունը» և նպաստի հայ ժողովրդի բոլոր ներկայացուցիչների հանդեպ բացասական վերաբերմունքի կարծրատիպացման օգտին: Այդ համատեքստում դիտարկենք հետևյալ հոդվածները.

**«Зеркало», 22 սեպտեմբերի 2006թ.**

*Հայերը «հավերժացնում» են իրենց կենդանի գեներալի<sup>1</sup> հիշատակը  
և ոչ թե մեկ ուրիշ տեղում, այլ հարևան Վրաստանում*

«...Հարկ է նշել, որ ութմետրանոց արձանը կվերածվի Վրաստանի անջատողական հայերի զանգվածային պաշտամունքի վայրի: Վրաստանը, ինչպես և Ադրբեջանն անզգուշություն ունեցավ ապաստան տալու «հին հայերին»: Նկատի ունենալով մեր դառը դարաբաղյան փորձը՝ այս պատվանդանի (արձանի) մոտ տեղի կունենան քաղաքական գործողություններ՝ հուզավառված կատաղի անջատողականության աշխարհայացքով: Իսկ սա հերթական բուն ռուսական հայության մարտահրավերն է վրացական պետականությանը...»:

**«Зеркало», 23 հունվարի 2007թ.**

*Ինչպես երևում է, Հայաստանը մեզ ծավալուն հաքերային  
պատերազմ է հայտարարում*

*(Հանրային հեռուստատեսության կայքը կաթվածահար է արվել)*

Այստեղ ինձ թույլ կտամ մի փոքր շեղվել և նշել, որ սույն տեքստը պարունակում է քերականական մի սխալ: Ոչ մեծ, բայց բնութագրական մեծն ռուսաց լեզվից օգտվելու *хайизм*-ի մաներայնությանը, որը մենք՝ անբարյացակամ հարևաններս, ոչ մի կերպ հիմնավորապես

<sup>1</sup> Խոսքը ՀՀ ՁՈւ Գլխավոր շտաբի նախկին պետ, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալտայանի մասին է, ում արձանը կանգնեցվել է իր ծննդավայր Ջավախքում:

չենք հաջողեցնում յուրացնել: Եվ սա՝ հակառակ այն բանի, որ հին Հայաստանն արիաբար կրում է մի փոքր ավելի քիչ հին Ռուսաստանի ֆորպոստը (իմա՝ վասալը) լինելու պատմական բեռը»:

«*Зеркало*»-ի և «*Право выбора*»-ի մի շարք հոդվածներում, կասկածի տակ առնելով «հայ ժողովուրդ» հասկացության առկայությունը, առաջարկվում է դրա փոխարեն օգտագործել «հայկական էթնոկորպորատիվ կազմակերպություն» տերմինը<sup>1</sup>:

**«Право выбора», 12 մարտի 2007թ.**

*Պե՛տք է արդյոք, որ մենք իմանանք, թե ով է մեր թշնամին (Ռուվչան Մուսթաֆան. «Ճիշտ չէ որպես թիրախ մատնանշել հայ ժողովրդին»)*

«Պե՛տք է արդյոք, որ մենք իմանանք, թե ով է մեր իսկական թշնամին: Ճիշտ չէ որպես թիրախ հայ ժողովրդին մատնանշելը, քանի որ նման հասկացություն գոյություն չունի: Մեր թիրախը պետք է լինի հայկական էթնոկորպորացիան, այսպես կոչված հայությունը, որը ցանցի ձևով տարածվել է ողջ աշխարհում և օգտագործում է արդի բոլոր տեխնոլոգիաները: Այս ուժը, այսինքն՝ հայ էթնոկորպորացիան, ինչպես նաև Իրանի որոշ գաղափարախոսական կենտրոններ, հանդես են գալիս գլոբալացման դեմ: Իսկ տարածաշրջանում ապրող ադրբեջանցիները, վրացիները, թուրքերը և հրեաները գլոբալացման առաջատար ուժերն են»:

**«Зеркало», 20 հունվարի 2007թ.**

*Կրքեր վիրտուալի շուրջ (Հայկական ԶԼՄ-ի կողմից պրոֆեսոր Ռուվչան Մուսթաֆանի «խիստ վնասակար և վտանգավոր» գնահատվող գիրքը վերահրատարակվել է Կրաստանում)*

«...Գրքում զգալի նյութ է հավաքված, որը ցույց է տալիս հայկական ահաբեկչական կազմակերպությունների գործողությունների մեթոդները, որոնք ստեղծված են մատրիցայի նման: Գիրքը նախատեսված է ոչ միայն մասնագետների, այլև ընթերցողների լայն շրջանակի համար... Աշխատանքում, ընդգրկուն արխիվային նյութի, փիլիսոփայական և աստվածաբանական գրականության, բնական գիտու-

---

<sup>1</sup> «Понятие «армянский народ» не существует», «Право выбора», 06 ноября 2006г.

թյունների հենքի վրա, դիտարկվում է վիրտուալ իրականության և կենսասոցիալական փորձարկումների բնույթը: Սրա հետ կապված՝ ուսումնասիրվում են XIX դարում նախագծված «հայության» էթնոկորպորացիայի մեխանիզմները, բերվում են նրա կողմից հրեաների, քրդերի, թուրքերի, ադրբեջանցիների, վրացիների, ռուսների, լեզգիների, թալիշների, այլ ժողովուրդների ներկայացուցիչների զանգվածային սպանությունների վկայություններ:

Էթնոկորպորացիաների գործունեության կործանարար հետևանքներն ուսումնասիրող հետազոտության նախնական տպաքանակը, վրացական ՋԼՄ-ի համաձայն, արդեն կազմել է 1500 օրինակ»:

Մի շարք հոդվածներում հայերն ուղղակիորեն «թշնամի» (*«Зеркало»*-ի 27, *«Право выбора»*-ի՝ 4, *“Region plus”*-ի՝ 1 հոդվածներում) կամ «Ֆաշիստ» (*«Зеркало»*-ի 7, *«Право выбора»*-ի՝ 2 և *“Region plus”*-ի՝ 1 հոդվածներում) են անվանվում: Ի դեպ, որպես «պատիժ» այն բանի, որ Ֆրանսիայի Ազգային ժողովը որոշում է ընդունել այն անձանց քրեական հետապնդումների մասին, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանությունը, նման պիտակ է փակցվել նաև ֆրանսիացի խորհրդարանականներին. «Նման որոշում կայացնելիս ֆրանսիացի խորհրդարանականները հետևել են ֆաշիստական գաղափարախոսությանը: Ավելի քան 100 պատգամավորներ, ովքեր քվեարկել են հակաթուրքական այս որոշման օգտին, փաստորեն ֆաշիստներ են»<sup>1</sup>...

Երբեմն Ադրբեջանի լրատվամիջոցները «թշնամի» են հայտարարում նաև կոնկրետ անձի. այսպես, 2008թ. մարտի 28-ի *«Право выбора»* թերթը հոդված է նվիրել Հայաստանի նախագահին «երեխաների թշնամի» հայտարարելու քարոզչությանը («Շարունակվում է Ռոբերտ Քոչարյանին «երեխաների թշնամի» հայտարարելու հետ կապված քարոզչությունը»):

**«Հեղինակավոր վկայություն».** Ներկայացվող դրույթների ճշմարտացիության հաստատում հեղինակավոր անձի, քաղաքական, հասարակական կառուցվածքի, փորձագիտական կամ վերլուծական կազմա-

<sup>1</sup> «Парламент Франции опирается на фашистскую идеологию», *«Зеркало»*, 18 октября 2006г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=8884&dd=18&mo=10&yr=2006>

կերպության ներկայացուցչի կարծիքով: Օրինակ, այն, որ «Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է», «հաստատում են» գրեթե բոլոր օտարերկրյա այցելուները, ովքեր եկել են Ադրբեջան և հարցազրույց տվել տեղական լրատվամիջոցներին:

### **3.3 Հուզական հիմնադրույթներ**

«Թշնամի հայի» կերպարի ձևավորմանն ուղղված մանիպուլյատիվ պրոպագանդայի առավել հուզական, ռեզոնանսային ուղղություններից է այն, որ՝

*շուրջ 100 տարվա ընթացքում հայերն իրականացրել են ադրբեջանական ժողովրդի մի քանի ցեղասպանություններ:*

Այս հիմնադրույթի ապացուցմանն են նվիրված 62 հոդված «*Зеркало*»-ում, 3-ը՝ «*Region plus*»-ում և 27-ը՝ «*Право выбора*»-ում:

Այսպես, 2007թ. մարտի 31-ից մինչև օգոստոսի 31-ը «*Зеркало*»-ի 22 համարներում հրապարակվել է պատմական գիտությունների դոկտոր Մոլմազ Ռուստամովա-Թողիդի «Դա մոռանալ չի կարելի» հոդվածը, որում համարից համար քաղվածքներ են մեջբերվել «Ողջ Անդրկովկասի սահմաններում մուսուլմանների և նրանց ունեցվածքի հանդեպ գործադրված բռնությունները հետաքննող արտակարգ քննչական հանձնաժողովի (ԱԲՀ)» քրեական գործերից<sup>1</sup>, որն ստեղծվել էր 1918թ. հուլիսի 15-ին Ադրբեջանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշմամբ:

Հասկանալի է, որ քրեական գործերի գրեթե բառ առ բառ կրկնվող նախադասությունները նկարագրում էին բռնության մեկը մյուսին նման սցենարներ խաղաղ մահմեդական բնակչության հանդեպ՝ կատարված բացառապես «հայկական ավազակախմբերի» կողմից:

Նման ուղղվածությամբ նյութերի հաճախականության միջինը կազմել է 1 հատ 4 համարում, սակայն այն նկատելիորեն ավելանում է փետրվարին (փետրվարի 26-ի Խոջալուի դեպքերի հետ կապված) և մարտին (մարտի 31-ը ԱՀ-ում հայտարարված է ադրբեջանցիների ցեղասպանության օր):

---

<sup>1</sup> Газета «Зеркало», 31 марта 2007г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=15532&dd=31&mo=3&yr=2007>

Ընդ որում՝ ինչպես պարզվում է, հայերն իրականացրել են ոչ միայն ադրբեջանական ժողովրդի ցեղասպանությունը. «Հայերի... հանցավոր գործունեության հետևանք է 8 մլն (!) մարդու բնաջնջումը Եգիպտոսում» («Հայ ժողովուրդ» հասկացություն գոյություն չունի», «*Право выбора*», 6 հունիսի 2006թ.): Պարզվում է նաև, որ.

- հայերը յուրացրել են ադրբեջանցիների պատմամշակութային ժառանգությունը (11 հոդված «*Зеркало*»-ում, 2-ը՝ «*Region plus*»-ում և 14-ը՝ «*Право выбора*»-ում),
- ոչ միայն ԼՂՀ-ն, այլ նաև ինքը՝ ՀՀ-ն, տեղակայված են բուն ադրբեջանական պատմական հողերում (5 հոդված «*Зеркало*»-ում, 1-ը՝ «*Region plus*»-ում):

### 3.4 Ուղեկից գործոններ

Ադրբեջանական հանրությունում ԶԼՄ-ի կողմից «թշնամի հայի» կերպարի ձևավորմանը նպաստում է ոչ միայն տեղեկատվության միտումնավոր մատուցումը, այլև բացահայտ առասպելների տարածումը, որոնք կարելի է խմբավորել 2 խմբում.

#### 1. ՀՀ-ի, ԼՂՀ-ի և հայկական Մփյուռքի մասին

Մամուլում հաճախ կարելի է հանդիպել հետևյալ արտահայտությունների. «ՀՀ-ն Ռուսաստանի վասալն է» («*Зеркало*», 23 դեկտեմբերի 2006թ.), «Հայաստանը ծախս է՝ ուղղակի և անուղղակի իմաստներով» («*Зеркало*», 23 դեկտեմբերի 2006թ.), ՀՀ-ն կորցրել է «սեփական շահերի և այլոց շահերը սպասարկելու միջև սահմանազատումը» («*Region plus*», №27, 1 ապրիլի 2007թ.):

«Քննադատությունից» չի խուսափել նաև ԱՄՆ հայ համայնքը, որը որակվում է որպես «թափառականների և դավադիրների հավաքածու» («*Зеркало*», 28 մայիսի 2007թ.):

Հաճախ հանդիպող թեզերից է այն, որ «ՀՀ-ում իշխանությանը բռնատիրել են դարաբաղցիները»: Օրինակ՝ «...Երևանում ընդդիմադիր հռետորության հետևում կարող են թաքնված լինել կլանային հակասություններ: Ավելի ճիշտ՝ «երևանցիների» փորձերը՝ միավորվել «դարաբաղցիների» դեմ: Բանն այն է, որ Քոչարյանի նախագահության տարիներին գրեթե բոլոր «հրամանատարական բարձունքները» հայտնվեցին

«ղարաբաղյան կլանի» ձեռքում, ինչից «երևանցիները», ովքեր ղարաբաղյան հայերին միշտ էլ «զտարյուն հայ» չեն համարել, խիստ դժգոհ էին: Բայց կլանային հակասությունները, ինչպես հայտնի է, միշտ չէ, որ հաջողվում է լուծել ընտրությունների միջոցով»<sup>1</sup>:

**2. Մարտահրավերների մասին, որոնք նետում են ՀՀ-ն, ԼՂՀ-ն և Մփյուռքը միջազգային հանրությանը, և որոնք անպայման կհանգեցնեն մասշտաբային պատասխանի**

Ադրբեջանական ՁԼՄ-ում հաճախ կարելի է հանդիպել այն մտքին, թե ԼՂՀ-ն վերածվել է անվերահսկելի տարածքի, որը ծառայում է «թմրանյութեր աճեցնելու և տարանցելու, զենք պահելու, վաճառելու և այն այլ երկրներ տեղափոխելու, միջուկային թափոնները թաղելու և միջուկային գաղտնի հետազոտություններ անցկացնելու համար» («Հայաստանի դեմ պետք է կոշտ միջոցներ ձեռնարկվեն», «*Право выбора*», 6 հոկտեմբերի 2006թ.):

Վերոնշյալի համատեքստում ուշագրավ է «*Банк-информация*» կենտրոնի ղեկավար Ռովշան Նովրուզովուի «Ուրանը՝ Նախիջևանից, իսկ կալիֆորնիումը՝ Լեռնային Ղարաբաղից» հոդվածը<sup>2</sup>, որտեղ «ափսոսանք» է հայտնվում այն մասին, որ «հայերը, օգտագործելով Ղարաբաղի տարածքը, օրեցօր ուժ են հավաքում համաշխարհային միջուկային շուկայում: Դրանում նրանց օգնում է անգամ բնությունը: Դեռ 1978թ. ակադեմիկոս Ս.Ալեքսանդրովն իր զեկույցում, որը հատուկ ԽՍՀՄ ռազմական հետախուզական վարչության համար էր պատրաստվել, նշում էր. «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի տարածքն աշխարհի այն գոտիներից է, ուր շատ երկնաքարեր են ընկնում: Այդ տարածքը կարելի է «փակ գոտի» հայտարարել... Գիտնականները գիտեն, որ երկնաքարերի կազմում կան կալիֆորնիումի, օսմիումի և ուրանի քիմիական տարրեր, որոնք օգտագործվում են որպես միջուկային զենքի ստեղծման հիմք»:

Մյուս անհերթեթ թեզը հայերի կապերն են «համաշխարհային ահաբեկչական ցանցի» հետ, և այդ առումով հետաքրքրական է հետևյալ նյութը.

<sup>1</sup> «Парламентские выборы или клановые противоречия?», “Region plus” №30, 15 мая 2007г., <http://www.regionplus.az/artic/30/polit/p2.php>

<sup>2</sup> Газета «Зеркало», 23 декабря 2006г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=11798&dd23&mo=12&yr=2006>

**«Право выбора», 3 հոկտեմբերի 2006թ.**

*Հայերը կամիկաձեներ են պատրաստում արքեպիսկոպոսական երեխաներից, որոնց գերեզմանը են գրավյալ տարածքներում*

«Ինչպես տեղեկացրել են Արքեպիսկոպոսական գրավյալ տարածքներում Պատմամշակութային հուշարձանների պաշտպանության կազմակերպությունից, այդ նպատակով (արքեպիսկոպոսական երեխաներից մահապարտ պատրաստելու - *խմբ.*) Ջաբուղ գյուղում ճամբարներ են կառուցվել: Տեղեկության մեջ ասվում է, որ Լաչինի շրջանի տարածքում կառուցվել է նաև ուսումնական կենտրոն: Այդ գործը հովանավորում է ԱՄՆ Հյուսիսային Կարոլինա նահանգի Գրինվիլ քաղաքի բնակիչ, եկեղեցական մեթոդիստ<sup>1</sup> Թերի Քեյզլինը... Կազմակերպության տարածած հայտարարության մեջ ասվում է նաև այն մասին, որ Թ.Քեյզլինը հովանավորում է Լաչինի շրջանում երկու եկեղեցիների կառուցումը, և համաշխարհային հանրությունը պետք է իր հայացքն ուղղի Լեռնային Ղարաբաղում ահաբեկիչների պատրաստման անուշադրության մատնված հարցին:

Պատմամշակութային հուշարձանների պաշտպանության կազմակերպությունն ընդգծում է, թե բոլորին է հայտնի, որ մեծ տերություններն օգնություն են ցուցաբերում Հայաստանին, բայց ափսոս, որ այդ գործին միանում են նաև կրոնի սպասավորները»:

ԼՂՀ-ին օգնություն տրամադրելու դավանական, քրիստոնեական ասպեկտին է նվիրված նաև հետևյալ հոդվածը.<sup>2</sup>

**Газета «Зеркало», 27 октября 2006г.**

*«Վատիկանի ձայն» ռադիոն օգնություն է ցուցաբերում Ղարաբաղյան անջատողականներին*

«Լեռնային Ղարաբաղի զավթման և հայացման գործընթացում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև քրիստոնեական գործոնը: Վատիկանն իր ավանդն է ներդրել հայերի գործում, ընդ որում՝ այն չի սահմանափակվել քրիստոնյա եղբայրների բարոյական աջակցությամբ: Արքեպիսկոպոսական հողերի գրավման ժամանակ մարտական գործողություններին մասնակցում էին Վատիկանի կողմից ապօրինի կազմավորված «Օպուս Դեու»<sup>3</sup> (Աստծո մարտիկներ) զինված ջոկատ-

<sup>1</sup> Հավանաբար, նկատի է առնվում Մեթոդիստական եկեղեցին:

<sup>2</sup> Газета «Зеркало», 27 октября 2006г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=9151&dd=27&mo=10&yr=2006>

<sup>3</sup> Հավանաբար նկատի է առնվում «Օպուս Դեու» (լատ. «Opus Dei»՝ «Աստծո գործ») կազմակերպությունը, որը հիմնադրվել է իսպանացի հոգևորական Խոսե Մարիա Էսկրիվա դե Բալագերի կողմից (1902-1975) Մադրիդում և 1942թ. արժանացել Պիոս XII-ի հավանությանը:

ները: Այս մասին «Зеркало»-ին հայտնել է Համաշխարհային ահաբեկչության և կոռուպցիայի դեմ ռազմավարական հետազոտությունների «Банк-информация» միջազգային կենտրոնի ղեկավար, քաղաքագետ Ռովշան Նովրուզովուն: Նրա խոսքերով՝ այս ջոկատի մասնակցությունը դարաբաղյան հողերի գրավմանը «ընդունել» է «Վատիկանի ձայն» ռադիոկայանը (24 ապրիլի 2004թ.): Քաղաքագետի տվյալներով՝ այս նույն ռադիոն պատրաստվում է Լեռնային Ղարաբաղում տեղակայել իր հաղորդիչները 2007թ. հունվարի 6-ին (հայերն այդ օրը տոնում են Հիսուսի ծննդյան օրը):

«Առանձնապես ուզում եմ նշել, որ վերոնշյալ ռադիոն, որը ջանում է ջախջախել իսլամը, առաջին անգամ եթեր է դուրս եկել 1931թ. փետրվարի 14-ին «Աստծո ձայն» անվանումով: Հետագայում այն մի քանի անգամ փոխել է անվանումը. «Պապի ձայն», «Վատիկանի խոսափող», և վերջապես, 1941-ից, սկսել է անվանվել «Վատիկանի ձայն»: Ռադիոն եթեր է դուրս գալիս 37 լեզուներով: 50 աշխատակիցների մեջ, որոնց մեծամասնությունը բարձր հոգևոր կոչումներ ունի, աշխատում են 17 հայեր: Ռադիոյի ամենամյա բյուջեն կազմում է 2,2 միլիոն դոլար: «Կանխակալ, ես կասեի՝ նույնիսկ թշնամական վերաբերմունք Ադրբեջանի հանդեպ «Վատիկանի ձայնը» ցուցաբերել է շատ անգամներ: Օրինակ, մեր հողերը գրաված հայերն այնտեղ կազմակերպել են «Արցախի պատմա-երկրագիտական թանգարանը»: Իսկ այդ ռադիոն դրա մասին հաղորդում է պատրաստել, որից հետո հանդես է եկել բոլոր հայերին ուղղված կոչով: Նրանք հայերին առաջարկում են այցելել թանգարան և հասնել բոլոր «հայկական արժեքների» (որոնք մինչև այժմ ցուցադրված էին որպես ադրբեջանական) «պատմական հայրենիք» վերադարձին: Մեր Կենտրոնի տվյալներով՝ Վատիկանում արդեն ստեղծվել է «Ղարաբաղյան բյուրո»՝ ռադիո, որն աշխատանքը կսկսի 2007 թվականից», - նշում է Ռ.Նովրուզովուն...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ի դեպ, Ռովշան Նովրուզովուի ներկայացրած տվյալներին հարկավոր է որոշակի զգուշավորությամբ մոտենալ, հատկապես այն բանից հետո, երբ Ադրբեջանի իշխանությունները նրա դեմ «մեղադրանք են ներկայացրել Քրեական օրենսգրքի 320.1 (վկայականի կամ այլ պաշտոնական փաստաթղթի կեղծում, որն իրավունք է տալիս կամ ազատում է պարտականություններից, նույն նպատակներով կեղծ պետական շքանշանների, կնիքների, դրոշմների, բլանկների պատրաստում կամ կիրառում) և 310 (պաշտոնատար անձի լիազորությունների յուրացում) հոդվածներով: Հետաքննությունը վարում է Գլխավոր դատախազության ծանր հանցագործությունների քննչական վարչությունը: Ռ.Նովրուզովուի նկատմամբ կիրառվել է երկամսյա բանտարկության պատժամիջոցը: «Зеркало», 19 июля 2007г., <http://www.zerkalo.az/rubric.php?id=20795&dd=19&mo=7&yr=2007>



### **Ամփոփում**

Հայերի բացասական ընկալման կարծրատիպերի պաշտպանությամբ, թշնամի հայի կերպարի ձևավորմամբ և հաստատմամբ ադրբեջանական զանգվածային լրատվամիջոցները կատարում են պետության հատուկ պատվերը՝ ստեղծում են մշտապես գործող արտաքին սպառնալիք:

Ներքին դաշտում դա ակտիվ կերպով օգտագործվում է լայն զանգվածներին սուր սոցիալ-տնտեսական խնդիրներից շեղելու համար: Թշնամի հայի կերպարն ավելի արագ ու հեշտ է ընկալվում երիտասարդ ադրբեջանցիների կողմից, որոնք ՀՀ և ԼՂՀ ներկայացուցիչների հետ անձնական շփման փորձ չունեն և պակաս քննադատական վերաբերմունք ունեն հայերի՝ ադրբեջանական ՋԼՄ-ի կողմից սերմանվող կարծրատիպի ընկալման հարցում:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ԱՀ քաղաքական-պետական էլիտան իրական ցանկություն չունի լուծելու ԼՂՀ-ի հետ կապված խնդիրները խաղաղ բանակցային գործընթացի միջոցով: Ադրբեջանական հասարակությունում թշնամի հայի կերպարի տարածմանը և ամրապնդմանը զուգընթաց՝ ՋԼՄ-ն ներկայումս անցում է կատարում ՀՀ-ի և ԼՂՀ-ի հանդեպ ավելի լայն ռազմական հռետորության, հասարակության մեջ ռազմական փսիխոզի արմատավորման և մարտադաշտում ռևանշի հասնելու կոչերի:

## **ԳԼՈՒԽ 4**

### **ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ ԵՎ ՀԱՔԵՐԱՅԻՆ ՀԱՐՉԱԿՈՒՄՆԵՐ**

Գիտատեխնիկական առաջընթացի հետ սերտորեն կապված էլեկտրոնային անվտանգության ոլորտը խիստ դինամիկ է զարգանում: Գոյություն ունի այսպես կոչված Մուրի օրենքը, ըստ որի՝ համակարգիչների արագությունը և այլ չափանիշերը կրկնապատկվում են ամեն 18 ամիսը մեկ: Արագ է փոփոխվում նաև էլեկտրոնային պայքարի ռազմավարությունը:

Տեխնիկապես զարգացած երկրները իրենց ՏԱ համակարգում ընդգրկում են ոչ միայն պետական կառույցների, այլև տնտեսավարող սուբյեկտների ներքին ցանցերի պաշտպանությունը հատուկ կառույցների կողմից: Հատկապես ուշադրություն է դարձվում ռազմավարական կարևորություն ունեցող կառույցների անվտանգությանը, ինչպիսին է, օրինակ, էներգետիկայի համակարգը: Նման ցանցերն անվանվում են «կրիտիկական ենթակառուցվածքներ»: Դրանց վրա հարձակումները դիտարկվում են որպես սպառնալիք ազգային անվտանգությանը:

Միևնույն ժամանակ, այդ ոլորտում այսօր հստակ երևում է համընդհանուր միտում. նախկինում զուտ անհատական կամ կորպորատիվ բնույթ կրող հաքերային խմբերի մի զգալի հատվածը հավաքագրվում է պետական մարմինների կողմից: Արդյունքում՝ այս կամ այն գերատեսչության կառուցվածքներում ստեղծվում են հատուկ ստորաբաժանումներ, որոնք, հետապնդելով տվյալ պետության շահերը, մրցակիցների և պայմանական հակառակորդների հանդեպ ծավալում են նպատակաուղղված գործունեություն: Այս միտումը ակնհայտորեն զգացվում է նաև Ադրբեջանում, որտեղ էլեկտրոնային պայքարի ոլորտում գերակայության հասնելու համար շարունակական ջանքեր են թափվում:

### **Հաքերային գործողություններ**

Վերջին 4 տարվա ընթացքում կատարված հետազոտությունները թույլ են տալիս հաստատել, որ ադրբեջանական հատուկ ծառայություններն իրենց ղեկավարության տակ են վերցրել զանազան հաքերային խմբեր, որոնք գտնվում են ինչպես Ադրբեջանում, այնպես էլ այդ երկրի սահմաններից դուրս: Որպես նման համակարգի ստեղծման սկիզբ կարելի է ընդունել 2005թ. գարունը, երբ հարձակումները հայկական կայքերի վրա սկսեցին նկատելիորեն ուժեղանալ:

Սակայն, բացի հարձակումների քանակական աճից, գրանցվեցին նաև որակական փոփոխություններ. Ադրբեջանի կողմից գործող հաքերները ներկայումս ավելի նուրբ տեխնոլոգիաներ են կիրառում: Նրանց նպատակն արդեն կայքերում եղած տեղեկատվության ոչնչացումը չէ. այսօր արձանագրվում են դեպքեր, երբ կայքերն անցնում են հակառակորդի հաքերային խմբերի տիրապետության տակ, ինչը հնարավորություն է տալիս ինչպես ներքին տեղեկատվության հափշտակման, այնպես էլ ապատեղեկատվության տարածման: Իսկ վերջին տարիներին թիրախ սկսեցին հանդիսանալ պետական կայքերը և կառույցների ներքին ցանցերը, ինչպես նաև հայկական լրատվամիջոցների կայքերը: Դրանք, ի լրումն, նպատակ ունեն բացահայտելու և «շոշափելու հակառակորդի թույլ հանգույցները», վարժելու սեփական հաքերային ուժերը:

Ընդհանուր առմամբ ադրբեջանցիների կողմից ձեռնարկված «Էլեկտրոնային-հաքերային պատերազմում» կարելի է ամրագրել հետևյալ միտումները և փոփոխությունները.

- գրոհները դարձել են ավելի մտածված, դրանց ակնհայտորեն մասնակցում են ոչ թե երիտասարդ էնտուզիաստ-հաքերներ, այլ պրոֆեսիոնալներ (գուցե և օտարերկրյա վարձկանների տեսքով),
- գրեթե վերացել են գրոհները փոքրածավալ և տեղեկատվական տեսանկյունից ոչ կարևոր կայքերի վրա,
- կրճատվել է հայկական ինտերնետի վրա գործադրվող առանձին գրոհների թիվը, փոխարենը կայքերի մի մեծ հատվածի վրա կատարվում է «համազարկային» բնույթի հարձակում,
- գրոհների են ենթարկվում հանգուցային կայքեր՝ տեղեկատվական պորտալներ, պետական կառույցների կայքեր,

- առավել քան նախկինում նկատվում է համագործակցությունն աղբբեջանական և թուրքական խմբավորումների միջև:

Նշենք, որ հաքերային հարձակումները հակառակորդի կայքերի վրա «խաղաղ» ժամանակ լուրջ հետևանքներ գրեթե չեն ունենում: Արդիական տեխնոլոգիաները թույլ են տալիս հասցված վնասը վերականգնել օպերատիվ կերպով:

Ներկայացված օրինաչափությունները և միտումները հաստատում են այն վարկածը, որ պրոֆեսիոնալ հաքերները գործում են Աղբբեջանի պետական կառույցների վերահսկողությամբ, և նրանց գործողություններն իրականացվում են ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ մղվող տեղեկատվական պատերազմի ընդհանուր համատեքստում: Անուղղակի տվյալներից կարելի է գալ այն եզրակացության, որ հաքերային խմբավորումները չեն գտնվում ԱՀ նախագահի աշխատակազմի անմիջական վերահսկողության տակ, այլ ղեկավարվում են Ազգային անվտանգության նախարարության (ԱԱՆ) կողմից: Նկատենք, որ տեղեկատվական պատերազմի բովանդակային և տեխնիկական մակարդակներով ղեկավարումը երկու տարբեր կառույցների կողմից հանգեցնում է Աղբբեջանի գործողությունների անհամաձայնեցվածության:

Աղբբեջանական հաքերային գործունեության դինամիկան վկայում է այն մասին, որ եթե չձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր ՏԱ «Էլեկտրոնային ոլորտում», ապա մոտակա տարիներին ՀՀ և ԼՂՀ «կրիտիկական ենթակառուցվածքները» կարող են հայտնվել վտանգավոր իրադրությունում: Հաշվի առնելով, որ այսօր ինֆորմացիոն տեխնոլոգիաները ներդրվում են կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում, նման սպառնալիքը պետք է ընդունել որպես լրջագույն մարտահրավեր մեր ազգային անվտանգությանը:

## **ԳԼՈՒԽ 5**

### **ԱԳՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Ինչպես արդեն նշվել է նախորդ բաժիններում, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունն անմիջականորեն ղեկավարվում և համակարգվում է պետական համակարգի կողմից: Այդ համակարգի հետ սերտաճել են ոչ միայն ՁԼՄ-ն, այլև բազմաթիվ հասարակական և անգամ ակադեմիական կառույցներ, որոնց մի մասը գործում է արտերկրում: Այս գլխում կներկայացվեն համառոտ տեղեկություններ նման մի քանի կառույցների վերաբերյալ:

#### ***5.1 Հեղափար Ալիևի հիմնադրամի գործունեությունը տեղեկատվական ոլորտում***

Ադրբեջանում հակահայկական տեղեկատվական գործողություններ իրականացնում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունները, որոնց մի մասն օգտվում է պետության հովանավորությունից: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հեղափար Ալիևի հիմնադրամը, որը, լինելով ոչ պետական կազմակերպություն, ձևավորման օրից կառավարվում է անմիջականորեն Ալիևների ընտանիքի կողմից: Հիմնադրամի նախագահն է ակտիվ քաղաքական գործիչ Մեհրիբան Ալիևան՝ նախագահ Իլհամ Ալիևի կինը, իսկ Ռուսաստանի Դաշնությունում հիմնադրամի ներկայացուցչությունը գլխավորում է նրանց դուստր Լեյլա Ալիևան:

Հիմնադրամը, սերտորեն համագործակցելով պետական և այլ կառույցների հետ (նախագահի աշխատակազմ, Ազգային անվտանգության նախարարություն, Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիա և արտերկրում դիվանագիտական ներկայացուցչություններ), սպասարկում է Ադրբեջանի քաղաքականության հիմնական ուղղությունները և առաջին հերթին՝ հակահայկական քարոզչությունը ԼՂՀ հակամարտության համատեքստում: Հիմնադրամը ֆինանսավորում է բազմալեզու

գրականության՝ գրքերի, ամսագրերի ու բրոշյուրների հրատարակում, տարբեր երկրներում դրանց տարածումը, Աղբբեջանում և արտերկրում միջոցառումների անցկացումը, ֆոտոցուցահանդեսների կազմակերպումը, վավերագրական ֆիլմերի նկարահանումն ու ցուցադրումը, երիտասարդական քարոզարշավների համակարգումը, ինչպես նաև ինտերնետային էջերի գործարկումը:

Ալիևի հիմնադրամը ստեղծվել է 2004թ. մայիսի 10-ին Բաքվում, կազմված է հետևյալ բաժիններից, որոնք իրենց հերթին ունեն ենթաբաժիններ.

***Հումանիտար ծրագրերի բաժին.***

- Մշակույթ և զբոսաշրջություն
- Սոցիալական քաղաքականություն
- Կրթություն, երիտասարդության և սպորտի հարցեր:

***Միջազգային հարաբերությունների բաժին.***

- Հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ
- Հարաբերություններ ԱՊՀ պետությունների հետ
- Հարաբերություններ արտասահմանյան պետությունների հետ:

***Հասարակական հարաբերությունների բաժին.***

- Հարաբերություններ իրավական և ֆիզիկական անձանց հետ
- Հարաբերություններ զանգվածային լրատվամիջոցների հետ:

***Գործառնական բաժին.***

- Գլխավոր բաժանմունք
- Վերլուծական-տեղեկատվական բաժանմունք
- Քարոզչության և հետազոտության բաժանմունք
- Անվտանգության բաժանմունք
- Մարդկային ռեսուրսների բաժանմունք
- Տնտեսական բաժանմունք
- Արձանագրային բաժանմունք:

Ինչպես տեսնում ենք, հիմնադրամը ներկայացվում է որպես հիմնականում գիտամշակութային գործունեությամբ զբաղվող կազմակերպություն, որի նպատակներից են, օրինակ՝ *մուղամների* աղբբեջանա-

կան ծագման վերաբերյալ գովազդը, մշակութային, երիտասարդական և մարզական ծրագրերի իրականացումն ու ֆինանսավորումը:

Մինչդեռ Ալիևի հիմնադրամի գործունեությունում գերակայողը հակահայկական քարոզչությունն է տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Այդ քարոզչությունը համապարփակ է, այն գործում է գրեթե բոլոր հնարավոր ուղղություններով՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական, պատմամշակութային, հոգևոր, կրթական, տեղեկատվական ոլորտները: Հիմնադրամն Ադրբեջանում և արտասահմանում տեղի ունեցող յուրաքանչյուր գործընթացին ձգտում է հաղորդել հակահայկական բնույթ: Կառույցն իրականացնում է Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության տեսանկյունից կարևորագույն գործառույթ. այն կենտրոնացված սկզբունքով ուղղորդում, վերահսկում, ֆինանսավորում և գաղափարախոսական աջակցություն է ցուցաբերում երկրում և նրա սահմաններից դուրս գտնվող կազմակերպություններին ու անհատներին, որոնք իրականացնում են հակահայկական քարոզչություն:

Հիմնադրամի գործունեության կիզակետերից են ԼՂՀ հակամարտության ենթատեքստում Հայաստանի և հայերի ներկայացումն իբրև «ագրեսիվ, բռնի, նվաճողական քաղաքականություն իրականացնողներ», իբրև «Խոջալուի ցեղասպանությունն» իրականացրածներ», «ահաբեկիչներ» և այլն: Կառույցի ջանքերը հատկապես ուղղված են, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանության» առասպելի գովազդմանը, այդ մասին տեղեկատվության հորինմանն ու տարածմանը լայն լսարանի շրջանում՝ օգտագործելով բոլոր հնարավոր զանգվածային տեղեկատվական ալիքներն ու միջանձնային շփումները: Հիմնադրամն այդ ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ է կատարում, որոնցից նշենք հետևյալները.

1. «Խոջալուի ցեղասպանության տարելիցը» պաշտոնապես նշվում է մոտ 50 երկրում գտնվող ադրբեջանական դեսպանատներում և հյուպատոսություններում:
2. Կազմակերպվում են «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված միջոցառումներ տարբեր պետությունների մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում, օրինակ՝ Վաշինգտոնում, Նյու Յորքում, Լոնդոնում, Դուբայում, Կիևում, Մոսկվայում, Վարշավայում, Ստրասբուրգում, Փարիզում, Անկարայում, Ստամբուլում, Թբիլիսիում և Բուխարեստում:

3. Ստեղծվել է «Խոջալուի ցեղասպանությունը» ֆիլմը, կառույցի կողմից կազմակերպվել է «Խոջալուն երեխաների աչքերով» ցուցահանդեսը, որի համար նկարները պատրաստել են ադրբեջանցի դպրոցականները՝ ազդված լինելով ադրբեջանական դպրոցական դասագրքերում իրենց ակտիվորեն մատուցվող և պարտադրվող պետական հայատյաց քարոզչությունից:
4. Հիմնադրամի կողմից ֆինանսավորվում է բազմաթիվ քարոզչական գրքերի հրատարակումը, այդ թվում՝ «Պատերազմն ընդդեմ Ադրբեջանի. կիզակետում է մշակութային ժառանգությունը» գիրքը՝ հրատարակված անգլերեն լեզվով և միտված օտարերկրյա լսարանին: Նման գրքերում Ադրբեջանը ներկայանում է որպես «հին ժողովուրդ՝ համաշխարհային կարևորություն ունեցող մշակութային ժառանգությամբ», որի դեմ Հայաստանը «պատերազմ է իրականացնում»:
5. Կառույցի կողմից հարյուր հազարավոր տպաքանակով հրատարակվում և լայնորեն տարածվում են հակահայկական ուղղվածության բուկլետներ: Դրանց հիմնական թեմաներն են՝ «Ղարաբաղի պատմությունը», «Խոջալուի ցեղասպանությունը», «Ղարաբաղյան հակամարտության պատճառները», «Հայկական ազրեսիայի հետևանքները», «Հայկական ահաբեկչական խմբերի գործունեությունն ընդդեմ Ադրբեջանի» և այլն: Դրանցում ԼՂՀ-ի հետ առնչվող բոլոր կարևոր հիմնախնդիրները ներկայացվում են հօգուտ Ադրբեջանի և ի վնաս ՀՀ-ի ու ԼՂՀ-ի, ինչը տեղեկատվական առումով շատ արդյունավետ է և հակազդման բացակայության պայմաններում կարող է մեծ վնաս պատճառել հայկական կողմի միջազգային կերպարին: Նման հրատարակումները միտված են միջազգային լայն լսարանին. դրանք հրատարակվել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և հունգարերեն լեզուներով և տարածվել տարբեր պետություններում: Ադրբեջանցիներից շատերն այս թերթիկներն իրենց հետ տանում են միջազգային գիտաժողովների և այլ միջոցառումների ու տարածում օտարերկրյա մասնակիցների շրջանում:

Ինչպես տեսնում ենք, Հեյդար Ալիևի հիմնադրամը ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ տեղեկատվական պատերազմում ուրույն և բավական պատկառելի տեղ է զբաղեցնում:



## **5.2 Ադրբեջանական ներկայության որոշ արտահայտումներն ինտերնետում**

Ադրբեջանական ինտերնետ-կայքերում ակտիվորեն փորձում են յուրացնել և օգտագործել հայկական սիմվոլները, պատկերանշանները: Հայտնի է, որ ադրբեջանական քարոզչության մեջ արցախյան խաչքարերն անվանվում են «ալբանական»: Հայկական սիմվոլների օգտագործման ադրբեջանական տարբերակներից է նաև քրիստոնեական խաչի պատկերի օգտագործումը ադրբեջանական <http://www.karabakh.gen.az> կայքում, որտեղ գլխավոր էջում պատկերված է քրիստոնեական սիմվոլը՝ խաչը թրի տեսքով, որով երեխա է սպանված: Սրանով ադրբեջանցիներն արտահայտում են իրենց վերաբերմունքը ոչ միայն հայկական, այլև ընդհանրապես քրիստոնեական արժեքների նկատմամբ:

Ադրբեջանական վերոնշյալ կայքն անգլերեն է, այսինքն՝ կայքում տեղեկատվական գործողություններն ուղղված են «արտաքին լսարանին», որին ադրբեջանցիները փորձում են իրենց կողմնակիցը դարձնել: Կայքի առաջին էջի մեծ մասը զբաղեցնում են լուսանկարները, որոնք պատկերում են ադրբեջանական զինված ուժերի տարբեր գորատեսակներ: Այդ պատկերները ներկայացված են ոգեշնչվածությամբ և ուղղված են ցուցադրելու սեփական բանակի մարտունակությունն ու պատրաստվածությունը: Կայքի ընդհանուր ոճն ու ձևավորումը ռազմատենչ է, համեմված ագրեսիվ արտահայտություններով և մեկնաբանություններով: Պատկերավոր միջոցների շարքում առանձնահատուկ ուշադրություն է գրավում «Ադրբեջանական տարածքը՝ օկուպացված հայերի կողմից» խորագիրը կրող քարտեզը:

Ադրբեջանական մեկ այլ՝ <http://www.karabakh.org> հասցեով անգլերեն և ռուսերեն լեզուներով ինտերնետային էջը հիմնականում նվիրված է «հայկական ահաբեկչության», «հայերի կողմից ադրբեջանցիների ցեղասպանության» թեմաներին: Կայքի ձևավորումը, հատկապես “*Karabakh*” անվանումը ներկայացված է մահմեդական ոճով, համապատասխան մշակութային երանգներով, որպեսզի տեսողական պատկերացում ստեղծեն Ղարաբաղի ադրբեջանական պատկանելության մասին: Կայքի առանձնահատկություններից է այն, որ նրա հասցեի մեջ ոչինչ չի ասվում ադրբեջանական պատկանելության մասին, իսկ հասցեի մի մասը

կազմող *karabakh* բառը կայքը հեշտհասանելի է դարձնում Ղարաբաղի մասին անգլերեն լեզվով տեղեկատվություն փնտրողների համար, քանի որ հենց *karabakh* բառն է նշվում որոնող կայքերում, և մշտապես առաջին հերթին ի հայտ է գալիս տվյալ կայքը: Եվ միայն հատուկ փնտրելով ու դժվարությամբ կարելի է գտնել այն ստեղծողների մասին տվյալներ, և համոզվել, որ կայքը ստեղծողներն աղբբեջանցիներն են: Չեզոք այցելուն հազիվ թե փորձի պարզել կայքի ծագումը, իսկ դրանում տեղակայված կեղծ տեղեկատվությունը կընդունի որպես օբյեկտիվ ու ճշմարիտ<sup>1</sup>:

Ինտերնետ-տարածությունում կեղծ տեղեկատվության և ապակողմնորոշման իրականացման փայլուն օրինակներից է Հեյդար Ալիևի հիմնադրամի ստեղծած <http://www.azerbaijan.az> աղբբեջաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով կայքը: Այն ներկայացնում է տեղեկատվություն մի շարք թեմաներով, որոնց վերնագրերն իսկ «Հայկական ագրեսիա», «Հայկական ահաբեկչություն», «Խոջալուի ցեղասպանությունը», «Ղարաբաղի հիմնախնդիրը և հայկական հարցը», հակահայկական իմաստ են կրում: Կայքում զետեղված տեքստերն ուղեկցվում են, օրինակ, հետևյալ բնույթի մեկնաբանություններով. «Հայաստանի կողմից Աղբբեջանի նվաճման և բռնի ենթարկեցման պատմական արմատներն անհրաժեշտություն են ստեղծում հաշվի առնելու հայերի պատմության որոշ հարցեր առհասարակ: ...Հենց որ ներքին և միջազգային իրավիճակը ստեղծել է բարենպաստ պայմաններ, հայերն ամեն գնով փորձել են իրագործել իրենց դավադիր նպատակները...»:

Ինտերնետ-տարածության մեջ առկա են բազմաթիվ կայքեր, որոնցում Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված տեղեկատվությունը երկրորդական բնույթ է կրում: Նման կայքերում այդ տեղեկատվությունը հիմնականում չի ուղեկցվում քարոզչության ակտիվ մեթոդների օգտագործմամբ, սակայն, այնուամենայնիվ, տրվում են որոշակի սկզբունքով ընտրված դրույթներ և փաստաթղթեր, որոնք արտահայտում են կայքը ներկայացնող կողմի տեսակետը: Այսպես, օրինակ՝ Աղբբեջանական Գենդերային տեղեկատվական կենտրոնի կայքում (<http://www.gender-az.org>)

---

<sup>1</sup> Գոյություն ունի նաև հայկական ինտերնետ-կայք *karabakh* բառի առկայությամբ (<http://www.karabakh.am>), նույնպես անգլերեն և ռուսերեն լեզուներով: Սակայն կայքի ձևավորումը չի բավարարում տեղեկատվական պատերազմի վարման պահանջներին, հիմնականում ունի տեքստային բնույթ և պատկերային ուղեկցում գրեթե չունի, այն վատ տպավորություն է թողնում և՛ տեղեկատվության ծավալի ու բովանդակության, և՛ ձևավորման տեսանկյունից:

ղարաբաղյան հակամարտությանը նվիրված տեղեկատվությունը տեղակայված է «Գենդեր և բռնություն» թեմատիկ բաժնում: Հետաքրքրական է, որ այդ բաժնում առկա է միայն ԼՂՀ-ին նվիրված՝ «Ղարաբաղյան հակամարտության լուծման տարբերակները. գաղափարներ և իրականություն» վերնագրով հոդվածը (հեղինակներ՝ Թողրուլ Ջուվառլի և Ալի Աբասով): Այսպիսով, կայքի հեղինակները չեն կարողացել խուսափել Աղբբեջանում տիրող հակահայկական գաղափարախոսությունից, սակայն մատուցված նյութերն ակնհայտորեն արհեստական տպավորություն են թողնում:

Որոշ աղբբեջանական ինտերնետ-կայքերում ԼՂՀ խնդիրը ներկայացված է որպես գիտական հիմնախնդիր: Հայտնի է, որ ցանկացած քաղաքական հակամարտություն գիտական ուսումնասիրությունների առարկա է դառնում, և ԼՂՀ հիմնահարցը բացառություն չէ: Այս տեսակետից հետաքրքիր են «Տարածաշրջանային հակամարտություններն ու զանգվածային լրատվության միջոցները» վերնագրով աղբբեջանական ինտերնետ-կայքում իրականացվող տեղեկատվական գործողությունները (կայքի հասցեն է <http://conflicts.aznet.org>): Կայքը ռուսերեն է, այստեղ ակտիվորեն օգտագործվում է գիտական տերմինաբանություն, որին միախառնված է «անջատականություն» բառը. դրա օգնությամբ կայքի հեղինակները «քաղաքագիտական» վերլուծության են ենթարկում Չեչենիայի, Վրաստանի և ԼՂՀ հիմնախնդիրները:

Աղբբեջանական պաշտոնական քարոզչությունն այստեղ սքողված է գիտական վերլուծության շղարշով. տպավորություն է ստեղծվում, թե կայքի հեղինակները նպատակ չունեն քարոզելու սեփական դիրքորոշումը, այլ մասնագիտության առումով իրականացնում են համեմատական քաղաքագիտական վերլուծություն, որում ԼՂՀ խնդիրը լոկ մասնավոր օրինակ է: Մասնավորապես, կայքում կան հակամարտությունների տարբեր տեսակների սահմանումներ, որոնք հեղինակները վերցրել են հայտնի գրականությունից: Հակամարտությունների այդ տեսակների սահմանումները բովանդակությամբ չեզոք են: Սակայն կայքում իրականացվող քարոզչության դրսևորումը նկատելի է նրանում, որ հեղինակներն այդ չեզոք սահմանումների օգնությամբ փորձում են սահմանել հայ-աղբբեջանական հակամարտությունը՝ բնականաբար, ընտրելով այն սահմանումը, որը համապատասխանում է իրենց կողմնակալ ռազմա-

վարությանն ու շահերին: Արդյունքում՝ հակամարտությունն իբրև գիտական սահմանում ստանում է «անջատողական շարժում» բնութագիրը:

Հատկանշական է *www.irevan-az.com* հասցեով հայալեզու ադրբեջանական ինտերնետ-կայքի ստեղծումը, ինչը նպաստում է տեղեկատվության ուղղակի հասցեագրմանը նպատակային խմբին: Բացի այդ, նման կայքը հայամետության թվացյալ տպավորություն է ստեղծում, որի տակ մատուցվում են հակահայկական տեղեկատվություն և կողմնորոշումներ:

Կայքի նպատակները ներկայացված են հետևյալ կերպ. «Կայքի էջերում առաջին անգամ հայերեն լեզվով ներկայացված են ԱՀ դարաբաղյան տարածաշրջանի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության պատմության, այսպես կոչված «հայկական հարցի» և «հայերի ցեղասպանության» վերաբերյալ հայտնի գիտնականների և գրողների աշխատությունները: Կայքում տեղադրված է նաև ֆոտոփաստերի հավաքածու, որը հնարավորություն է տալիս օգտվողներին գիտակցելու տարածաշրջանում ապրող ժողովուրդների համար ագրեսիվ անջատողականության և ահաբեկչության հետևանքները»:

Հատուկ ուշադրության է արժանի կայքի հակահայկական քարոզչությունը «Ով ով է Հայաստանում» վերնագրի ներքո, որտեղ տեղադրվում է մշտապես նորացվող հակահայկական տեղեկատվություն Հայաստանի քաղաքական գործիչների մասին՝ կենսագրությունների ձևաչափով:

Այսպիսով, ադրբեջանական հակահայկական տեղեկատվական պատերազմի վարումը, նպատակ ունենալով հատուցելու Ադրբեջանի պարտությունը մարտական գործողություններում, իր ազդեցությունն է իրականացնում մշտապես և աճող ինտենսիվությամբ, ինչն այսօրվա պայմաններում ՀՀ և ԼՂՀ ՏԱ տեսանկյունից հիմնական սպառնալիք է հանդիսանում:

### ***5.3 Ադրբեջանական ՀԿ-ները Ռուսաստանում***

Համաձայն փորձագիտական տվյալների, Ռուսաստանում բնակվում է ավելի քան 3 մլն ադրբեջանցի, որից շուրջ 1 միլիոնը՝ Մոսկվայում:

Ռուսաստանաբնակ ադրբեջանցիների զգալի մասը (հատկապես կարող ուժերը՝ բիզնեսի ներկայացուցիչները, մտավորականությունն ու

երիտասարդությունը) ակտիվորեն ներգրավված է համառուսաստանյան մի շարք կառույցներում: Թեպետ վերջիններս ստեղծվել ու գործում են Ռուսաստանի օրենսդրությանը համապատասխան (գրեթե բոլորի հիմնադիր փաստաթղթերում այսպիսի կետ կա. «Աջակցել ժողովուրդների միջև խաղաղության, բարեկամության, վստահության և փոխըմբռնման ամրապնդմանը, ազգային, կրոնական և միջազգային կազմակերպությունների համախմբմանը»), սակայն դրանց գործունեության հիմնական ուղղվածությունը, որն ուղղորդվում է պաշտոնական Բաքվի կողմից, հակահայկականությունն է և ԼՂՀ-ի շուրջ պատերազմի արդյունքների ռևանշիստական վերանայումը:

Ստորև ներկայացնում ենք Ռուսաստանում աղբրեջանական որոշ ցանցային կառույցների բնութագրերը:

***Համառուսաստանյան աղբրեջանական կոնգրես -  
Всероссийский азербайджанский конгресс (BAK)***

Ստեղծվել է 2001թ. մարտին և այսօր ընդգրկում է աղբրեջանական 70 հասարակական կազմակերպություն, որոնք գործում են ՌԴ 68 սուբյեկտներում: Նախագահն է Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, մանկական օնկոլոգիայի ու հեմատոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ՌԴ պետական մրցանակի դափնեկիր Մ.Ալիևը:

*BAK-ը* աղբրեջանական սփյուռքի ամենահեղինակավոր և ծանրակշիռ կազմակերպությունն է, որտեղ մեկտեղված են առավել կարող անձինք: Կոնգրեսի բարձրագույն ղեկավար մարմինը 158 հոգուց բաղկացած Կենտրոնական խորհուրդն է, որի կազմում կան նաև ոչ աղբրեջանացիներ: Մասնավորապես, Ռուս-աղբրեջանական բարեկամության ընկերության նախագահ Ն.Բայբակովը և նրա տեղակալ Ա.Ռոմաշինը, ԻՏԱՌ-SUՍՍ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Մ.Գուսմանը (նաև *BAK*-ի փոխնախագահներից է) և նրա եղբայր, կինոռեժիսոր Յու. Գուսմանը, ՌԴ Փաստաբանների գիլդիայի փոխնախագահ Վ.Իգոնինը (նաև *BAK-ի* փոխնախագահներից է և իրականացնում է կազմակերպության իրավական աջակցությունը), բիզնեսմեն Վ.Կոլեսնիկովը:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կոնգրեսում լայնորեն ընդգրկված են աղբրեջանական բիզնեսի ներկայացու-

ցիչները: Կենտրոնական խորհրդում նրանք 67-ն են, իսկ նախագահությունում՝ 34-ից 12-ը:

Նախագահից բացի, նախագահությունն ունի մեկ առաջին փոխնախագահ և փոխնախագահներ: Առաջին փոխնախագահն է «ԼՈՒԿՕՅԼ» նավթային ընկերության նախագահ Վ.Ալեքսանդրովը, որի ունեցվածքը, ըստ «Ֆորբս» հանդեսի, 2009թ. սկզբին կազմել է \$7,8 մլրդ: Փոխնախագահներից է ԱՀ նախագահ Ի.Ալիևի խնամին՝ «Կրոկուս ինթերնեյշնլը» ընկերության նախագահ, միլիոնատեր Ա.Ադալարովը: Փոխնախագահ է նաև *ACT* ընկերության նախագահ, Չերկիզովոյի շուկայի սեփականատեր, Ռուսաստանում խոշոր մաքսանենգի համբավ ունեցող Թ.Իսմայիլովը, որը ս.թ. հունիսի սկզբին թուրքական Անթալիա ծովափնյա քաղաքում \$1 մլրդ 300 մլն ներդրում կատարելով բացել է Եվրոպայի ամենաթանկ հյուրանոցը՝ «Մարդան փելեալ»:

Այս մարդիկ հարցազրույցներում չեն թաքցնում, որ կոնգրեսը և մյուս աղբբեջանական կառույցները գործում են իրենց շոայլ ֆինանսական օժանդակության շնորհիվ:

*BAK-ի* աջակցությամբ Մոսկվայում գործում է Ռ.Իբրահիմբեկովի «ԻԲՌՈՒԲՍ» թատրոնը, որը ռուսերեն և աղբբեջաներեն լեզուներով ներկայացնում է բեմադրություններ:

2006-ից կոնգրեսը հրատարակում է «*Ազերբայձյանսկիյ կոնգրես*» թերթը, որը զգալի տեղ է հատկացնում Բաքվի պաշտոնական դիրքորոշումներին, այդ թվում և անշուշտ՝ հակահայկականությանը:

***Ռուսաստանի աղբբեջանցիների դաշնային ազգային-մշակութային ինքնավարություն - Федеральная национально-культурная автономия азербайджанцев России (ФНКА АЗЕРРОС)***

Ստեղծվել է 1999թ. հոկտեմբերին: Հիմնադիրներն են Մոսկվայի, Տվերի, Յարոսլավլի, Կոստրոմայի, Սանկտ Պետերբուրգի, Կոմի Հանրապետության ազգային-մշակութային կազմակերպությունները: Կազմակերպության նախագահն է Ս.Սադիկովը, որն ունի երեք տեղակալ. ուշագրավ է, որ նախագահը և նրա տեղակալները ծնունդով Կրաստանից են:

Նախագահությունից բացի, կազմակերպությունն ունի 45 հոգուց բաղկացած դաշնային խորհուրդ (նախագահ՝ Ի.Ահմեդով): Թեպետ դեկավար կազմում կան մտավորականության ներկայացուցիչներ, այդու-

հանդերձ, գերակշիռ մասը՝ 23 հոգի, զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, այսինքն՝ ֆինանսավորման խնդիրը հիմնավորապես լուծված է:

*ՓՈՒԿԱ ԱՅԵՐՐՕՍ*-ը ունի լուրջ տեղեկատվական ռեսուրսներ. նրա հովանու ներքո գործում է «*Медиа-холдинг*» ԲԲԸ-ն, որը հրատարակում է «*Ազերրոս*» և «*Я – гражданин*» թերթերը, «*Вестник XXI века*» ամսագիրը և սպասարկում է «*Ազերրոս*» տեղեկատվական-վերլուծական ինտերնետ պորտալը:

Չնայած կազմակերպության կանոնադրության 1.4 կետում ասված է, որ «*ՓՈՒԿԱ ԱՅԵՐՐՕՍ*»-ը մերժում է բռնության ցանկացած կիրառում ու քարոզչություն, ազգային, ռասայական ու կրոնական գծողության բորբոքում», սակայն վերոհիշյալ տեղեկատվական միջոցները լի են հակահայ նյութերով:

***Ադրբեջանական երիտասարդության համակարգող խորհուրդ -  
Координационный совет азербайджанской молодежи (КСАМ)***

Այս կազմակերպության ոչ մի հիմնադիր փաստաթուղթ չի հաջողվել հայթայթել, սակայն *КСАМ*-ը Մոսկվայում աչքի է ընկնում ակնհայտ ծայրահեղականությամբ, անսքող հակահայ ագրեսիվությամբ և խուլիգանական սադրանքներով:

Ուշագրավ է կազմակերպության առաջնորդ, 41-ամյա Սիյավուշ Մամեդովի կերպարը: Սա պաշտոնապես «*Mars Travel*» զբոսաշրջային ընկերության ֆինանսական տնօրենն է, սակայն գործունեության հիմնական ոլորտը ՀՀ, ԼՂՀ և Հայության դեմ ակտիվ պայքար մղելն է: Մասնավորապես, Հայության հիմնախնդիրներով զբաղվող «*R-club*» միջազգային վերլուծական ցանցի<sup>1</sup> մոսկովյան բյուրոյի տնօրենն է:

2006թ. մայիսի 13-ին Ս.Մամեդովը և նրա կամակատարները սադրանքային բնույթի պաստառներով ու բացականչություններով փորձել են խանգարել Մոսկվայի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԼՂՀ տուրիզմին նվիրված հանդիսությունը:

<sup>1</sup> Այս ցանցն ընդգրկում է Բաքվի, Թբիլիսիի, Բուդապեշտի, Թեյ Ավիլի, Հաագայի ու Մոսկվայի մասնաճյուղերը, ունի 1128 (ըստ ներկայացված տվյալների) փորձագետ և գործում է Ադրբեջանի ԳԱՍ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի ուղղորդմամբ:

2006թ. դեկտեմբերի 4-ին Մոսկվայի Երաժշտության տանը կայացած «Արցախի ձայներ» խմբի համերգը տապալելու փորձի համար Ս.Մամեդովը, Ռ.Ադանը և Օ.Շարիֆովը ձերբակալվել են, դատարանի կողմից մեղավոր ճանաչվել և պատասխանատվության ենթարկվել ՌԴ վարչական օրենսդրությունը խախտելու համար:

2007թ. մայիսի 1-ին, Ս.Մամեդովի հրահրմամբ, Մոսկվայի Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանի (ՔՄԸԽ) տարածքում տեղի է ունեցել աղբբեջանցի ու հայ երիտասարդների խոշոր ծեծկռտուք, որին երկու կողմից մասնակցել է շուրջ 100 հոգի: Արդյունքում՝ աղբբեջանցիներից մեկը հայտնվել է հիվանդանոցում, բայց ԱԵՀԽ-ի նախագահն այս իրադարձությունն օգտագործել է հակահայ նոր հիստերիա սանձազերծելու համար:

***Ռուսաստանի աղբբեջանական երիտասարդական կազմակերպություն - Ազերբայճանական մոլոդեճնայ օրգանիզացիա Րոսսի (ԱՄՕՐ)***

Կազմակերպությունը հիմնվել է 2009թ. ապրիլի 18-ին: Ղեկավարն է ԱՀ նախագահ Ի.Ալիևի ավագ դուստր Լեյլան: Վերջինս 2006թ. ամուսնացել է ՀԱԿ փոխնախագահ Ա.Ադալարովի որդի Էմինի հետ, ունի 2 երեխա, մշտապես ապրում է Մոսկվայում, ուսանում է *ՄԴԻՄՕ-ի* մագիստրատուրայում, նույն բուհի աղբբեջանական երիտասարդական ակումբի նախագահն է: Իր պապ Հեյդար Ալիևի հիմնադրամի ռուսաստանյան ներկայացուցչության ղեկավարն է, միաժամանակ «*Բաքու*» ամսագրի գլխավոր խմբագիրը:

*ԱՄՕՐ-ի* հիմնադիր ժողովում Լ.Ալիևան հայտարարել է. «Դժբախտաբար, մեր երկրի առջև դեռևս ծառացած են չլուծված հիմնախնդիրներ: Եվ դրանցից ամենամեծը հայ-աղբբեջանական, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է, ինչի արդյունքում մեր տարածքի 20 տոկոսը բռնազավթված է: Երկրում կան մեկ միլիոն փախստականներ ու տեղահանվածներ: Աղբբեջանի ղեկավարությունը և մեր ժողովուրդը քանիցս ընդգծել են, որ հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակիցներ են՝ միջազգային իրավունքի հիման վրա և Աղբբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում:

Ըստ փաստաթղթերի, ՌԱԵԿ-ը մասնաճյուղեր ունի Ռուսաստանի 71 սուբյեկտներում:



#### **5.4 Աղբբեջանի որոշ հետազոտական կենտրոնների գործունեությունը**

Աղբբեջանական հետազոտական կամ այսպես կոչված «ուղեղային կենտրոնները» (ՈւԿ) գործում են հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ակադեմիական հաստատությունների ձևաչափով: Կենտրոնները կատարում են վերլուծություններ երկու հիմնական ուղղություններով՝ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական: Հատկապես կարևորվում են Աղբբեջանի զարգացմանը միտված ուսումնասիրությունները, ինչպես նաև վերլուծությունները տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ: Մեծ ուշադրություն է հատկացվում ՀՀ-ին և ԼՂՀ-ին առնչվող խնդիրներին: ՈւԿ-ները պարբերաբար, հաճախ՝ միջազգային հայտնի կազմակերպությունների հետ համատեղ, կազմակերպում են ամենատարբեր թեմաներով կոնֆերանսներ, սեմինարներ:

Տիպաբանական առումով Աղբբեջանում գործող ՈւԿ-ները կարելի է ներառել երկու հիմնական խմբի մեջ.

- ՈւԿ-ներ, որոնք ստեղծվել և հովանավորվում են պետության կողմից
- ՈւԿ-ներ, որոնք ֆինանսավորվում են միջազգային կառույցների և հիմնադրամների կողմից:

Աղբբեջանի վերլուծական կենտրոնները համագործակցում են բազմաթիվ օտարերկրյա կազմակերպությունների հետ (ՄԱԿ, Եվրախորհուրդ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, Համաշխարհային բանկ, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Համաշխարհային առևտրային կազմակերպություն, *UNESCO*, Եվրասիա հիմնադրամ, Քարնեգիի հիմնադրամ (Նյու Յորք), Մարշալի հիմնադրամ (Գերմանիա), Ջորջ Մորոսի հիմնադրամ, *UNDP*, *USAID*, *Oxfam* և այլն:

Արևմտյան կառույցների ու հիմնադրամների կողմից ֆինանսավորվող կենտրոնների հիմնական նպատակն է աջակցել.

- Աղբբեջանում քաղաքացիական հասարակության ստեղծմանը,
- Ժողովրդավարացման գործընթացներին,

- սոցիալ-քաղաքական ազատական բարեփոխումների իրականացմանը,
- մարդու իրավունքների և գենդերային հավասարության պաշտպանությանը:

Պետության կողմից հովանավորվող կառույցները կարելի է դասակարգել երկու խմբի՝ ակադեմիական և ոչ ակադեմիական: Վերջինիս տիպիկ օրինակ է ԱՀ նախագահին կից ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որը մեծ ֆինանսական ներդրումներ է ստանում պետության կողմից:

Հատկանշական է, որ Աղբբեջանում կան կովկասյան տարածաշրջանում գործող ցանցային կառույցներ, որոնք գրասենյակներ ունեն նաև Հայաստանում և Վրաստանում, ինչպես, օրինակ, Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնը (*CRRC*): Նշենք, որ Արևմուտքի կողմից հովանավորվող հայաստանյան և աղբբեջանական վերլուծական կենտրոնների տրամաբանությունը, ֆինանսավորումը և թիրախային նպատակներն ընդհանուր առմամբ համընկնում են: Աղբբեջանում գործում են գրեթե նույն դրամաշնորհային ծրագրերը, ինչ Հայաստանում և հետխորհրդային այլ երկրներում:

Ստորև ներկայացնում ենք տեղեկատվություն աղբբեջանական մի քանի առաջատար վերլուծական կենտրոնների մասին:

***ԱՀ նախագահին կից ռազմավարական  
հետազոտությունների կենտրոն***

Կենտրոնը թեև ընդամենը 2 տարվա պատմություն ունի (հիմնադրվել է 2007թ. նոյեմբերին, Իլհամ Ալիևի հրամանով), սակայն արդեն աչքի է ընկել ակտիվ գործունեությամբ: Հիմնադիր փաստաթղթում նշվում է, որ կենտրոնի ստեղծումը պայմանավորված է Աղբբեջանի կառավարչական համակարգի կատարելագործմանը միտված վերլուծությունների, հասարակական-քաղաքական վերլուծությունների պատրաստման անհրաժեշտությամբ: Ըստ վերոնշյալ փաստաթղթի՝ կենտրոնի աշխատակիցների թիվը հասնում է 30-ի: Ղեկավարն է

Էլիան Նուրիևը<sup>1</sup>, որը երկար տարիներ աշխատել է Եվրոպայի և ԱՄՆ հետազոտական-վերլուծական կենտրոններում: Նուրիևը տիրապետում է դինամիկ հետազոտությունների իրագործման և այդ հետազոտությունների արդյունքները գործնականում ներդնելու մեթոդաբանությանը: Կենտրոնն աշխատում է մի քանի հիմնական ուղղություններով: Դրանցից է, օրինակ, տեղական, տարածաշրջանային և միջազգային քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը: Այդ հետազոտությունների արդյունքում կազմվում են ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող քաղաքական ծրագրեր: Կենտրոնի գործառույթների մեջ է մտնում նաև իշխանության մարմինների և այլ հետազոտական ինստիտուտների գործունեության համակարգումը:

Կենտրոնի գործունեության կարևոր մասն է կազմում միջազգային հանրությանը ԼՂՀ-ի վերաբերյալ «ճշմարիտ» տեղեկատվություն տրամադրելը: Այս համատեքստում կարևորվում է հայագիտության կենտրոնի ստեղծումը: Ինչպես հարցազրույցներից մեկում հայտարարել է Նուրիևը, կենտրոնում աշխատում են հայերենին տիրապետող, հայերի պատմությանը, հոգեբանությանը, մտածելակերպի նրբություններին քաջատեղյակ մասնագետներ: Կենտրոնն իրագործում է հայկական գրքերի, ՁԼՄ-ի, Հայաստանի և Սփյուռքի հասարակական-քաղաքական գործիչների ելույթների մոնիթորինգ: Նախատեսվում է նաև «Հայկական հարցի» տարբեր ասպեկտների վերաբերյալ մենագրությունների հրատարակում, ինչպես նաև «Հայկական հարցի», այդ թվում նաև «Ղարաբաղյան հակամարտության լուծման հայեցակարգի» մշակում:

Կարճատև գոյության ընթացքում կենտրոնը հասցրել է կազմակերպել մի քանի միջազգային կոնֆերանս Մոսկվայում, Բաքվում, Լոնդոնում, Բեռլինում և այլուր:

Կենտրոնի կարգախոսն է. «Մեր խնդիրը Ադրբեջանի ազգային անվտանգության ապահովումն է»:

<sup>1</sup> *Էլիան Նուրիև* - քաղաքագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի (այժմ, Լեզոնների պետական համալսարան) անգլերեն և ֆրանսերեն լեզուների ֆակուլտետը: Այնուհետև սովորել է Պակիստանի Արտաքին գործերի Դիվանագիտական ակադեմիայում և Գերմանիայի Գյոթեի անվան համալսարանում: Աշխատել է Ադրբեջանի ԱԳՆ-ում, ԱՄՆ Ջ.Վաշինգտոնի անվան համալսարանում, Գերմանիայի Խաղաղության և հակամարտությունների ինստիտուտում: 2001-2004թթ. եղել է Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման «Համագործակցություն հանուն խաղաղության» կոնսորցիումին կից գործող փորձագիտական խմբի համանախագահ:

**«Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնը»  
(Center for Economic & Social Development (CESD))**

Հիմնադրվել է 2005թ. հունվարի 1-ին: Կենտրոնի ղեկավարն է Վուգար Բայրամովը<sup>1</sup>: Կենտրոնը ստեղծվել է ժամանակակից Ադրբեջանի տնտեսական, սոցիալական, էներգետիկ, հաղորդակցային, ֆինանսական ոլորտները հետազոտելու նպատակով, աջակցում է սոցիալ-տնտեսական ոլորտներում գործնական նախագծերի իրականացմանը: *CESD*-ն մշակել է Ադրբեջանում աղքատության վերացման, սոցիալ-տնտեսական ռեֆորմների, նավթային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և նշված ոլորտներում այլ խնդիրների վերաբերող ծրագրեր ու առաջարկներ: Այն խորհրդատվական տեղեկատվություն է տրամադրում Ադրբեջանի կառավարությանը:

Երկրի առաջատար ՈւԿ-ներից մեկը համարվող կենտրոնը համագործակցում է Ջերման Մարշալի հիմնադրամի, Եվրասիա հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Համաշխարհային առևտրային կազմակերպության, Տնտեսական զարգացման միջազգային ասոցիացիայի և այլ միջազգային կառույցների հետ: *CESD*-ն ընդգրկված է *NIRA*<sup>2</sup>-ի (*National Institute for Reserach Advancement* - Հետազոտությունների առաջխաղացման ազգային ինստիտուտ) ցուցակում և մեկ այլ կենտրոնի՝ Տնտեսական հետազոտությունների կենտրոնի (2006-ից՝ Գիտական հետազոտությունների և տնտեսական ռեֆորմների ինստիտուտ) հետ միասին ընդգրկված է *PASOS*<sup>3</sup>-ի (*The Policy Association for an Open Society* - Բաց հասարակության պաշտպանության հասարակական ասոցիացիա) կազմի մեջ:

<sup>1</sup> Վուգար Բայրամով - տնտեսական գիտությունների թեկնածու, ավարտել է Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանը, ուսումը շարունակել ԱՄՆ-ում: Աշխատել է Տնտեսական հետազոտությունների կենտրոնում, Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանում, «Azadliq» թերթում:

<sup>2</sup> *NIRA*-ն ճապոնական անկախ հետազոտական ինստիտուտ՝ «ուղեղային կենտրոն» է: Հիմնադրվել է 1974թ. Տոկիոյում: Նպատակն է համակարգել անկախ հետազոտությունները՝ նպաստելով տարբեր հիմնախնդիրների լուծմանը: Այդ հիմնախնդիրները ներառում են հարցերի բավական լայն շրջանակ՝ սկսած ներքին և արտաքին քաղաքականությունից, տնտեսությունից, մինչև հասարակությանը և կառավարման համակարգին առնչվող զանազան խնդիրներ:

<sup>3</sup> *PASOS*-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2004թ. հունիսի 18-ին Մոլդովայում: Այս կառույցը պետք է նպաստի բաց հասարակության այնպիսի արժեքների պահպանմանը, ինչպիսիք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Այն նախատեսում է տնտեսական և հասարակական աջակցություն այնպիսի օբյեկտներին, որոնք ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համատեղ կնպաստեն հասարակական քաղաքականության մեջ հասարակության ներգրավվածությանը:

2009թ. առաջին կիսամյակում *CESD*-ն կազմակերպել է 12 սեմինար Ադրբեջանի տարբեր շրջաններում և 2 միջազգային կոնֆերանս («Ասիայի և Եվրոպայի երկրներում մեջ. Կենտրոնական Ասիայի հնարավորությունները», Համաշխարհային առևտրի կազմակերպության (*WTO*) հետ համատեղ կոնֆերանս՝ Հոնկոնգում), հրատարակում է զեկույցներ և գրքեր:

«Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնը» ադրբեջանական վերլուծական այլ կենտրոններից տարբերվում է հետևյալով.

- հրատարակում է ռազմավարական զեկույցներ կառավարության քաղաքականության վրա ներազդելու նպատակով,
- ունի ամենամեծ և բազմազան ցանցը տեղական (ներառված են Ադրբեջանի գրեթե բոլոր վերլուծական կենտրոնները և համալսարանները) և միջազգային մակարդակներում:

Կենտրոնը հավակնում է դառնալ դպրոց այն երիտասարդ մասնագետների համար, որոնք կարող են կարևոր դերակատարում ունենալ քաղաքական համակարգի զարգացման գործում:

Այն նաև ակտիվ աշխատում է կամավորների հետ: Այժմ 8 կամավորներ ընդգրկված են կենտրոնի ընթացիկ աշխատանքներում, և նրանց թիվն աճելու միտում ունի:

### ***Խաղաղության և դեմոկրատիայի ինստիտուտ*** ***(Institute of Peace and Democracy - IPD)***

Այս ՈւԿ-ի ստեղծման նախաձեռնողը Լեյլա Յունուսովան<sup>1</sup> է: *IPD*-ն հիմնադրվել է 1995թ.՝ որպես Ադրբեջանի կանանց միության՝ Հանուն Անդրկովկասում խաղաղության և դեմոկրատիայի հումանիտար նախագիծ: Այդ միությունը գործում է 1994-ից՝ որպես Կանանց անդրկովկասյան երկխոսության Ադրբեջանի մասնաճյուղ:

Ինստիտուտի գործունեությունն ընդգրկում է հարցերի բավական լայն շրջանակ: Այն զբաղվում է Ադրբեջանի զարգացման ուղիների, տարածաշրջանում խաղաղության պահպանման մեխանիզմների որոնմամբ, մարդու իրավունքների պաշտպանությամբ, շուկայական տնտե-

<sup>1</sup>Լեյլա Յունուսովա - պատմական գիտությունների դոկտոր, Խորհրդային Ադրբեջանում (1988թ.) մարդու իրավունքները պաշտպանող առաջին հասարակական կազմակերպության հիմնադիր, Ան-կախ դեմոկրատական կուսակցության ղեկավար (1991-1996թթ.):

սության բարելավման խնդիրներով, ինչպես նաև իրականացնում է կրթական գործունեություն:

*IPD-ն ունի հետևյալ բաժինները.*

- Մարդու իրավունքների պաշտպանություն
- Պետություն և հասարակություն
- Կոնֆլիկտոլոգիա և միգրացիա
- Կանանց հիմնախնդիրներ
- Երիտասարդների հիմնախնդիրներ

Ինստիտուտը կազմակերպում է կոնֆերանսներ («Կանայք առանց պատերազմի կյանքի կողմնակից», «Երիտասարդությունը և հակամարտությունների խաղաղ կարգավորումը», «Իսլամը ժամանակակից Ադրբեջանում», «Եվրախորհուրդը և էթնիկ փոքրամասնությունների իրավունքները»), դասընթացներ («Կին քաղաքական գործիչները և հասարակական-քաղաքական կյանքը», «Ղարաբաղյան հակամարտությունը և դրա ազդեցությունն Ադրբեջանում բնակվող ազգային փոքրամասնությունների կենսապայմանների վրա»):

Վերոնշյալ և այլ ՈւԿ-ների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է *Աղյուսակ 1*-ում:

Աղբբեջանի վերլուծական կենտրոնները

Աղբբասի 1

Անվանումը (ստեղծման տարեթիվը) Կայքը	Ղեկավարը (աշխատակազմը)	Նպատակներն ու ինդիկատորները	Հրատարակումները	Գործընկերներ և դրույթներ
<p><b>1. ԱՀ նախագահին կից ռազմավարական հետազոտությունների կենտրոն (2007թ.)</b></p>	<p>Էլիան Նուրիև (30 աշխատակից)</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կառավարման բարելավման ուղղված վերլուծությունների պատրաստում,</li> <li>հասարակական-քաղաքական գործընթացների վերլուծություն, հայագիտական կենտրոնի ստեղծում</li> </ul>	<p>1. «Azerbaijan Focus» 2. «Պարլամենտական ընտրություններն Աղբբեջանում. ազդեցության գործոններ» 3. «Աղբբեջանի արտաքին քաղաքականությունը. ազգային անվտանգության հիմնախնդիրներ»</p>	<p>1. Բրիտանական հասարակական LINKS կազմակերպություն 2. Ռազմավարական հետազոտությունների վիճակագրի ինստիտուտ 3. «Հարավային Կովկասը ճանկի արժանին» հավանադատություններ, կապական նախը և մեծ տեղությունների քաղաքականություն»</p>
<p><b>2. Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն (2005թ.)</b></p> <p><a href="http://www.cesed.az">www.cesed.az</a> (անգլ., արբբ.)</p>	<p>Կուզար Բալբանով (22 աշխատակից)</p>	<ul style="list-style-type: none"> <li>Աղբբեջանի տնտեսական, էներգետիկ, կրմունկիացում, ֆրանսալիան ոլորտներ, ուսումնասիրություն և վերլուծություն</li> <li>Աղբբեջանի կառավարությանը խոդորդատվական տեղեկատվության տրամադրում</li> </ul>	<p>1. «Աղբբեջանի Հանրապետության նախկին պետական ֆոնդի ռազմավարություն»</p>	<p>1. Ջերման Մարշալի հիմնադրամ 2. Եվրամիա հիմնադրամ 3. Համաշխարհային բանկ 4. Համաշխարհային առևտրային կազմակերպություն</p>
<p><b>3. Խաղաղության և դեմոկրատիայի ինստիտուտ (1995թ.)</b></p> <p><a href="http://www.ipd-co.hypemart.net">www.ipd-co.hypemart.net</a> (անգլ., արբբ.)</p>	<p>Լեւլա Յունուտովա</p>	<ul style="list-style-type: none"> <li>Խաղաղության պահպանման ճանապարհների որոնում</li> <li>մարդու իրավունքների պաշտպանում</li> <li>աջակցություն կանանց և երիտասարդներին</li> <li>շուկայական տնտեսության զարգացում</li> </ul>	<p>1. Հետպատերազմյան զարգացումների դարարեցում» 2. «Աղբբեջան. ապագայի կանխատեսումներ» 3. «Ինչպե՞ս կարող է կինը պաշտպանել իր իրավունքները»</p>	<p>1. Խաղաղության ազգային հիմնադրամ (ԱՄՆ) 2. Աղբբեջանի արդարադատության նախարարություն</p>

*Աղբբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը*

Ավանույնը (տեղեխան տարեթիվը) Կայքը	Ղեկավարը (աշխատակազմը)	Նպատակներն ու խնդիրները	Հաստատված թյունները	Գործընկերներ և դուներներ
<p><b>4. Կովկասի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ (1999թ.)</b></p> <p><b>Կայքը</b></p>	<p>Էդգար Բանայիրով (11 աշխատակից)</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կովկասում, այդ թվում Ադրբեջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական, սոցիալ-վշակուսական, էթնիկ ինտեգրման և դրանց հարակից այլ երևույթների ու գործընթացների ուսումնասիրություն</li> </ul>	<p>Կառույցը Շվեդիայում հրատարակում է 1«Կենտրոնական Ասիա և Կովկաս» 2. «Կենտրոնական Եվրասիա» 3. «Կովկասը և գլոբալիզացիան»</p>	<ol style="list-style-type: none"> <li>Կենտրոնական Ասիայի և Կովկասյան հետազոտությունների ինստիտուտ (Շվեդիա)</li> <li>Ջուն Հոփքինսի համալսարան (ԱՄՆ)</li> <li>Վրաստանի ռազմավարագոտությունների ինստիտուտ</li> <li>Ադրբեջանի ԳԱԱ</li> </ol>
<p><b>5. Տնտեսական հետազոտությունների կենտրոն (2006-ից Գիտական հետազոտությունների և տնտեսական ռեֆորմների ինստիտուտ) (1999թ.)</b></p> <p><a href="http://www.erc-az.org">www.erc-az.org</a> (անգլ., արբ.)</p>	<p>Ղուբադ Բբաթովու Բայրամով (23 աշխատակից)</p>	<ul style="list-style-type: none"> <li>տնտեսական ռեֆորմների ծրագրերի նախապատրաստում</li> <li>քաղաքական խորհրդատվության տրամադրում Ադրբեջանի կառավարությանը</li> <li>Երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական իրադարձությունների վերլուծություն</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li>«Expert» ամսագիր (<a href="http://www.eksport.az">www.eksport.az</a>)</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>CHF (ԱՄՆ)</li> <li>OSI Բաց հասարակության ինստիտուտ (Ադրբեջան)</li> <li>Եվրասիական ինստիտուտ</li> </ol>
<p><b>6. Տնտեսական և քաղաքական հետազոտությունների կենտրոն (1994թ.)</b></p> <p><a href="http://www.farcenter.az">www.farcenter.az</a> (անգլ., արբ.)</p>	<p>Սաբիթ Բագիրով (7 աշխատակից)</p>	<ul style="list-style-type: none"> <li>Երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակի վերլուծություն</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li>«Ադրբեջանի նավթը. եկամուտները, ծախսերը և ռիսկերը» 2. «Հասարակական քաղաքական ինստիտուտներ. համաշխարհային փորձը և գաղափարները» 3. «Ադրբեջան. ազգային գաղափարախոսության որոնումներ»</li> </ol>	<p>Կենտրոն «Ազատ տնտեսական համացանցի» անդամ է:</p>



Գրուխ 5. Աղբբեջանի տեղեկատվական ռեսուրսները

Անվանումը (ստեղծման տարեթիվը) Կայքը	Ղեկավարը (աշխատակազմը)	Նպատակներն ու խնդիրները	Հրատարակում- թյունները	Գործընկերները և դունորսները
<p><b>7. Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոն (2003թ.)</b></p> <p><a href="http://www.ciftc.az">www.ciftc.az</a> (անգլ., արբ.)</p>	<p>Անար Ահմադով</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կենտրոնը ռեսուրսային և թրեյնինգ կենտրոնների ցանց է, նպատակ ունի Հարավային Կովկասում, այդ թվում՝ Ադրբեջանում, գարի տալ քաղաքագիտական և սոցիալական հետազոտությունների կրահանագնանը</li> <li>• հետազոտողներին գիտական և տեղեկատվական ռեսուրսներով տրամադրում</li> <li>• սոցիալական ոլորտի հետազոտողների և գործող քաղաքական գործիչների հետ համագործակցության հաստատում</li> <li>• հետազոտական դրամաշնորհների սրբանաբում</li> </ul>	<p>Հրատարակում է E-bulletin, բրոշյուրներ, հետազոտական նախագծեր</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Քարինեգլիի կորպորացիա</li> <li>2. Համաշխարհային բանկ</li> <li>3. ՄԱԿ</li> <li>4. Բաց հասարակության ինստիտուտ</li> <li>5. Irex – Ադրբեջան</li> <li>6. Ադրբեջանի էրիտասարդ տնտեսագետների սասցիացիա</li> <li>7. Խազգրի համալսարան</li> <li>8. Բաբիլի պետական համալսարան</li> </ol>
<p><b>8. Հանրային ֆինանսների մոնիթորինգի կենտրոն (2003թ.)</b></p> <p><a href="http://www.pfncaz">www.pfncaz</a> (անգլ.)</p>		<ul style="list-style-type: none"> <li>• հանրային ֆինանսների սրբանաբում կառավարման և դրա ռացիոնալացման հետազոտությունների ձեռքբերում</li> <li>• հասարակության առավել ակտիվ մասնակցություն հանրային ֆինանսների սրբանաբում ծայխման գործում</li> <li>• հանրային ֆինանսների առավել թափանցիկ և սրբանաբում օգտագործման ձեռքբերում ի բարձրություն ժողովրդի</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li>1. «Ֆինանսական տերմինների բառարան»</li> <li>2. Թեթթ «Money»</li> <li>3. «Ադրբեջանի նավթային պայմանագրերը»</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. PWTYP (Puhlish What You Pay)</li> <li>2. IBP - Միջազգային բյուջետային նախագիծ</li> <li>3. ICGI - Տեղի կառավարության և ռեֆորմների նախաձեռնություն հասարակական ծառայություն</li> <li>4. PPRC - Հասարակական քաղաքականության հետազոտական կենտրոն</li> </ol>

<p><b>Անվանումը</b> (ստեղծման տարեթիվը) <b>Կայքը</b> <b>9. Աղբբեօանի հեռանկարային հետազոտությունների միություն (2006թ.)</b> <a href="http://www.futurestudies.az">www.futurestudies.az</a> (անգլ., աղբբ.)</p>	<p><b>Ղեկավարը</b> (աշխատակազմը) Ռեյհան Հուսեյնովա (9 աշխատակից)</p>	<p><b>Նպատակներն ու խնդիրները</b></p> <ul style="list-style-type: none"> <li>ներկա ուղղությունների վերլուծություն, նորերի կանխատեսում</li> <li>Աղբբեօանի, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանի զարգացման ուղղությունների սշակում հեռանկարային ուսումնասիրությունների միջազգային մոդելների կիրառման ճանապարհով</li> </ul>	<p><b>Հրատարակությունները</b> Կենտրոնի փորձագետները հրատարակում են հետազոտություններ, գրքեր</p>	<p><b>Գործընկերներ և բաներներ</b> 1. Հեռանկարային հետազոտությունների համաշխարհային կազմակերպություն 2. Աղբբեօանի կապի և ինֆորմացիան տեխնոլոգիաների նախարարություն</p>
<p><b>10. Հումանիտար հետազոտությունների միություն (1997թ.)</b> <a href="http://www.humanrights-az.org">www.humanrights-az.org</a> (անգլ., աղբբ.)</p>	<p>Ավագ Հասանով</p>	<ul style="list-style-type: none"> <li>Մացիական գործունեություն ծավալել ցանկացողներին համապատասխան ինֆորմացիայի տրամադրում</li> <li>անհատների մասնակցության ապահովում քաղաքացիական հասարակության ձևավորման, ինչպես նաև մարդու իրավունքների, միգրացիայի հետ կապված գործընթացներին</li> </ul>	<p>1. «Ռուսաստանի նոր միգրացիոն քաղաքականությունը» 2. «Աղբբեօանի հասարակական կազմակերպությունների տեղեկագիր» 3. Մարդու իրավունքներն Աղբբեօանում» 4. «ԵՆՎԵ պետք է տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուները կազմակերպեն իրենց նախընտրական քարոզարշավը» 5. «Նախընտրական քարոզարշավի հարցաթերթ»</p>	<p>1. ԵԱՀԿ 2. Եվրաստրիուրդ 3. Երխտասարդ փաստաբանների միություն (Աղբբեօան)</p>

### **Աղբբեջանի ակադեմիական հաստատությունները**

Այս հաստատությունները հիմնականում զբաղվում են հետազոտական հետևյալ ուղղություններով՝ քաղաքագիտություն, պատմություն, արևելագիտություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, ազգագրություն, հնագիտություն, իրավունք, կրոնագիտություն և տնտեսագիտություն:

Պետք է նշել, որ ակադեմիական ինստիտուտներն անհամեմատ ավելի պակաս հնարավորություններ ունեն, քան ոչ ակադեմիական կազմակերպությունները: Առկա պետական միջոցները բավարար չեն բարձր աշխատավարձերի, կոնֆերանսների և գիտական գործուղումների կազմակերպման, ինտերնետային կայքէջերի գործառման, գրքերի հրատարակման և գիտական մենեջմենթին առնչվող այլ հարցերի իրականացման համար: Այդ տեսանկյունից ակադեմիական գիտությունը ներկայացնող Աղբբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան բարեփոխումների լուրջ խնդիր ունեցող հաստատություն է<sup>1</sup>: Հատկանշական է, որ Աղբբեջանում ակադեմիական գիտության զարգացմանն օժանդակում են արևմտյան կառույցները: Որպես կանոն, Աղբբեջանի ակադեմիական կառույցները համագործակցում են *NATO*-ի, *CORDIS*-ի (*Community Research and Development Information Service*), *IAEA*-ի (*International Atomic Energy Agency*), *NASA*-ի (*National Aeronautics and Space Administration*), *UNESCO*-ի (*United Nations Educational, Scientific and Cultural Organization*), *INTAS*-ի (*International Association for the promotion of cooperation with scientists from the New Independent States of the former Soviet Union*), *ANSF*-ի (*Azerbaijan National Science Foundation*), *ISTC* –ի (*International Science and Technology Center*), *CRDF*-ի (*Civilian Research & Development Foundation*) հետ<sup>2</sup>:

*Աղյուսակ 2-ը* ներկայացնում է համառոտ տեղեկություններ աղբբեջանական ակադեմիական հաստատությունների մասին:

<sup>1</sup> Հատկանշական է, որ գիտության ոլորտն Աղբբեջանում հռչակված է որպես երկրի զարգացման առաջնահերթ ուղղություն: 2008թ. ապրիլին նախագահ Ի.Ալիևի հրամանագրով ստեղծվել է պետական հանձնաժողով գիտության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով, ինչն առաջին հերթին ենթադրում է գիտության ոլորտի սերնդափոխություն: Իսկ 2007թ. ապրիլին նախագահի մեկ այլ հրամանագրով ստեղծվել է աղբբեջանցի երիտասարդների 2007-2015թթ. արտասահմանյան երկրներում կրթություն ստանալու պետական ծրագիր:

<sup>2</sup> Միայն 2007-ին ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամը Աղբբեջանի Գիտության ազգային հիմնադրամին տրամադրել է 2,5 միլիոն դոլար երկրում գիտության զարգացման համար, որի շրջանակներում իրականացվել է շուրջ 57 դրամաշնորհային ծրագիր, որոնցում ներգրավվել է մոտ 214 գիտնական:

Աղբրեջանի ակադեմիական հունանիստար ինստիտուտները

Աղյուսակ 2

Անվանումը (ստեղծման տարեթիվը)	Ինտերնետային կայքը	Հրատարակու- թյունները	Ղեկավարը	Հետազոտվող ուլբրտները
1. Զ. Բունիսթովի անվան Արևելագի- տության ինստի- տուտ (1958թ.)	Եռալեզու <a href="http://www.elm.az/ru/orienta/index.htm">http://www.elm.az/ru/orienta/index.htm</a>	50 մենագր., 400 հոդված	Ջուռհար Բալաշայի Բախշալիևա Բանասիրական գիտությունների ընկադր	Թուրքագիտ. Իրանագիտ. Արաբագիտ. Իսլամագիտ.
2. Ս. Բաքիխանովի անվան Պատմության ինստիտուտ (1940թ.)	Եռալեզու <a href="http://www.science.az/ru/history/index.htm">http://www.science.az/ru/history/index.htm</a>	(1997-2003թթ.) Ընթացքում 50 մենագր.	Յակոբ Միլխայիլ Մահմադով Պատմական գիտությունների ընկադր	Աղբրեջանի պատմություն
3. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Եռալեզու <a href="http://www.elm.az/ru/archaeology/index.htm">http://www.elm.az/ru/archaeology/index.htm</a>	300	Մախա Նուրբալա Ռահիմովա Պատմական գիտությունների թեկնածու	Հնագիտ. Ազգագրութ. Նուսրիզմատիկա Անթրոպոլոգիա Էթնոսոցիոլոգիա Էթնոքաղաքագիտ.
4. Փիլիսոփայու- թյան և քաղաքա- կան իրավունքի հետազոտություննե- րի ինստիտուտ	Եռալեզու Կայքէջը վերանորոգման փուլում է			
5. Սարգսի իրա- վունքների գծով գիտահետազոտա- կան ինստիտուտ	Եռալեզու Կայքէջը վերանորոգման փուլում է			
6. Աղբրեջանի պատմության թանգարան (1920թ.)	Եռալեզու <a href="http://www.elm.az/ru/azhistorymuseum/index.htm">http://www.elm.az/ru/azhistorymuseum/index.htm</a>	116	Նախկա Մամեդալի Վելիխանկի Պատմական գիտությունների ընկադր	Աղբրեջանի հո- գևոր և նյութական մշակույթի նմուշ- ների պահպանում, հավաքում և ցուցադրում

## ՈՐՈՇ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես կարելի է եզրակացնել ներկայացված տվյալներից, աղբբեջանական Բազմավեկտոր հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը զարգանում է անընդհատ հղկման և ճյուղավորման սկզբունքով: Ակնհայտ է, որ այդ ոլորտում ներդրվում են զգալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Կարելի է նաև ամրագրել, որ աղբբեջանական տեղեկատվական համակարգն ավելի համաձայնեցված է սկսել գործել, քանի որ գլխավորապես ղեկավարվում և համակարգվում է միասնական կենտրոնից (ԱՀ նախագահի աշխատակազմ, ղեկավար՝ Ռ.Մեհթիս): Կարևոր դերակատարում ունեն նաև ԱՀ ԱԳՆ-ն և Մփյուռքի պետական կոմիտեն (որոնք համակարգում են արտերկրի աղբբեջանական ՀԿ-ների գործունեությունը) և ԱՀ ԱԱՆ-ն (հաքերային ոլորտ):

Միևնույն ժամանակ, աղբբեջանական ինֆոքաղաքականությունում հստակ նկատվում է ինքնակազմակերպման միտում. մարտավարական մակարդակով համակարգումը տեղի է ունենում տեղերում, ձևավորվում են հորիզոնական կապեր, այսինքն՝ օգտագործվում են ցանցային կազմակերպման տարրերը: Դա թույլ է տալիս աղբբեջանական կողմին տեղեկատվական գործողությունները վարել միաժամանակ մի քանի ճակատներով՝ օգտագործելով անհրաժեշտ պաշտոնյաների, փորձագետների և ՀԿ-ների և այլ կառուցների հնարավորությունները: Կազմակերպական նման մեթոդն ավելի ճկուն է և դինամիկ, այն զգալիորեն մեծացնում է այս կամ այն իրողությանն արձագանքելու արագությունը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ եթե նախկինում տեղեկատվական գործողությունների հիմնական պատասխանատուներն էին ԱՀ նախագահի աշխատակազմը, ԱԳՆ-ն և ԱԱՆ-ը, ապա այսօր տարբեր պետական գերատեսչություններ, ՀԿ-ներ (ներքին դաշտում ու սփյուռքի համայնքներում) ավելի մեծ ինքնուրույնություն են ստացել:

Պետք է ընդունել, որ Աղբբեջանը որոշ «ձեռքբերումներ» է ունեցել՝ ձևավորելով հակահայկական և աղբբեջանամետ դիրքորոշումներ միջազգային իրավական դաշտի մի հատվածում, ստեղծել է համայնքային կառույցների լայն ցանց, իրագործում է լոբբիստական գործունեություն միջ-

ազգային քաղաքական դաշտում և ԶԼՄ-ում: Զուգահեռ ընթանում է երկրի տեղեկատվական տեխնոլոգիական հզորությունների արդիականացում:

Սակայն ամենամտահոգիչն այն է, որ հարևան հանրապետությունում ձևավորվում է մի հանրություն, որտեղ գերակայում է մարդատյացության - հայատյացության մթնոլորտը, որտեղ գիտական-հետազոտական կառույցները «ստեղծում» են հակազիտական տեսություններ, իսկ պետության առաջին դեմքերը շարունակաբար հանդես են գալիս ռազմատենչ հայտարարություններով:

Նման իրավիճակը սպառնալիք է ոչ այնքան հակառակորդի դերում հայտնված կողմի համար, քանի որ համոզված ենք, որ հայկական կողմի տեղեկատվական «ասիմետրիկ» ռազմավարությունը վերջնական վնասագերծելու է ազդեցորին: Անհանդուրժողականությունն առաջին հերթին վտանգ է ներկայացնում նման քաղաքականություն իրագործողի համար, քանի որ խոչընդոտում է տվյալ հասարակության բնականոն զարգացմանը՝ համաձայն մարդկային և իրավական նորմերի: Հայտնի է, որ թշնամանքի տարածումը և բռնության կուլտիվացիան «բուլմերանգի սկզբունքով» անխուսափելիորեն անդրադառնում է նույն հասարակության վրա, ինչի վկայությունն են վերջին շրջանում Ադրբեջանում հաճախակի դարձած միջադեպերը (օրինակ՝ աղմկահարույց սպանությունները Բաքվի պետական նավթային ակադեմիայում<sup>1</sup> և հանցագործության կտրուկ աճը բանակում): Ադրբեջանի արդի իրողություններն արտացոլում են «հակա» հիմքով ձևավորվող և մոբիլիզացվող հասարակության ծանր հետևանքները: Նման հասարակությունը ռեալ սպառնալիք է ոչ միայն տարածաշրջանի, այլև այլ երկրների համար:

Հայտնի է, որ տեղեկատվական պատերազմներն առայժմ չեն կարգավորվում միջազգային օրենքներով: Սակայն ազգայնամոլության, Հայաստանի և Հայության նկատմամբ էթնիկ ատելության ներարկումը, ինչպես նաև պատերազմի մշտական քարոզչությունը հակասում են ՄԱԿ կանոնադրությանը, Եվրոպայի խորհրդի առջև ԱՀ ստանձնած պարտավորություններին ու ԵԱՀԿ Հելսինկյան ակտին: Կարծում ենք, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության հակաքաղաքակրթական ուղղվածությունը պետք է դառնա միջազգային կառույցներում հատուկ քննարկումների առարկա և օբյեկտիվ գնահատական ստանա:

---

<sup>1</sup> <http://www.day.az/news/criminal/155485.html>

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աթանեսյան Ա.*, «Ղարաբաղյան հակամարտության մասնակիցների տեղեկատվական պատերազմի ռազմավարությունները» // Կանթեղ, N 4 (37), 2008:
2. *Դեմոյան Հ.*, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ», «Տարածաշրջան» տեղեկագիր, հատուկ թողարկում, Նորավանք ԳԿՀ, Երևան, 2005:
3. *Հարությունյան Գ.*, «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում», «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003:
4. *Հարությունյան Գ.*, «Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ», Նորավանք ԳԿՀ «Տարածաշրջան» տեղեկագրի հատուկ թողարկում, էջ 3, 2006:
5. *Հարությունյան Գ.*, «Հայտության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ», «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն», # 1, մայիս, 2008:
6. *Հարությունյան Գ.*, Ազգային անվտանգություն և գաղափարախոսություն, «Գլոբուս. Ազգային անվտանգություն», #2, էջ 3, 2009:
7. *Մովսիսյան Ս.*, «Ադրբեջանական ԶԼՄ ազդեցության գործոնները տեղեկատվական պատերազմի համատեքստում», «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն» #2, հունիս, 2008:
8. *Մովսիսյան Ս.*, «ՀՀ տեղեկատվական հակազդեցության հիմնական ուղղությունները», «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն», #4, հոկտեմբեր, 2008:
9. *Նահապետյան Հ.*, «Ադրբեջանական «սփյուռքի քարոզչական ձեռնարկները», «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն», #2, հունիս, 2008:
10. ՌԴ ՏՄ դոկտրին, 2000թ., № ՍՔ-1895, <http://www.scrf.gov.ru/documents/5.html>
11. *Վրթանեսյան Կ.*, «Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը», «Գլոբուս. Ազգային անվտանգություն», # 2(6), ապրիլ, 2009:
12. *Алексеев И Ю. и др.* Под обшей редакцией А.В. Федорова, В.Н. Цыгичко, Информационные вызовы национальной и международной безопасности, М.: ПИР – Центр, 2001.
13. *Арутюнян Г.*, Цивилизационный фактор в контексте проблем информационной безопасности, 21 Век, #1(3) с. 3, 2006.
14. *Арутюнян Г.*, Лики и угрозы информационной войны, Карабахский экспресс, #2 (14) с. 73, 2008.
15. *Атанесян, А.*, Актуальные проблемы изучения и моделирования современных политических и конфликтных коммуникаций. Е.: Изд-во Ереванского государственного университета, 2008.
16. Военная безопасность Российской Федерации, под редакцией генерала полковника Ю.Н. Балувеского, М., 2004.

17. *Гриняев С.*, Интеллектуальное противодействие информационному оружию, М., СИНТЕГ, 1999.
18. *Гриняев С.*, Актуальные проблемы информационного противоборства, М., МАКБ, 2000.
19. *Гриняев С.*, Взгляды военных экспертов США на ведение информационного противоборства. - Зарубежное военное обозрение, № 8, 2001.
20. *Гриняев С.*, «Поле битвы-киберпространство», Минск, Харвест, 2004.
21. *Дрейфус С.* (при участии Джулиана Ассанжа), Компьютерное подполье, Истории о хакинге, безумии и одержимости, Изд-во: У-Фактория, 2005.
22. *Зульцман Р.*, «Пропаганда как оружие в войне», СПб.: Полигон; М.: АСТ, 1998.
23. *Кара –Мурза С.*, Манипуляция сознанием, М., Алгоритм, 2000.
24. *Коган В.Э.*, «Качество информации и мир инфологем (фрагменты теории). - Проблемы информационного взаимодействия», Новосибирск, 1993.
25. *Крутских А., Федоров А.*, "О международной информационной безопасности". В: *Международная жизнь*, N 2, (2000). сс. 37-48.
26. *Лисичкин В.А., Шелепин Л.А.*, «Третья мировая /информационно-психологическая/ война», Москва, 2003.
27. *Маклюэн М.*, Понимание Медиа, М., Гиперборея Кучково Поле, 2007.
28. *Мартиросян С.*, «Выводы из последней атаки на армянские сайты со стороны азербайджанских хакеров», «Գրքու. Տեղեկատվական անվտանգություն», #3, անվտանգություն, 2008:
29. *Мелик–Шахназарян А.*, Нагорный Карабах: факты против лжи, М., Изд-во Волшебный фонарь, 2009.
30. *Панарин И.Н.*, Информационная война и дипломатия, М., ОАО «Издательский дом “Городец”», 2004.
31. *Петренко, А.И.*, «Актуальные вопросы обеспечения информационно-психологической безопасности системы социально-политических отношений современного информационного общества». В: *Россия и Европа: информационное сотрудничество в условиях глобализации / Аналитический вестник Совета Федерации ФС РФ, № 11, 2004 (231).*
32. *Почепцев Г.*, Психологические войны, «Рефл-бук», «Ваклер», 2000.
33. *Почепцев Г.*, Информационные войны, «Рефл-бук», «Ваклер», 2001.
34. *Расторгуев С.П.*, Информационная война. - М: Радио и связь, 1999.
35. *Тер–Арутюнянц Г.*, «Инфогенные вызовы», в сб. «Информационные войны», серия «Мир сегодня», #4, с. 5, Ереван, 2002.
36. *Хозиков В.И.*, «Информационное оружие», Серия «Досье», Санкт-Петербург, Москва, 2003.
37. *Jovet G. S., O'Donnell V.*, «Propaganda and persuasion».-Newbu Park etc., 1992.
38. *Roger C. Molander, Andrew S. Riddile, Peter A. Wilson*, Strategic Information Warfare: A New Face of War, RAND's Home Page, Copyright © 1996 RAND



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	5
<b>ԳԼՈՒԽ 1</b>	
ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	8
1.1 Տեղեկատվական անվտանգություն և տեղեկատվական պատերազմ .....	9
1.2 ՀՀ ՏՄ նպատակները և խնդիրները .....	14
1.3 ՀՀ ՏՄ սպառնալիքները .....	17
<b>ԳԼՈՒԽ 2</b>	
ԱՂԻՔԵԶԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	21
2.1 Աղբրեջանական ինֆորմացիոնային արդի փուլերը .....	22
2.2 Հակահայկական ինֆորմացիոնային սկզբունքները .....	27
2.3 Աղբրեջանական ինֆորմացիոնային համակարգի բաղադրիչները .....	28
2.4 Հակահայկական ինֆորմացիոնային մեթոդաբանությունը .....	44
<b>ԳԼՈՒԽ 3</b>	
«ԹՇՆԱՄԻ ՀԱՅԻ» ԿԵՐՊԱՐԸ ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՄԵՂԻԱՏԱՐԱԾՔՈՒՄ .....	62
3.1 Վիճակագրական տվյալներ .....	64
3.2 ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ .....	66
3.3 Հուզական հիմնադրույթներ .....	76
3.4 Ուղեկից գործոններ .....	77
<b>ԳԼՈՒԽ 4</b>	
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ ԵՎ ՀԱՔԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ .....	82
<b>ԳԼՈՒԽ 5</b>	
ԱՂԻՔԵԶԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ .....	85
5.1 Հեղափոխական ինֆորմացիոնային գործունեությունը տեղեկատվական ոլորտում .....	85
5.2 Աղբրեջանական ներկայության որոշ արտահայտումներն ինտերնետում .....	89
5.3 Աղբրեջանական ՀԿ-ները Ռուսաստանում .....	92
5.4 Աղբրեջանի որոշ հետազոտական կենտրոնների գործունեությունը .....	97
ՈՐՈՇ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	109
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	111

**ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Նորավանք» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1

Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)

Էլ.-փոստ՝ [office@noravank.am](mailto:office@noravank.am)

Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 60X84 1/16:  
Տպաքանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:  
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: